Հարգելի՛ ընթերցող,

**Արցախի Երիտասարդ Գիտնականների և Մասնագետների Միավորման** (ԱԵԳՄՄ) նախագիծ հանդիսացող ***Արցախի Էլեկտրոնային Գրադարանի*** կայքում տեղադրվում են Արցախի վերաբերյալ գիտավերլուծական, ճանաչողական և գեղարվեստական նյութեր՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով: Նյութերը կարող եք ներբեռնել ԱՆՎՃԱՐ:

Էլեկտրոնային գրադարանի նյութերն այլ կայքերում տեղադրելու համար պետք է ստանալ ԱԵԳՄՄ-ի թույլտվությունը և նշել անհրաժեշտ տվյալները:

Շնորհակալություն ենք հայտնում բոլոր հեղինակներին և հրատարակիչներին՝ աշխատանքների էլեկտրոնային տարբերակները կայքում տեղադրելու թույլտվության համար:

Уважаемый читатель!

На сайте ***Электронной библиотеки Арцаха***, являющейся проектом **Объединения Молодых Учёных и Специалистов Арцаха** (ОМУСА), размещаются научно-аналитические, познавательные и художественные материалы об Арцахе на армянском, русском и английском языках. Материалы можете скачать БЕСПЛАТНО.

Для того, чтобы размещать любой материал Электронной библиотеки на другом сайте, вы должны сначала получить разрешение ОМУСА и указать необходимые данные.

Мы благодарим всех авторов и издателей за разрешение размещать электронные версии своих работ на этом сайте.

Dear reader,

**The Union of Young Scientists and Specialists of Artsakh** (UYSSA) presents its project - ***Artsakh E-Library*** website, where you can find and download for FREE scientific and research, cognitive and literary materials on Artsakh in Armenian, Russian and English languages.

If re-using any material from our site you have first to get the UYSSA approval and specify the required data.

We thank all the authors and publishers for giving permission to place the electronic versions of their works on this website.

**Մեր տվյալները – Наши контакты - Our contacts**

| | |
|---|---|
| Site: | http://artsakhlib.am/ |
| E-mail: | info@artsakhlib.am |
| Facebook: | https://www.facebook.com/www.artsakhlib.am/ |
| ВКонтакте: | https://vk.com/artsakhelibrary |
| Twitter: | https://twitter.com/ArtsakhELibrary |


ՍԼԱՎԱ ՍԱՐԳՍՅԱՆ
ԽԱՉԵՆԻ
ամրոցները

ԼՂՀ ՄՇԱԿՈՒՅԹԻ,
ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԻ
ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՍԼԱՎԱ ՍԱՐԳՍՅԱՆ

# ԽԱՉԵՆԻ

## *ամրոցները*

ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏ
2002

ՀՏԴ 941 (479.25)
ԳՄԴ 63.3 (2Հ)
Ս 258

ՏՊԱԳՐՎՈՒՄ Է
ՊԱՏՄԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ
ԱՐՑԱԽԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ
ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՄԱՄԲ

Մասնագիտական խմբագիր՝

ՍՈՒՐԵՆ ՍԱՂՈՒՄՅԱՆ

Աշխատությունը տպագրության է երաշխավորել

ՍՈՒՐԵՆ ԵՐԵՄՅԱՆԸ

Ս 258 Սլավա Սարգսյան.
Խաչենի ամրոցները.- Երեւան. «Նոյյան տապան» 2002թ. 162 էջ:

*Մատենագիտական աղբյուրների, արխիվային վավերագրերի, վիմագիր արձանագրությունների եւ պատմական հուշարձանների ուսումնասիրությամբ ներկայացվում է Պատմական Հայաստանի Արցախ երկրամասի Խաչեն գավառի հիմնական ամրոցների պատմությունը, արցախցիների հերոսական պայքարը օտար նվաճողների դեմ, ի հայտ է բերվում տակավին չուսումնասիրված հուշարձաններ:*

*Գիրքը նախատեսվում է Արցախի պատմությամբ ու մշակույթով հետաքրքրվող մասնագետների, ընթերցող լայն շրջանների համար:*

Ս $\frac{0503020913}{802(01)-2002}$ 2002

ԳՄԴ 63.3 (2Հ)

ISBN 99930-51-40-3

© Ս.Սարգսյան
© Նոյյան տապան

# Առաջաբան

Ամրոցները կառուցել են երկրագործ-նստակյաց ժողովուրդները՝ պաշտպանվելու ընչաքաղց քոչվորների հարձակումներից: Վաչկատունը դրանց կարիքը չի ունեցել: Մի երկրի, որին վիճակված էր տեւականորեն պաշտպանվել ներխուժումներից, ստիպված էր ամեն քայլափոխի ամրոցներ կառուցել, որոնք տեղաբաշխվում էին ոչ միայն սահմանագծերում, այլեւ խորքերում՝ փակելով ու ամրացնելով կենտրոնական ռազմավարական հանգույցները, բնակավայրեր տանող ուղիները:

Հայաստանի Արցախ երկրամասում կան բազմաթիվ ամրոցներ, որոնք գրեթե չեն ուսումնասիրվել, մինչդեռ վաղ եւ միջնադարյան ժամանակներում դրանք կարեւոր դեր են խաղացել Արցախի պատմության մեջ՝ զորավիգ կանգնել հերոսական ժողովրդի ազատությանն ու գոյատեւությանը: Հարյուրամյակներ ի վեր փոխվել են ամրոցների ձեւերը՝ հարմարեցվելով տվյալ ժամանակաշրջանի ռազմավարությանն ու պաշտպանության պահանջներին:

Արցախի Խաչեն գավառը, որ նաեւ Մեծառանք անունն էր կրում, ընդգրկում էր Խաչենագետի միջին եւ վերին ավազանները, Կարկառ գետից մինչեւ Թարթառ, Ղարաբաղյան լեռնաշղթայից մինչեւ արեւելյան նախալեռնային տարածքները: Գավառի վարչական կենտրոնը զբաղեցնում էր ներկայիս Խաչեն եւ Քոլատակ գետերի միջնամասը՝ շրջափակված մի շարք ամրոցներով, որոնց թվում՝ նշանավոր Խաչեն ամրոցը (այժմ՝ Կաչաղակաբերդ), որից էլ անվանակոչվել է գավառը: Այստեղ է գտնվում նաեւ գավառի հնագույն հոգեւոր կենտրոնը՝ Մեծառանից վանքը, որն ավելի ուշ՝ XV դարում հայտնի էր Գետամիջո անվամբ, իսկ գավառը՝ Խաչենաձոր:

XVII դարից հետո, նշված տարածքի մեծ մասը մտնում էր Խաչենի մելիքության կազմի մեջ, որը ձգվում էր նույն Կարկառ գետից մինչեւ Խաչենագետ, Քառասուն կույս եւ Մխիթուկյան լեռներից մինչեւ ներկայիս Աղդամի շրջան՝ ներառյալ Բայաթի անտառը:

Գրքում առաջին անգամ մանրամասն ներկայացվում են Խաչենագետի հովտի (բուն Խաչեն գավառի) հիմնական պաշտպանական կառուցվածքները (Շիկաքար, Կաչաղակաբերդ, Խոխանաբերդ եւ այլն), ինչպես նաեւ՝ Մեծկուէնք գավառի նշանավոր Ջրաբերդ ամրոցը, մեծ տեղ է հատկացվում պատմական հուշարձաններին ու վիմական արձանագրություններին:

# Կարծիք*

## Սլավա Սարգսյանի «Շիկաքար ամրոցն ու շրջակայքի հուշարձանները» աշխատության մասին

Հրատարակության համար ներկայացված աշխատությունը նվիրված է Խաչեն գավառի պաշտպանական կառույցներից մեկի՝ Շիկաքար բերդին եւ նրա շրջակայքի հուշարձաններին: Ֆեոդալական Հայաստանի պետականության վերջին մնացորդների՝ Ղարաբաղի մելիքությունների հուշարձանների ամեն մի ուսումնասիրություն ունի կարեւոր նշանակություն հայ ժողովրդի բազմադարյան պատմությունը ճիշտ հասկանալու համար:

Աշխատության հեղինակը ցույց է տալիս Շիկաքար–Քարագլուխ վայրի եւ նրա շրջապատի հուշարձանները, վեր հանելով նրանց նշանակությունը իբրեւ պաշտպանական կառույցների՝ բազմաթիվ թշնամիների դեմ պայքարելու համար, միեւնույն ժամանակ, սրանք միջնադարյան հայկական մշակույթին բնորոշ պատկերը ներկայացնող կոթողներ են: Հեղինակը մեծ սիրով մեկ առ մեկ ցույց է տալիս ընթերցողին այս ոչ հեռու անցյալի հնությունները, եւ առաջին անգամ է, որ հայագիտական գրականության մեջ ցույց է տրվում Շիկաքարի համալիրը եւ, անշուշտ, արժանի է հրատարակման՝ հետաքրքրվողներին ու լայն ընթերցողներին ցույց տալու համար նրանց գիտական նշանակությունը:

Սակայն, անհրաժեշտ է նորից ստուգել ներկայացվող վիմագիր արձանագրությունները եւ նրանց նկարները բերել հնարավորության սահմաններում:

Այս հետաքրքիր աշխատությունը ես առաջարկում եմ հրատարակել Հայաստանի հայագիտական պարբերականներից մեկում:

ՀՀ ԳԱ Ակադեմիկոս Ս.Երեմյան

* *Ակադեմիկոս Ս.Երեմյանը ժամանակին իր դրական կարծիքն է արտահայտել նաեւ «Կաչաղակաբերդ», «Խոխանաբերդ», «Ջրաբերդ» եւ «Ասկերանի բերդը» ուսումնասիրությունների մասին, որոնք մտել են սույն աշխատության մեջ՝ որոշ վերալրացումներով (խմբ.):*



# Շիկաքար ամրոցն ու շրջակայքի հուշարձանները

Արցախ նահանգի լեռնային տարածքի Մեծառանք (Խաչեն) գավառը հարուստ է բազմաթիվ ու տարատեսակ հուշարձաններով, որոնք այդ երկրամասի ժողովրդի ստեղծագործ մտքի ու երկարամյա գործունեության նյութական վկայագրերն են: Դրանց շարքում ուրույն տեղ է գրավում ցայսօր գիտությանը քիչ հայտնի Շիկաքար[1] ամրոցը, որը գտնվում է Կարկառ եւ Խաչեն գետերի միջեւ, Քարագլուխ լքված գյուղի տարածքում:



Ամրոցը հարավ-արեւելքից

Ամրոցի մասին պատմագիտական աղբյուրները միայն կցկտուր տեղեկություններ են հաղորդում:

Վկայակոչելով Քարագլխի հարավ – արեւմտյան եզրի գերեզմանատան մի արձանագրությունը, Մ. Բարխուտարյանցը տալիս է ամրոցի հիմնադրման եւ պատկանելության հետ կապված որոշ մանրամասներ: Նա գրում է. «Բերդս շատ հին է եւ, ինչպես կարծում ենք, շինուած է հայոց թագավորներից եւ յետոյ ենթարկուած Աղուանից

1 Ստ.Մալխասյանցը անվանումը մեկնաբանում է որպես մետաղակերպ օքսիդներից, կարմրագույն, կարծր, անհալ եւ գեղեցիկ կանոնավոր բյուրեղներով քար (Ստ.Մալխասեանց, Հայերեն բացատրական բառարան հատ.3, Երեւան, 1944, էջ 516): Շիկաքարը Քարագլուխ գյուղի նախկին անվանումն է (տե՛ս Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԳ, 1984, էջ 905):

իշխանութեան: Որպես ակներեւ է Քարագլխի հին հանգստարանի արձանագրութիւնից՝ Հասան Մեծն բերդս տուած է Սմբատ անուն ոմն իշխանազնի իբր հայրենիք եւ գերեզմանատուն»[2]:

Շիկաքարին անդրադարձած մի այլ տեղագրող՝ Ս.Ջալալյանցը, ամրոցին Չալաղանա անունն է տալիս՝ կապված Չալաղան հարյուրապետ իշխանի անվան հետ, որը մեծ ներդրում ուներ ամրոցի պաշտպանությունը կազմակերպելու գործում[3]: Չալաղանը, որի ամրոցը Ջրաբերդն էր[4], XVII-XVIII դարերում թուրքերի եւ քրդերի դեմ մեծ հաղթություններ տարած ժողովրդի ստորին ծալքերից ծնված, նրա զորությունն ու ոգին արտահայտող հերոսներից էր: Լեոն նրան պատկերում է կարճ հասակով, շինականի պարզ հագուստով, կարճլիկ թուխ միրուքով, փայլուն, խոշոր աչքերով, որպես թշնամիների սարսափ[5]:

Շիկաքարի մասին տեղեկություններ են պահպանվել նաեւ ասորական ժամանակագրության մեջ, որտեղ այն դիտված է որպես Սահակի բերդ. «... եւ Սահակ իշխանն հայկազուն ըմբռնեաց զՄահադի եւ կտրեաց զգլուխ նորա, եւ չոգաւ Սահակ եւ կոտորեաց զբազումս ի Տաճկաց, եւ Քուրտանքն պաշտեալ էին զբերդն Սահակայ[6]...»: Ի դեպ, ամրոցի պատմական անցյալի հերոսական այս դրվագն է ներկայացնում Մովսես Կաղանկատվացին, գրելով. «Իսկ ի լնուլ ՄՀ (821) թուոյ հայոց ելին գաղտաբար ի Պարսւայ արք ընտիրք ի Տաճկաց եւ յաւարի առին զԱմարաս գավառ եւ գերի առեալ իբրեւ ոգիս հազարս, եւ ի Մեծիրանց սահմանի ամրացեալք՝ ի տեղւոջն, որ կոչի Շիկաքար: Յայնժամ արի եւ շքեղատեսակն Սահլի Սմբատեան Եռանշահիկ տէր քաջազոր եղբարբք իւրովք եւ զօրօքն իւրեանց ի լուսանալ առաւօտուն ի վերայ յարձակեալ առ հասարակ դիաթաւալ զնոսա ցիր ու ցան կացուցանէին, եւ որպես յառիւծու ժանեաց զգերեալսն ի բաց կորզեին»[7]: Նույն դեպքերն է մանրամասնել նաեւ Բար Հեբրայուսը:

Իսկ ովքե՞ր էին այս հարձակվողները, որ հայտնվեցին Շիկաքար

2 Մ.Բարխուտարեանց, Արցախ, Բագու, 1895, էջ 424: Բացի այդ, Շիկաքարը իբրեւ ամրոց կարճառոտ հիշատակված է Բ.Ուլուբաբյանի (Խաչենի իշխանությունը X-XVI դարերում, Երեւան, 1975, էջ 71) եւ Շ.Մկրտչյանի (Լեռնային Ղարաբաղի պատմաճարտարապետական հուշարձանները, Երեւան, 1980, էջ 138-139) աշխատություններում:

3 Ս.Ջալալեանց, Ճանապարհորդութիւն, Բ, Տփխիս, 1858, էջ 344:

4 Լեո, Հայ հերոսներ, Ջրաբերդ, մելիքներ եւ նրանց քաջերը, Երեւան, 1920, էջ 20-21:

5 Լեո, Վերջին վերքերը, առաջին մաս, Թիֆլիս, 1891, էջ 107-150: Տե՛ս նաեւ Րաֆֆի, Երկերի ժողովածու, հատ. 10, Խամսայի մելիքությունները, էջ 214:

6 Մ.Ասորի, Ժամանակագրութիւն, Երուսաղեմ, 1871, էջ 365: Տե՛ս նաեւ Հր.Աճառյան, Հայոց անձնանունների բառարան, Դ, էջ 375:

7 Մ.Կաղանկատուացի, Պատմութիւն Աղուանից աշխարհի, Երեւան, 1983, էջ 326



ամրոցում: Մ.Կաղանկատվացին նրանց «արք ընտիրք ի Տաճկաց» է անվանում, որոնք սակայն արաբներ չէին: Բար Հեբրայուսը գրում է. «Այս ատեն Քուրտանիէի ժողովուրդը, որոնք մուսլիմաններ էին, ապստամբեցան արաբներուն դեմ, որովհետեւ իրենց երեւցած էր թագավոր մը... ակնկալուած Մահդին: Այս մարդը իր երեսին քող մը գցած՝ զայն ծածկելով, ինքզինքը կը կոչէր Քրիստոս եւ Սուրբ Հոգի: Մարդոց բազմութիւն մը հաւաքուեցան իր շուրջ, եւ ան բանակատեղ մը ամրացուց Քարտէվայի երկրին լեռներուն մեջ: Եւ նույնիսկ Մամուն (արաբների խալիֆը-Ս.Ս.) կը դողար իրմէ. եւ ան ղրկեց Հասան, բանակին հրամանատարը, անոր դեմ, եւ Հասան կալանաւորեց Տուր-Աբդինի մէջ, մինչ ան Կարտամինի վանքը կը կողոպտէր: Եւ Քուրտանայանները կոտորուեցան, եւ Մահդին փախաւ Իսաակ Բար-Ահուտի, Հայուն երկիրը: Եւ Իսաակ բռնեց զայն եւ գլուխը կտրեց»[8]:

Այս դեպքերից հետո քուրտանցիները հավաքվում են Իսահակի (Սահլի) ամրոցի մոտ, ձգտելով ներս խուժել: Այդ նկատելով, Իսահակի կնոջ վանական եղբայրը առնում է նիզակը, ամրոցի պարսպից նետվում ցած եւ նիզակահար սպանում քուրտանցիների առաջնորդին: Արշալույսին, Սահլը հասնում է իր քաջ զինվորներով, կոտորում հարձակվողների մեծ մասը, իսկ մյուսները, խրվելով ձյան մեջ, ոչնչանում են: Շատ քչերը, որոնց հաջողվեց ազատվել, իրենց առաջնորդ ընտրեցին Հարուն անունով մեկին: Սրա մահից հետո ասպարեզ եկավ Բաբեկը՝ իբրեւ Մահդի (փրկիչ), որը սկսեց գլխավորել աղանդավորներին:

Այսպիսով, այս տաճիկ-քուրտանցիները այն ասպատակ աղանդավորներն են, որոնց մասին հիշատակում են IX դարի պատմական աղբյուրները:

Սրանք են, որ Ամարասի գավառը ասպատակելուց հետո, ավարով եւ հազարին մոտ գերիներով գալիս, պաշարում են Շիկաքար ամրոցը, որտեղ նրանց դիմագրավում են Սահլի քաջազոր եղբայրները իրենց զորքերով, որոնք հարձակվում են պաշարողների վրա, ոչնչացնում կամ փախցնում նրանց, իսկ գերիներին ազատ արձակում:

Շիկաքարը Սահլ Սմբատյան Առանշահիկ իշխանի ամրոցն էր: Որպես հայրենանվեր անձնավորություն, նա բազմիցս մարտնչել է ոչ միայն արաբների, պարսիկների, այլեւ նշված աղանդավորների դեմ, որոնց IX դարի 20-ական թվականներին գլխավորում էր Հայաստանի համար պատուհաս դարձած ավարառու Բաբեկը: Վերջինս, կռվելով արաբների եւ, միաժամանակ, հայ ազնվականների դեմ, հայկական գավառներում հաստատվելու հավակնություններ էր հանդես բերում՝ սրի մասնելով խաղաղ

8 Յ.Քիհրտեան, Բաբակ եւ Սահլ իպն Սնբատ, «Բազմավեպ», Վենետիկ, 1958, մարտ-մայիս, էջ 72-73:

բնակչությանը: 837թ. Սահլ Սմբատյանը բռնում է իր իշխանության սահմաններում (Շիկաքար ամրոցի մոտ- Ս.Ս.) հայտնված Բաբեկին եւ հանձնում արաբների ձեռքը: Այդ մասին եւ ընդհանրապես ամրոցի հետ կապված ուշագրավ տեղեկություններ են հաղորդում հատկապես արաբական աղբյուրները[9]:

IXդ. վերջերի եւ Xդ. սկզբների հեղինակ Ալ-Կուփին գրում է, որ «երբ Բաբեկը տեսավ, որ ինքն այլեւս ուժ չունի կռվելու (Ափշինի դեմ պատերազմում- Ս.Ս.), դուրս եկավ իր քաղաքից (Ալ-Բազզից՝ Արաքսի ափամերձ աջափնյա շրջանում-Ս.Ս.) եւ իր 20 մարդկանց հետ հասավ մի քաղաք, որ կոչվում է Կազաջ (վերջինս ըստ Յակուտի՝ h.VII, էջ 255, բերդանուն է- Ս.Ս.): Քաղաքի կառավարիչն էր Սահլ իբն Սումբատը... եւ Սահլը նրան բերում է իր ամրոցը»[10]:

Այստեղ հիշատակվող «Կազաջ»-ը, որ այլ նյութերում ներկայանում է առավել հայեցի՝ «Կասիշ» ձեւով, «Շիկաքար»-ի հնագույն անվանումն է, որն իր նախնական տեսքով պահպանվել է արաբների մոտ: Այն, ինչպես ցույց են տալիս տեղանունների խորազնին ուսումնասիրությունները, իրականում չի հակասում «շեկ» («Շիկաքար») անվանը[11]:

Հայ ժողովրդի պետականության անկումից առաջ եւ հետո, երբ Հայկական լեռնաշխարհը դարձավ օտար նվաճողների ասպատակությունների ասպարեզ, Շիկաքարը կարեւոր ռազմավարական կետ էր Կարկառ եւ Խաչեն գետերի միջեւ: Սկսած արաբներից, ամրոցի պահապանները բազմիցս մարտնչել են այլեւայլ նվաճողների դեմ՝

9 Ибн ал-Асир, Тарих-ал-Камиль, Баку,1940, էջ 55-56, Ахмад Ибн Асам ал-Куфи, Книга завоеваний, Баку, 1981, էջ 70-77 եւ այլն:

10 Ахмад Ибн Асам ал-Куфи,էջ 71: Արաբական մեկ այլ պատմիչի հաղորդած տեղեկության համաձայն Սահլ Սմբատյանի եւ Բաբեկի միջեւ ամրոցում, ճաշի ժամանակ, տեղի է ունեցել հետեւյալ խոսակցությունը. «Միթե այդպիսիք կարող են նստել ինձ հետ միեւնույն սեղանի շուրջ»,- դիմում է Բաբեկը Սահլին: «Ներիր, ով տիրակալ, ներիր... իմ դրությունը իրականում այնպիսին չէ, որ ճաշեմ (սեղան նստեմ-Ս.Ս.) արքաների հետ»,- պատասխանում է Սահլը: Այնուհետեւ Սահլը կանչում է դարբնին եւ հրամայում կապկպել Բաբեկին երկաթյա շղթաներով. «Ձգիր ոտքերդ արքա»: «Ի՞նչ է սա Սահլ, դավաճանությո՞ւն»,- հարցնում է Բաբեկը: Սահլը պատասխանում է. «Դու ոչխարների եւ կովերի հասարակ հովիվ ես, քո ի՞նչ գործն է պետության կառավարումն ու քաղաքականությամբ զբաղվելը» (տե՛ս Масуди, Китаб Мурудж аз-захаб, էջ 124, հմմտ. З.Буниятов, Азербайджан VII-IXвв., 1965, էջ 325):

11 «Շեկ»-ը՝ դրափոխված է «կեշ»-ից, վերջինս էլ՝ «կաս»-ից (կաս-կաշ-կեշ-շեկ) հավասարազոր է մասնավորապես բարբառային «կյաժ» արտահայտչաձեւին, որը նույնպես ծագել է նախնական «կաս»-ից (կաս-կազ-կաժ-կյաժ): Մանրամասնությունները, որ տվյալ թեմայի ուսումնասիրության շրջանակներից դուրս են, ներկայացվում են իմ «Արցախ-Ուտիք. պատմական տեղանուններ» ուսումնասիրության մեջ:



պատմությանը թողնելով բազում հերոսական դրվագներ, որոնք, սակայն, քիչ են գրի առնվել:

Այսպես, դեռեւս XVIII դարի 20-ական թվականների հայ ազատագրական շարժման մեջ խոշոր դեր էին խաղում Ղարաբաղի մելիքություններում տեղակայված սխնախները, որոնցից մեկը Շիկաքար-Քարագլուխ բնակավայրն էր՝ Խաչենի մելիքության հիմնական կամ մեծ Սխնախը[12]:

Շիկաքարը Խրամորթ գյուղից



1724թ. ամռանը Անդրկովկասի մի շարք շրջաններ գրավելուց հետո, թուրքական զորամիավորումները Ումար փաշայի հրամանատարությամբ շարժվում են Ղարաբաղի վրա: Թուրքերի դեմ միացյալ ճակատ ստեղծելու եւ հայերի ինքնապաշտպանությունը կազմակերպելու նպատակով, դեռեւս 1723թ. դեկտեմբերին Ղարաբաղ է գալիս Պետրոս Առաջինի պատվիրակ Իվան Կարապետը: Վերջինիս 1724թ. հուլիսի 18-ի նամակ-զեկուցագրից պարզվում է, որ ինքը հաստատվել է «Քարայգլխին սղնաղումն Թարխան եւ Բաղի Ուզբաշոնց քշդին»[13]:

Ամրոցի պատմական անցյալի հետ են առնչվում նաեւ մի քանի ռազմական ընդհարումներ՝ XIX դարի սկզբի ռուս-պարսկական պատերազմի ժամանակ: Այդ պատերազմում ռուսական զորքերին մեծ

12 Զ.Արզումանյան, «Մեծ» եւ «Փոքր» սխնախների հարցի շուրջ, Լրաբեր հասարակական գիտությունների, 1985, N. 4,էջ 91:

13 Ա.Աբրահամյան, Մի էջ Անդրկովկասի եւ հայ-ռուսական հարաբերությունների պատմությունից, Երեւան, 1953, էջ 216:

աջակցություն էր ցույց տվել Կուսապատ գյուղից Մելիք Վանի հարյուրապետը, որի խորհրդով 1805թ. հունիսին ռուսական զորքերը Կարյագինի հրամանատարությամբ ճիշտ ընտրեցին մարտավայրը եւ իսպառ ոչնչացրին Փիր-ղուլի խանի գերակշիռ ուժերը: Իսկ երբ պարսից զորահրամանատարին օգնության եկավ Աբաս-Միրզայի 30 հազ. բանակը, ռուսական զորքերի համար ստեղծելով անելանելի վիճակ, Վանին գիշերը, վտանգելով կյանքը, հասավ Շիկաքար բերդի ստորոտին՝ Խրամորթ գյուղը, հանդիպեց Մելիք Աղամին, Ասրի բեկ Փիրումյանին եւ ուրիշների՝ լուծելու ռուսական զորքերին օժանդակելու հարցը[14]:

Աբաս-Միրզան 1812թ. ձմռանը զորքերի մեծ բազմությամբ կրկին հարձակվեց Ղարաբաղի վրա: Պարսից հեծելազորը Ջաֆար ղուլի խանի առաջնորդությամբ, օղակելով մայոր Ժինեւի զորապետության ներքո գտնվող Սուլթան-բուդ ձմեռանոցը (Աղդամ քաղաքի հյուսիսային կողմում, Շահբուլաղի մոտ- Ս.Ս.), ոչնչացրեց ռուսական ամբողջ գումարտակը: Այդ միջոցին Շուշի բերդից օգնության գնաց Մելիք-Վանին 200 ռուս զինվորներով եւ հայ հեծելազորով: Սակայն նա ստիպված էր ամրանալ Շահբուլաղի ամրոցում, որը իսկույն պաշարվեց Ջաֆար ղուլի խանի զորքերով: Թնդանոթների հարվածներից ամրոցի դռները խորտակվում են, պարսից զորքերը կատաղությամբ ներս են խուժում, բայց մեծ է լինում զարմանքը, երբ բերդում ոչ ոքի չեն հանդիպում: Վանի հարյուրապետը գիշերով զորքերը դուրս էր բերել ամրոցից լեռների, բարձրավանդակների վրայով հասել Փառուխ[15] գյուղը՝ Շիկաքար ամրոցի հյուսիս-արեւմտյան ստորոտում, որից այն կողմ սկսվում էր Շուշիի ճանապարհը:



Հատված արեւելյան ժայռազանգվածից

Պետք է ընդգծել, որ Շիկաքար-Քարագլուխը իր պատմական

14 В.А.Потто, Первые добровольцы Карабага в эпоху водворения русского владычества, Тифлис, 1902, էջ 18:

15 Պատմությանը հայտնի Խաչենի փոքրիկ այս գյուղը, որ 1823թ. ուներ ավելի քան 8 տուն (տե՛ս Описание Карабахской провинции в 1823, էջ 25) բազում հերոսամարտեր տեսած բնակավայրերից է եւ տեղադրված է Խաչենագետի աջ ափամերձ շրջանում:



առաքելությունը կատարեց ընդհուպ մինչեւ 1920թ., հերոսաբար դիմագրավելով թուրք-օսմանյան զավթիչներին: 1905-1906 եւ 1918-1920թթ. այստեղ տեղի ունեցան հայ-թուրքական ընդհարումներ: Ամրոցի հարավ-արեւմտյան գերեզմանոցում գտնվող մի տապանագիր զավթիչների դեմ պայքարի ելած հայ երիտասարդի հերոսապատում է, որում ասված է.

*Երնեկ այն մարդուն որ ազգի սիրուն / կզոհվի: Այս է տապան լուսահոգի Յա /րութիւնի Մովսեսեան Գրիգորյանց, որը / տաճկական պատերազմի ժամանակ Քարագլուխ գյուղը վերցնելու օրը / չխնայելով իւուր երիտասարդական / կեանքը ազգի համար զոհ գնացավ / տաճկական գնդակի հարուածով / ճուխտ խաչերի առջեվ / 23-ին սեպտեմբերի 1918 թւ / 35 տարի հասակում:*

Արեւելյան ժայռի ընդհանուր տեսքը



Սրանք են Շիկաքար ամրոցի վերաբերյալ պահպանված տվյալները, որոնք բավարար հիմք չեն տալիս պարզելու նրա անցած, պատմական ճշգրիտ ուղին: Նկատի ունենալով այս հանգամանքը, ստիպված ենք դիմել ամրոցի պաշտպանական համակարգին, նրա որոշ հանգույցների ժամանակագրական առանձնահատկություններին եւ այլ նյութերի օգնությամբ՝ փորձել որոշել ամրոցի հիմնարկման ժամանակը:

Շիկաքար ամրոցը ծովի մակերեւույթից 1011,5 մետր բարձրությամբ սարահարթի վրա է, իսկ մոտակա հարթավայրի համեմատությամբ նրա բարձրությունը ավելի քան 500մ է: Ամրոցի հարակից սարահարթը, որն ընդգրկում է մոտ 300 հեկտար տարածություն, ունի կենսական լավ

պայմաններ՝ ջուր, ծաղկազարդ ու դալարագեղ լանջեր, բերրի վարելահողեր, արոտավայրեր, գեղեցկատես անտառներ: Վերնամասում սարահարթի արեւելյան, հյուսիս-արեւելյան, արեւմտյան եւ մասամբ հյուսիսային հատվածները հիմնականում հարթ են: Տափարակն արեւելքից լեռնային գոգավորությամբ բաժանվում է երեք ճյուղերի, հյուսիսից եւ հարավից վերջանում է կտրվածքաձեւ՝ անտառապատ ժայռապատնեշներով, իսկ արեւմուտքից՝ հարում է բուսածածկ լեռնալանջերին: Գրեթե կենտրոնով ձգվում է լայնանիստ իջվածք, որը հասնում է հարավ-արեւելյան անդնդախոր կիրճը: Ամրոցի պաշտպանները վարպետորեն են օգտագործել տեղանքի անառիկությունը: Այն երեք կողմերից շրջապատված է բնական դժվարամատչելի ու անհաղթահարելի վիմահերձ ժայռերով, որոնց խոռոչների քարանձավները պատսպարաններ են:




Ամրոցն օղակող լեռնային գոգավորության առաջին քարանձավը, որը գտնվում է հարավ-արեւելյան կողմում, չափերով բավականին մեծ է: Այն քարայր լինելով հանդերձ՝ պարունակում է ջրի հարուստ պաշարներ, որից օգտվել են պաշտպանները: Ջրամբարի խորությունը երկու մետրից ավելի է, գտնվում է քարանձավի խորքում՝ 36-րդ մետրի վրա: Քարանձավի երկարությունը ստույգ դժվար է որոշել, քանի որ վերջնամասում նեղանում եւ դժվարընթաց է դառնում: Բարձրությունը 5 մետր է, լայնությունը՝ 2,5,



որոշ մասերում՝ 3 մետր: Առաստաղը կոնաձեւ է, հիմնականում՝ հարթ:

Ամրոցի պաշտպանական համակարգում կարեւոր դեր են կատարել նաեւ մյուս քարանձավները, որոնք պատերազմական ընդհարումների ժամանակ օգտագործվել են որպես ապահով ապաստարաններ, թաքստոցներ ու կացարաններ: Դրանք էլ ավելի են մեծացրել ամրոցի դիմադրողականությունը:


Ամրոցի արեւելակողմի քարանձավներից

Հաջորդ նշանավոր քարանձավը տեղակայված է առաջինից մոտ 500 մետր դեպի հյուսիս: Այն ծառայել է ոչ միայն որպես բնակատեղի ու թաքստոց, այլեւ պաշտպանական դեր է խաղացել:

Ուշագրավ է նաեւ ամրոցի արեւելյան ժայռից բացվող երրորդ քարանձավը: Սա ամենադժվարամատչ անձավներից է, որը հողածածկույթի սողանքների հետեւանքով գրավել է բարձր դիրք եւ լիովին դժվարացրել դեպի այն տանող ուղին:

Չորրորդ եւ հինգերորդ քարանձավները գտնվում են ամրոցի հյուսիս-արեւմտյան եւ հյուսիսային կողմերում:

Ելնելով քարանձավների կառուցվածքից՝ հետեւցնում եմ, որ դրանք բնիկների կողմից աստիճանաբար վերածվել են պաշտպանական ամրությունների: Դրա մասին են վկայում ոչ միայն կացարանների ներսում եղած ձեռակերտ շինությունների հետքերը, այլեւ արտաքին ամրացումները, որոնք էլ ավելի են ամրապնդել ամրոցի բնական դժվարամատչելիությունը: Միաժամանակ, սարահարթի (ժայռամրոցի) իշխող դիրքն ի նկատի ունենալով, կարող ենք ասել, որ վաղնջական ժամանակներից սկսած հենց այդ հանգամանքն են տեղաբնիկները հաջողությամբ օգտագործել՝ գոյության դաժան պայքարում:

Ինչպես վկայում են ամրոցի տարածքի խեցե բաց դարչնագույն, սեպաձեւ դրոշմներով գտածոները, այստեղ մարդիկ ապրել են դեռեւս հնագույն ժամանակներից սկսած՝ մ.թ.ա. XIV-XIII դարերից, գուցեեւ նրանից ավելի վաղ ժամանակներից:

Տեղում կատարած ուսումնասիրությունները հանգեցնում են այն համոզման, որ Շիկաքարը մի սովորական բնակավայր չէր եւ նույնիսկ ոչ էլ



Հատված պարսպից

սովորական ամրոց, այլ իր նշանակությամբ, առանձնահատուկ ու ռազմագիտական տեսակետից Արցախ նահանգի շատ կարեւոր ամրություններից մեկը:

Ամրոցն ունի երկու մուտք. արեւելյան եւ արեւմտյան: Համեմատաբար թույլ են պաշտպանված արեւմտյան, ինչպես նաեւ հարավ-արեւմտյան հատվածները, մի հանգամանք, որն ըստ էության չի ազդում ամրոցի անառիկությանը: Եվ այն, որ վերոհիշյալ հատվածներին երկրորդական տեղ է հատկացվել (այնտեղ արհեստական արգելապատեր չեն կառուցվել), բացատրվում է բնական պատճառներով: Նախ, մինչ այդ ուղղություններից թշնամին նախահարձակ լիներ, պետք է անցներ լեռնային զանգվածներ ու սարահարթեր՝ հարավից կամ արեւմուտքից, որոնք նույնպես բնակեցված էին եւ ունեին իրենց պաշտպանները: Բացի այդ, եւ որ ամենակարեւորն է, Շիկաքարը կյանքի է կոչվել նախ եւ առաջ հսկողության տակ առնելու արեւելքը, դեպի Խաչենի իշխանության կիրճն ու նրանով անցնող եւ երկրամասի լեռնային մասը դաշտավայրի հետ կապող՝ ռազմավարական ճանապարհը՝ իր վրա կրելով ասպատակիչների առաջին հարվածը: Լինելով Խաչենի ամենանշանավոր սահմանապահ ամրոցներից մեկը (այնտեղից լավ են դիտվում դիմացի լայնարձակ հարթավայրերը, Կարկառ եւ Խաչեն գետերի հովիտները, շրջակա լեռնաբազուկների ամրոցները), Շիկաքարն աչքի է ընկնում ոչ միայն բնական ամրություններով, այլեւ պաշտպանական այլ բազմաբնույթ համակարգերով:



Խոսքը ամրոց-սարահարթի հարավ-արեւելյան մասում, եռանկյունաձեւ հրվանդանի՝ երեք կողմերից բնականից լավ պաշտպանված տարածքում կառուցված դղյակ-ամրոցի մասին է, որն աչքի է ընկել ոչ միայն իր բնական անառիկ ու իշխող դիրքով, այլեւ արհեստականորեն ստեղծված ամրակուռ համալիրով:

Ձորաեզրի երկարավուն հրվանդանը երեք կողմերից եզերվում է բարձր ժայռափերով, իսկ չորրորդ կողմից մոտ 110մ շերտով հարակցվում սարահարթին, որը կրկնակի ամրացվել է 1մ 75սմ լայնությամբ պարիսպներով: Արեւմուտքից պարսպապատի երկարությունը 70մ է, հյուսիս-արեւելքից՝ 20: Այնուհետեւ պարսպապատը շարունակվում է ամրոցի հյուսիսային եզրով: Պարիսպները, որոնք այսօր պահպանվում են 30սմ բարձրությամբ, շարված են անմշակ կամ կոպտատաշ մեծ քարերով:



Ներկայումս լքված Քարագլուխ գյուղը 1950-ական թվականներին:
Առաջին պլանում՝ Դանիել Հակոբյան (հետպատերազմյան ժամանակաշրջանի առաջին ուսուցիչներից, գ. Խնապատ)

Ամրոցի գլխավոր դարպասը բացվում է արեւմուտքից, որի երկու կողմերում եղել են 3,3մ տրամագծով բրգաձեւ երկու աշտարակ-դիտակետեր: Դրանցից մեկը հսկում էր արեւմտյան եւ հարավային ուղիները, իսկ մյուսը, որին տեղանքի բերումով շատ ավելի կարեւոր տեղ է հատկացվել, մոտ է ձորաեզրին եւ տեսադաշտում է պահել արեւելքը՝ դաշտավայրերը, դեպի բերդ տանող հյուսիս-արեւելյան ուղին:

Բարձունքի մակերեսը խորդուբորդ է: Գրեթե կենտրոնական մասում բնական իջվածք կա, որը հրվանդանը բաժանում է երկու մասի: Այստեղ է ամրոցի ամենախոցելի տեղը, որն ամրապնդելու համար, անդնդախոր կիրճի եզրամասում եւ շրջակա որոշ թափանցելի հատվածներում կառուցվել է 1մ 30սմ հաստությամբ պարսպապատ, որը ներկայումս 4,5մ բարձրություն ունի:

Դղյակը, որն արեւելքից դեպի արեւմուտք աստիճանաբար լայնանում է, ունի 250մ երկարություն: Միջին լայնությունը հյուսիսից հարավ 50մ է: Այսպիսով, ամբողջ դղյակը զբաղեցնում է 12,5 հազ. մետր մակերես:

Դղյակ - ամրոցի ընդհանուր տեսքը



Ամրոց–համալիրը, որը եղել է Սահլ Սմբատյանի եւ հաջորդների նստոցը, ներքուստ բաժանված է տարանշանակ շինությունների. ռազմական ու տնտեսական բնույթի պահեստներ, խցեր, բնակելի կացարաններ: Նախնական հաշվումներով, կառույցների թիվը հասնում է 26-ի: Առանձին շինություններ լիովին հողածածկ են եւ դժվար է առանց հնագիտական պեղման–մաքրման աշխատանքների ստույգ որոշել նրանց հատակագիծը, դերն ու նշանակությունը: Համալիրի գերակշռող մասը կառուցված է տեղական մոխրակապտավուն եւ սպիտակ անմշակ քարերով ու կրաշաղախով[16], որոնց շարվածքները տեսանելի են:

Ամրոցի կենտրոնում, բարձունքի վրա, իշխող դիրք են զբաղեցնում ութ սենյակներ՝ իրար կից, որոնք շարված են անմշակ քարերով (պատերի լայնությունը՝ 1,5մ է): Դրանցից մեկը, որ գրավում է ամրոցի լավ պաշտպանված եւ առավել գերիշխող դիրք եւ որի պատերի մնացորդները պահպանվում են 40սմ բարձրությամբ, ունի 9մ երկարություն եւ 7մ լայնություն: Դատելով կուտակված քարերից, այս շինությունը ունեցել է մոտ 5մ բարձրություն: Սրա կողքի (արեւմուտքից) սենյակն ունի քառակուսի հատակագիծ (5,5x5,5մ): Բացի նշվածներից, կան տարբեր չափերի ու նշանակության այլ սենյակներ եւս, որոնք բնակարան լինելուց բացի

16 Ամրոցի ներսում պահպանվող կրահորը վկայում է, որ պարսպապատերը զուգընթաց ռազմական իրադարձություններին վերաշինվել են, ամրացվել:



ծառայել են որպես զորակայաններ:

Ի մի բերելով մեր զննումները պետք է ընդգծել, որ նմանօրինակ ամրոցներ Հայաստանում ստեղծվել են ամենավաղ ժամանակներում: Հետագայում սկսած X դարից, ամրաշինությունը լայն ծավալ է ստանում, որը պայմանավորված էր երկրի ռազմատնտեսական ու քաղաքական իրավիճակով: Այսպես, Արշակունյաց թագավորության շրջանում, Հայաստանը մեծ զորաբանակ ունենալով, ի վիճակի էր թշնամուն ճակատամարտ տալ բաց դաշտում ու թույլ չտալ նրան մտնելու երկրի խորքը: Դրությունը փոխվում է հետագա՝ մարզպանական ու հատկապես Բագրատունյաց թագավորության շրջանում, երբ մարդկային ուժի սակավության պայմաններում ճակատամարտեր տեղի են ունենում անմիջականորեն ամրոցների շրջակայքում, նրանց օգնությամբ: Երկրին սպառնացող ներխուժումների (առաջին հերթին՝ արաբական) վտանգը ստիպում էր կառուցել ամրոցներ, ստեղծել պաշտպանական բազմապիսի միջոցներ, գերազանցապես բնական դժվարամատչելի վայրերում:

Շիկաքարի ամրոցը այդպիսիներից էր, որի կառուցումը պայմանավորված էր նաեւ Խաչենի իշխանության աշխարհագրական դիրքով: Խաչեն արշավող թշնամիները չէին կարող անտարբեր անցնել այդպիսի առաջապահ ու հզոր ամրոցի կողքով, որի գրավման համար նրանք ոչ միայն պետք է հաղթահարեին նրա անառիկությունը, այլեւ դեպի այն տանող վերելքի դժվարությունները:

Շիկաքարը հայկական ամրոցաշինության սկզբունքներով կառուցված համալիր է, որը պարսպապատերի ու սենյակների պատերի շարվածքների ձեւերով, աշտարակների ծավալա–տարածական բնույթով, ինչպես նաեւ հարակից շինությունների կառուցման արվեստով, հիշեցնում է կենտրոնական Հայաստանի հինավուրց ավանդները: Ամրոցաշինության այս հին ոճը հետագա զարգացում ստացավ ուշ շրջանի մյուս ամրոցների հորինվածքում: Սակայն Շիկաքարը հայտնի է ոչ միայն ժայռեղեն ու արհեստական ամրաշինություններով, այլեւ պաշտպանական ազդանշանային համակարգով, որով աչքի էին ընկնում Արցախ – Ղարաբաղի մի քանի բերդեր[17]:

Ամրոցի տարածքի նյութական ժառանգության մեջ մեծ արժեք են ներկայացնում հուշարձանները, որոնք անկրկնելի ու ինքնատիպ լինելով, արժեքավորում են նրա անցյալը: Այդպիսի մի խումբը՝ Ս. Աստվածածին եկեղեցի, խաչքարեր եւ ուշ շրջանի (XIXդ.) մի տապանաքար տեղաբաշխված է Քարագլուխ գյուղում: Ս. Աստվածածին եկեղեցին պատանցիկ հիշատակված

17 Շ.Մկրտչյան, նշվ. աշխ., էջ 51:

է Մ. Բարխուտարյանցի աշխատության մեջ[18]: Ըստ կառուցման ոճի՝ վերաբերվում է XIX դարին: Հուշարձանը ուղղանկյուն հատակագծով, միանավ շինություն է (երկարությունը՝ 14.5մ, լայնությունը՝ 6.6մ): Կառուցված է տեղական սպիտակավուն կոպտատաշ քարերով ու կրաշաղախով: Տեղանքի թեքության եւ, ըստ այդմ էլ, արեւմուտքից աննպատակահարմար լինելու պատճառով, միակ մուտքը բացվում է համեմատաբար մատչելի՝ հարավային կողմից, որը կառուցված է բավականին մեծ սրբատաշ քարերով: Եկեղեցին ունի երեք (արեւելքից՝ երկու, հարավից՝ մեկ) փոքրիկ պատուհաններ:



Շիկաքար. Խաչքար, XIIIդ, ագուցված Ս. Աստվածածին եկեղեցու պատին

Ելնելով շրջակա հուշարձանների ժամանակագրական առանձնահատկություններից եւ մերձակա տարածքի մանրակրկիտ ուսումնասիրություններից, գտնում ենք, որ այն կառուցվել է այստեղ նախկինում եղած եկեղեցու տեղում, մանավանդ որ, 1237թ. մի ձեռագիր հիշատակարան հաղորդում է նմանատիպ շինության գոյության փաստը[19]:



Խաչքար(չափագրություն) ագուցված Ս. Աստվածածին եկեղեցու պատին



Խաչքար, 12-13դդ, ագուցված Շիկաքարի Ս. Աստվածածին եկեղեցու պատի մեջ

Ամրոցի տարածքի հաջորդ հուշարձանախմբերն են հարավ – արեւմտյան եւ հարավային մասերում տարածված գերեզմանատները: Դրանցից առաջինը՝ հարավ – արեւմտյանը, չնայած մեր ժամանակաշրջանի գերեզմանոց է,

18 Արցախ, էջ 166:
19 Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԳ, էջ 905:





Խաչքար, XIIIդ, ներկայումս կիսովին ջարդված

բայց կարեւոր է մի քանի գեղաքանդակ խաչքարերով ու դիմաքանդակ տապանաքարերով:

Խաչքարերից մեկը, որ կերտված է մոխրագույն կայծքարից հայկական XIII դարի բարձրաքանդակ խաչքարի լավագույն ու անկրկնելի նմուշներից է: Այստեղ վարպետի կիրառած արտահայտչամիջոցների մեջ ակնբախ է դասական քանդակագործության հեւքը, հայ քարարվեստի մեծ վարպետությունը: Բուն խաչքարի բարձրությունը 2,5մ է, լայնությունը՝ 0,82, իսկ հաստությունը՝ 19,20 սմ: Քիվի ամբողջ մակերեսը եւ խաչաթեւերի շուրջ ծածկված են մանվածո զարդերով, բուսական մոտիվներով: Ուշագրավ է հատկապես հուշարձանի ստորին մասը, ուր ներկայացված են մասուցարան իր պարունակությամբ եւ կնոջ ու տղամարդու պատկերներ: Սա կարծես թե հերթական հաղթանակից վերադարձած տղամարդուն (իշխանին) դիմավորելու տեսարան լինի: Կինը մասուցարանով դիմավորում է տղամարդուն, իսկ վերջինս ձախ ձեռքով միրգ է վերցնում (հավանաբար՝ խնձոր), իսկ աջով բռնել է գինու գավը:


Տողերիս հեղինակը XIIIդ նշանավոր խաչքարի մոտ (1985թ)


Շիկաքար-Քարագլուխ. XIIIդ, նշանավոր հուշակոթողների ներկայիս տեսքը

Այսպիսով, ըստ էության կյանքի հարատեւությունը խորհրդանշող գունդը (շրջանակը) այստեղ արտահայտվում է կեն-ցաղային մոտիվների պատկերմամբ, որը Խաչենում հազվադեպ երեւույթ չէ: Ի դեպ ասենք, որ մարդու պատկերներով խաչքարեր առաջին անգամ հայտնաբերվել են Խաչենում՝ Հայաստանի այն մասում, որտեղ ընդհանրապես նախասիրված էր քանդակներով զարդարանքը, ուր վանքերի



պատերին, սովորական դարձած կտիտորական խմբերի հետ միասին հանդիպում են բավականին մեծ բարձրաքանդակներով պատկերներ[20]: Այս առումով, այստեղի խաչքարերը կարեւոր նյութ են պարունակում ժամանակաշրջանի կենցաղը, տարազը եւ կյանքի որոշ մանրամասնություններ ուսումնասիրելու համար:

Խաչքարի մասուցարանից ներքեւ պահպանվել է խաթարված արձանագրություն: Այն գրվել է նախքան խաչքարը պատվանդանի մեջ դնելը եւ այդ պատճառով էլ հինգերորդ տողի կեսը եւ շարունակությունը մտել են պատվանդանի փոսորակի մեջ:

Ահա այդ արձանագրությունը. ՄԵՔ /ՀԵՒԵՏ / ԻՔԱՅՈՐ / ԴԻՔՍ ՊԱՊԱ(Ս)Ն ՊԱՏ (ՍԱՐԳԻՍ)...[21]

Արձանագրությունից վերեւ, կնոջ եւ տղամարդու հարթաքանդակների կողքերին պատկերված են մեկական փոքրիկ խաչեր, իսկ խաչքարի կողին, աջ կողմից, ստորին մասում՝ քայքայված չորստողանի գրեր, որոնք վրիպել են նախկին ուսումնասիրողների աչքից: Նկատվում են սոսկ մի քանի տառեր. ՀԵ/ՆՄ / ՅԱ / Ս Մ/:

Երկրորդ խաչքարը եւս աչքի է ընկնում կատարողական վարպետությամբ (1,73x0,82x0,24): Այն զարդամոտիվներով հարում է առաջինին եւ կարեւորվում է թիկունքին փորագրված թվակիր արձանագրությամբ: Տասնվեց տողանի հիշատակագրությունը հետեւյալն է.

ԹԻ(ՎՆ) ՉԲ /1253/. ԻՇԽԱՆՈ / ԻԹԻ. ՀԱՍԱՆԱ /Յ. ԵՍ ՍՆՊԱՏ ԵՒ / ԵՂԲԱՐՔ ԻՄ ԿԱ / ՆԿ (Ն) ԵՑԻ ՁԽԱՉՍ / ԲԱՐԷԽԱՒՍ Ա /Ռ ՔՍ ԻՆՋ ԵՎ ԱՄ / ՈՒՍԻՆ ԻՄՈՅ ԿԱՏ / ԱՅԻՆ. ՋՈՐ ԵՏ ՊԱ / ՐՈՆ ՄԵՋ ՀԱՅՐԵՆ / ԻՔ ԵՒ ԳԵՐԵԶՄԱ / ՆԱՅ ՏԵՂ ՔՍ / ԱՒԳՆԵ ԻՒ / Ր ՈՐԴԵԱ / ՑՆ ԱՄ / ԵՆ[22]:

Ուշադրության է արժանի նաեւ խաչքարի ներքնամասը, ուր շրջանակի փոխարեն կլոր սեղան է, որի վրա շարված են զանազան ուտելիքներ, շուրջը նստած տղամարդ եւ կին՝ երեխան գրկին:

Մեծ հետաքրքրություն են ներկայացնում նաեւ XIX դարի սկզբի որոշ տապանաքարեր: Դրանցից մեկը (102x0,80x0,26), որ գտնվում է խաչքարերին անմիջապես մոտ, աչքի է ընկնում ուշագրավ քանդակապատկերներով: Կենտրոնում պատկերված է իշխանական հանդերձով տոհմի ավագը, որը ձախ ձեռքը դրել է սափորին, իսկ աջով բռնել է գավաթ, որը խորհրդանշում է, թերեւս պատվասիրության եւ հյուրասիրության ավանդույթները:

20 И.Орбели, Бытовые рельефы на Хаченских крестных камнях XII-XIII вв., Петроград,1915, էջ 327:

21 Արցախ, էջ 166: Տե՛ս նաեւ Դիվան, V, էջ 140:

22 Նույն տեղում:

Տապանաքարի հակադիր բեւեռներում քանդակված են նրբահյուս հավասարաթեւ խաչեր, որոնք խորհրդանշում են հավատի նկատմամբ ունեցած մեծ ակնածանքը, իսկ թիկունքին՝ համառոտագրված արձանագրություն:

Երկրորդ գերեզմանատունը գտնվում է «բերդաձորի» աջ եզրին, ամրոց-սարահարթի հարավ-արեւելյան լանջին, անտառախիտ վայրում: Այստեղ թաղումներ կատարվել են հավանաբար IX դարից սկսած:

Հանգստարանում, որն ընդգրկում է ավելի քան կես հեկտար մակերես, կան անխնամ, որոշ դեպքերում՝ գեղաքանդակ, անարձանագիր մի տասնյակի չափ խաչքարեր ու կիսամշակ բազմաթիվ տապանաքարեր՝ կիսովին խրված գետնի մեջ:

Պարզագույն (անարվեստ) երկու խաչքարեր կան մոտակա «Սանաձոր» վայրում, որոնք գտնվում են ամրոցից մոտ 2կմ հարավ-արեւմուտք: Իսկ մեկ այլ՝ ճանապարհացույց խաչքար (1,3x0,7x0,17) գտնվում է արեւմտյան մուտքի մոտ, դեպի ձորակ՝ «Կարմիր աղբյուր» տանող հնագույն արահետ-ճանապարհի աջ եզրին՝ «Նահատակի աղբյուր» վայրում:

Խաչքարի վերին թեւերից կախված են նռան քանդակներ, ստորին մասում՝ երկու փոքր խաչեր: Անմշակ սալաքարի վրա կերտված այս հուշարձանը կատարման արվեստով մեծ ընդհանրություն ունի Խնապատ գյուղի հարավ-արեւմտյան եզրի խաչքարի հետ, հետեւաբար նրա ժամանակակիցը կարելի է համարել (XII դ.):

Շիկաքար ամրոցի շրջակայքում՝ Խնապատ, Խրամորթ եւ շրջակա այլ գյուղերի տարածքներում կան գյուղատեղիներ, եկեղեցիներ,



Խնապատ. Խաչքար «Ցեց քար», 1187թ.



գերեզմանատներ, խաչքարեր, որոնք կարոտ են առանձին ուսումնասիրության:

Ամրոցի շրջակայքի առաջին անգամ ներկայացվող հուշարձանները յուրովի լույս են սփռում Խնապատ գյուղի պատմության մշուշապատ էջերի վրա:

Գյուղի ամենահին թվակիր հուշարձանը «Ցեց քար» խաչքարն է (3,0x1,5x0,4), որը գտնվում է գյուղից 1,5կմ հարավ-արեւմուտք: Սպիտակ, կոպտատաշ քարին կենտրոնական խաչն է, որի թեւատակերին երկու փոքր խաչեր են: Այլ զարդաքանդակներ չկան: Անշուշտ, մեծ կարեւորություն ունի ձախ կողի հիշատակագրությունը, որից պարզվում է, որ Համբերուշատը խաչքարը կանգնեցրել է նահատակված Համամի, Գրիգորի, Ղազարի եւ այլոց հիշատակին: Արձանագրությունը, որն ընդգրկում է 12 տող, որից վերջին երկուսը՝ հիմնականում եղծված, հետեւյալն է. Ի ԹԻ ՈԼ / Զ / 1187թ./ ԵՍ Հ(Ա)Մ / ԲԵՐՈՒՇԱՏ / (Գ) ՄԲԵԹ (Ս) (Կ) ԱՆԳՆԵ (ՑԻ) / (ՀԻՇ)ԱՏԱ(Կ) / ՀԱՄԱՄ /... ԵՂ ԵԻ .. ՆՈ / ՂԱԶ(ԱՐ) / ԳՐԻԳ(ՈՐ) / .. ՍՈ.. / ...: Սրան մերձ կա մի խաչքար եւս:

Անտարակույս, այս երկու խաչքարերի ժամանակակիցն է գյուղի հարավ-արեւմտյան մասում, ջրամբարի մոտի կիսակլոր վերնամասով խաչքարը (XIIIդ.):



Զրվեր. XIV - XVդդ խաչքարեր «Նահատակ» գերեզմանոցում

Որոշակի հետաքրքրություն է ներկայացնում նաեւ գյուղամիջյան կոթողը (1,6x0,75x0,23):Պարզագույն հյուսկեն զարդաքանդակներով այս հուշարձանի ներքնամասում զետեղված արձանագրությունը վկայում է, որ Աղբայրիկը խաչքար է կանգնեցրել իր անգին հարազատների՝ հոր եւ եղբոր հիշատակին, որոնց գերեվարել են: Ութ կարճառոտ տողերով հավաստված է. ԵՍ Ա / ԱՂԲԱՅՐԻԿ Կ / ԱՆԳՆԵՑԻ ԶԽԱՉՍ ՅՈՒՐ / ԻՄ ԵՒ ԵՂԲՈՒՐ / ՈՐ ԱՆԳԻՆ ԳԵՐԵՏ (ԱՐԱՆ ՈՐ Կ(ԱՐԴԱՅՔ ԱՂՈԹՍ ՅԻՇԵՑԵՔ):

Համառոտ արձանագրություններ կան նաեւ «Նահատակ» կոչվող սրբավայրի[23] գերեզմանատան խաչքարերի վրա: Առաջինի ( 0,68x0,41x0,11) վերեւի մասը կիսակլոր է: Կենտրոնում մեծ խաչն է, իսկ ստորին մասում՝ երկտող արձանագրությունը՝ Խ(Ա)ՉՍ Պ(Ա)Ր(Ո)Ն / ԱՄԻՐԻՆ:

Երկրորդի կիսակլոր վերնամասը քիչ ավելի լայն է, որի ստորին մասում գրված է. Խ(Ա)ՉՍ / ԳՈՒԼ(Պ)ԷԿԻՆ:

Մյուս խաչքարը առաջիններից տարբերվում է ներքնամասի կոճղարմատ խոյաեղջյուրներով, որի ստորին պռնկին արձանագրված է. ԱՍ ՈՂՈՐՄԻ ԳՈՒԼ / (Ի) ՍՏԱՆԻՆ ԱՄ Կ(Ա) ՆԿՆԵՑԻ / ԶԽՉ:

Առանձնապես պատկերավոր է չորրորդ խաչքարը. այն հիմնական գծերով նման է հիշյալ երեքին, բայց աչքի է ընկնում փոքր խաչերը գրկող վառ արտահայտված գեղեցկակերտ, խոյաեղջյուրներով: Իսկ արձանագրությունը փորված է վերեւում, կենտրոնական խաչի հորիզոնական թեւերի արանքում. Խ(Ա)ՉՍ /ՊԱ / ՊԻՆ:

Հարանման վերջին խաչքարի արձանագրությունն է. ԽԱ /ՉՍՅ / ՈԳ / ՈՒ:

Բոլոր այս խաչքարերն իրենց կառուցվածքով վերաբերում են XIV-XV դարերին: Այդ ժամանակաշրջանին են բնորոշ նաեւ գերեզմանատան երկու այլ խաչքարերը, ինչպես նաեւ, մի այլ խաչքար՝ հուշարձանախմբից արեւելք, «Շենատեղ» վայրում, որոնք չունեն հիշատակագրեր: Այս գերեզմանատունը ուշագրավ է թերեւս ոչ այնքան խաչքարերով, որքան ճոխ պատկերաքանդակներ կրող տապանաքարերով: Այստեղից ներկայացվում է միայն երեք արձանագիր տապանաքար, քանի որ մյուսները կիսովին թաղված են հողի տակ:

23 Այս սրբավայրի անվանման հետ է կապված մի հետաքրքիր պատմություն: Ոչ հեռու անցյալում այստեղ կար մի խաչքար, որի վրա գրված էր. «Այստեղ թաղված գայլը փրկել է մանկանը»: Ավանդաբար տեղացիները պատմում են, որ ասպատակիչները տեղահան են արել բնիկներին, քշել հեռավոր վայրերը: Երբ նրանք վերադարձել են իրենց գյուղը, տեսել են գայլերի ոհմակին ընտելացած մի պատանու, որը շարժվում էր մի գայլի հետ: Պարզվում է, որ գյուղում մնացած երեխային փրկել եւ խնամել էր այդ գայլը: Հետագայում երեխայի կյանքը փրկող գայլին թաղել ու նրա վրա խաչքար են կանգնեցրել, գրելով վերոհիշյալ տապանագիրը:





Ձրվեր. Տապանաքար «Նահատակ» գերեզմանատանը 1693թ.



Տապանաքարի հակառակ կողմը

Առաջինը (1,4x0,76x0,25) որը գտնվում է գերեզմանատան արեւմտյան եզրում, դրվագված է բացառիկ ճոխ պատկերաքանդակներով, ուր թվում է ներկայացված է բարձրատոհմիկ իշխանի կյանքն ու կենցաղը: Կենտրոնի հեծյալ, զինավառ ասպետը նետ ու աղեղով պատրաստվում է խոցել նշանակետը: Տապանաքարի աջ անկյունում պատկերված են գորգի վրա նստած երաժիշտներ, որոնցից ձախ կողմի երաժիշտը աջ ձեռքով բռնել է դափը, իսկ ձախ ձեռքը դրել է գոտկատեղին: Աջ կողմի երաժիշտը երկու ձեռքերով գրկել է սազը: Ձախ անկյունում երկաթ կրող դարբինն է, որի աջ կողմում մեկը բարձրացրել է գավաթը: Ստորին մասում (ձախ անկյունում) գյուղացին աջ ձեռքով բռնել է եղջերուի սանձը, իսկ ձախ ձեռքով՝ մահակը: Աջ անկյունում պատկերված մարդը աջ ձեռքով բռնել է գինու հսկայական սափորը: Վերջինիս կողքին պատկերված է թեյնիկատիպ սափոր եւ գավաթ: Տապանաքարի եզրերը պատած են հյուսկեն զարդաքանդակներով:

Հետաքրքիր է ձեւավորված նաեւ հուշարձանի հյուսիսային նիստը, ուր չորս խորաններից յուրաքանչյուրում մեկական տարաչափ գեղեցկահյուս խաչեր են: Ստորին մասում դրվագված է երկլուծ արորավարի տեսարան:

Միատող արձանագրությունը փորագրված է քարի հյուսիսահայաց լանջին. (ԱՅՍ Է) Հ(ԱՆ)ԿԻՍՏ Մ(Ա)ԶՐ Վ(Ա)Ն Թ(Ի)Վ Ն ՌՃԽԲ /1693թ./


Ջրվեր. Տապանաքար «Նահատակ» գերեզմանատանը, XVIIդ

Հաջորդ տապանաքարի ստորին մասում արձանագրված է.ԱՅՍ Է Հ(Ա)ՆԳ(ԻՍ)Տ Պ(Ո)Ղ(Ո)ՍԻՆ ՈՐ ՎԱԽՃԱՆԵ(ՑԱՒ) ԹՎԻՆ ՌՃԻԶ /1677թ./: Աջ անկյունում դրվագված է՛ Պողոսը՝ ձեռքերը գոտկատեղին: Արձանագրությունից վերեւ, եռախորաններում նրբահյուս, հավասարաթեւ խաչեր են, իսկ վերին եւ ձախ կողմի եզրամասերն ունեն հյուսքազարդեր:

Պողոսի կողքին է ամփոփված որդին՝ Միրզա խանը, որի տապանաքարը եւս պարունակում է հետաքրքիր քանդակներ: Հեծյալ ննջեցյալը աջ ձեռքով բռնել է ձիու սանձը, ձախով՝ գավաթը:

Ստորին մասի արձանագրությունն է. Տ(Ե)Ր ՊՈՂՈՍԻ ՈՐԴԻ ՄԻՐԶԱԽԱՆՍ թվին ՌՃԼԲ /1683/:

Մյուս տապանաքարը, որի ստորին մասը (արձանագրությամբ հանդերձ) խրված է գետնի մեջ, աչքի է ընկնում իր մեծությամբ. երկարությունը 187սմ է, բարձրությունը՝ վերգետնյա մասում՝ 73, հաստությունը՝ 29: Աջ անկյունում պատկերված է գավաթը ձեռքին հեծյալ, նրա դիմաց՝ ձեռք–ձեռքի տված մարդիկ (պարի տեսարան): Ձախ կողմի գեղեցկազարդ երկու խորանների մեջ կան մեկական գեղեցիկ տարաչափ խաչեր՝ եռանկյունաձեւ եւ կլոր վերջույթներով:

Հետաքրքիր ու ուշագրավ խաչքարի օրինակ է «Սարե խաչ» վայրի խաչքարը, որը գտնվում է գյուղից մոտ 5կմ արեւմուտք: Այն տեղական սպիտակ քարից է՝ դրվագման պարզագույն լուծումներով: Կենտրոնում մեծ



(բարձրությունը՝ 84սմ), թեւատակին փոքր չափերի խաչեր պարունակող խաչքարը (1,55x0,50x0,19) XIIդ. հնություն ունի:

Խնապաս գյուղի տարածքի հուշարձանախմբերից մեկն էլ գյուղից մոտ 4կմ արեւմուտք է, Վերին Ղլիջբաղ վայրում: Ներառում է գյուղատեղի, գերեզմանոց եւ եկեղեցի: Վերջինս գյուղի շրջակայքի եկեղեցիներից առավել լավ պահպանվածն է: Հուշարձանը համառոտ հիշատակված է Մ.Բարխուտարյանցի գրքում[24]: Այն թաղակապ, միանավ, ուղղանկյուն հատակագծով շինություն է, արեւելյան մասում ունի կամարակիր մուտքերով ավանդատներ: Մկրտության ավազանի ճակատին դրոշմված է մի խաչանշան:

Տեղանքի թելադրանքով միայն՝ 2մ բարձրությամբ մուտքը բացվում է հարավից:

Ի տարբերություն բուն հուշարձանի, որը կառուցված է տեղական սպիտակ, անմշակ քարերով եւ ավազաշաղախով, մուտքը, ինչպես նաեւ խորանի, սրահի եւ ավանդատների պատուհանները կառուցված են սրբատաշ քարերով: Դռան ճակատակալ քարի վրա կա 186ԱՄ մակագրությունը, որը, հավանաբար, գրվել է նախկին, փայտաշեն[25] եկեղեցու վերաշինման ժամանակ, ըստ երեւույթին, XX դարի սկզբներին՝ ի նշանավորումն


Հակոբ Քյոխվայի տապանաքարը «Երեշենի» գերեզմանոցում

աղոթարանի տարիքի: Եկեղեցին շրջապատող գերեզմանոցը XVIII-XXդդ. է եւ առանձին կարեւորություն չունի:

24 Արցախ, էջ 165:
25 Նույն տեղում, էջ 165:

Խնապատ գյուղից 2,5 կմ արեւմուտք, «Երե շեն» հնավայրն է, որտեղ բնակվել են այժմյան խնապատցիների նախնիները[26]: Գյուղատեղին ընդգրկում է կիսավեր, XIX դարի Ս.Աստվածածին եկեղեցին, գերեզմանոցը եւ մի քարուկիր մատուռ:

Գերեզմանատունը վերաբերում է XII-XX դարերին: Բացի անմշակ խաչապատկերներ կրող տապանաքարերից, այստեղ հիշարժան է Հակոբ Քյոխվայի տապանաքարը, որի վրա նրա հիշատակագիրն է. ԱՅՍ Է ՏԱՊԱՆ ՅԱԿՈՎԲ / ՔՈԽՎԱԻՆ ՈՐԷ ՈՐԴԻ ՂԱ / ԶԱՐԻՆ ՍԵՎՈՒՆՑ Վ՜Խ Ճ՜Լ / 1853 ԱՄԻ:

Նրբահյուս զարդանախշով երիզված տապանաքարի կենտրոնում ձիու վրա նստած գյուղապետի հարթաքանդակն է իր ճոխ հանդերձներով (գոտկից կախված է երկար թուր ու դաշույն, աջ ձեռքով բռնել է գինու գավաթը՝ ձախով վեր պարզած բազե), որի առջեւից ձիու սանձը քաշում է սպասավորը:


Խաչքար «Հարթ» վայրում (XII - XIII դդ)


Խաչքար, XIIIդ, Խնապատ գյուղից 1.5կմ արեւմուտք, «Բուշու Պուն» վայրում

26 Խնապատցիների նախնիները սկզբում, հնագույն ժամանակներից սկսած, ապրում էին «Ներքին շեն» վայրում (այժմյան գյուղից 1կմ հարավ–արեւմուտք), որը ինչպես ցույց են տալիս տեղանունների պատմա–համեմատական ուսումնասիրությունները, Ղսապատ անունն էր կրում: Քաղաքական հանգամանքների բերումով բնակիչները վերաբնակվեցին հիշյալ «Շենատեղ» վայրում, որն այն ժամանակ, ինչպես վկայում է Խնապատ գյուղի բնակիչ Ազիզբեկ Հակոբյանը, Ճիրվեր (Ջրվեր, Ջրհոր) անունն էր կրում: Այս վկայությունը հաստատվում է ՀՀ Պատմության պետական արխիվում պահպանված՝ «Արցախի թեմի վերաբերյալ զանազան կալվածագրերի եւ պայմանագրերի ժողովածուի» մեջ ՌճժԶ / 1667/ թ. «Խալխեն խարճերում» (ժողովրդի հարկեր) զետեղված տեղեկությամբ (Տե՛ս ՀՊԿՊԱ, ֆ. 57, Ց.1, Գ.3, Թ.113): Հետագայում ջրվերցիները տեղափոխվեցին եւ բնակություն հաստատեցին «Երեշենում», որը XVIII դ. վերջերին կրում էր Խնապատ անվանումը:

Նշված արխիվում հիշատակություն կա Խնապատ գյուղի տարածքում գտնվող «Վաղվան» գյուղատեղիի մասին, որը XVIII դարում բնակեցված էր:

27 Ղ.Աղայան, Երկերի ժողովածու, հատ.2, Երեւան, 1962, էջ 13-14: Տե՛ս նաեւ Գրական ժառանգություն, 1-ին գիրք, Երեւան, 1940 (Ղ.Աղայանի 1881թ. նոյեմբերի 15-ի նամակը Միքայելին, էջ 471-472):



Այս գերեզմանոցում են թաղված նաեւ Միքայել քահանա Բադալյանցը (1901) կինը՝ Կայանեն (1893) որդին՝ Գաբրիելը, վերջինիս կինը՝ Գյուլլին (1922) եւ ուրիշներ, որոնց մասին հիշատակել է Ղ.Աղայանը[27]:

Գերեզմանոցի հնագույն արձանագիր հուշարձանը մատուռն է՝ կառուցված Դավիթ երեցի եւ նրա որդու՝ Գրիգորի կողմից՝ 1224թվականին.

ԵՍ ՏԱՎԻԹ ԵՐԱՑ ԵՒ ՄԻՆ ՈՐՏԻ Ի/Մ ԳՐԻԳՈՐ ԵՐԱՑ ՇԻՆԵՑԱՔ ԶԵԿԵՂԵՑԻՆ ԲԱՐԵԽԱՒՍ ՀՈԳՈՅ ԻՄՈՑ / ՅՈՐՔ ԿԱՐԴԱՅՔ Ի ՅԱՂԱԹՍ Հ(Ի)ՇԵՑԵՔ- ՔՍ ԶՀԻՇԵ (Ս)Զ(Ի)Ք ԻՒՐ ԱՐՔԱՅՈՒԹԻՒՆ /ՈՀԳ/ -1224թ.[28]:

Կարեւոր են նաեւ «Բուշու Պուն» եւ «Հարթ» վայրերի խաչքարերը՝ բուսական զարդամոտիվներով (նաեւ թզի), որոնք վերաբերում են XII-XIII դարերին:

Վերջին հուշարձանախումբը, որը գտնվում է գյուղից մոտ 3,5 կմ հյուսիս-արեւմուտք «Վաղվան» տեղամասում, ներառում է հնագույն գյուղատեղի, ավերակ եկեղեցի, խաչքարեր եւ գերեզմանոց (գյուղատեղիից 1կմ հարավ, «Քարեն գլուխ» վայրում), ուր կա մեկ խաչքար: Ճարտարապետական տեսակետից փոքր արժեք ունեցող այս խաչքարերը կարելի է դասել 13-14-րդ դարերի հուշարձանների շարքին:

Շիկաքար ամրոցի շրջակայքի լավագույն հուշարձաններից է արդի Սարդարաշեն գյուղի գործող գերեզմանոցի XIIIդ. խաչքարը, որը կարելի է հայկական խաչքարակերտման դասական օրինակներից մեկը համարել: Քանդակագործությամբ այն նման է Քարագլխի գերեզմանատան զույգ խաչքարերին եւ չի բացառվում, որ այն նույն վարպետների ձեռակերտը լինի: Խաչքարի ստորին մասում պատկերված մարդը աջ ձեռքով բռնել է գավաթը, իսկ ձախով մատնանշում է մայր հողը եւ լուսատուներ խորհրդանշող շրջանակները: Պատկերաքանդակի աջ կողքի խաչը ամբողջական է դարձնում մարդ–բնության զուգորդության հավատամքը[29]:


Խաչքարերի «Վաղվան» գյուղատեղիում


Խաչքարեր «Վաղվան» գյուղատեղիում

Հազվադեպ պատկերաքանդակներ կան Փառուխ գյուղի «Կարմիր» աղբյուրի մոտ գտնվող «Կալեն խութ» վայրի

28 Տե՛ս ՀՊԿՊԱ, ֆ. 319, Ց.1, Գ.9:

29 Ուշադրություն է գրավում նաեւ գյուղի գլխախաչի գիրը. Ի ԹԻՆ ՋԻԳ /1474թ./ ԵՍ ԹԱԹԼՈՒ ԿԱՆԳՆԵՑԻ ԶԽԱՉՍ (ՀՊԿՊԱ, ֆ.319, Ց.1, գ. 9):

խաչքարի վրա (1,6x0,54x0,49): Խաչքարն ունի հյուսածո քանդակներով լայն քիվ: Ստորին մասում կենտրոնական խաչաթեւի երկու կողմերում եւ նրանցից ներքեւ դրվագված են հյուսքերով երկու կանայք եւ փոքր աղջնակ: Կինը ձախ ձեռքով կարծես թե գրկել է որովայնը, իսկ մյուսով բռնել է ուսագոտուց, որը, հավանաբար, խորհրդանշում է երկունքը: Կնոջ եւ աղջկա գլխավերեւի հավերժության նշանները խորհրդանշում են կյանքի հարատեւությունը երկունքի արդյունքով՝ մայրության առկայությամբ:



Փառուխ գյուղի «Կալեն խութի» խաչքարը

Ամրոցի շրջապատի մեզ հետաքրքրող վերջին հուշարձանը Խրամորթ գյուղի եկեղեցին է՝ համանուն գյուղատեղիում, ամրոցից 1կմ հարավ-արեւելք: Հուշարձանը իր կառուցվածքով նման է Վերին Ղլիջբաղի եկեղեցուն՝ ուղղանկյուն հատակագծով, թաղակապ ծածկով՝ բայց տարբեր չափերով (16,9x6,73) ու արտաքին հարդարանքով: Տեղանքի բերումով այստեղ եւս մուտքը հարավից է, որի ճակատաքարին եկեղեցու կառուցման թիվն է՝ 1800:



Սարդարաշենի գործող գերեզմանատանը գտնվող խաչքարի ներքնամասը

Այսպիսով, Շիկաքար ամրոցի ինչպես նաեւ նրա շրջակայքի պատմահնագիտական տեղավայրերի հինավուրց հուշարձանների արձանագրությունները, կառուցողական արվեստն ու ճարտարապետական սկզբունքները ակնաբախորեն ցույց են տալիս, որ



Խրամորթ գյուղատեղիի եկեղեցին



Շիկաքարը որպես ամրոց հիմնադրվել է մոտ 3,5 հազար տարի առաջ եւ արդեն մ.թ. V-VIIդդ. դարձել է անչափ կարեւոր ռազմավարական կենտրոն: Հետագայում, պատմական իրադարձություններին զուգընթաց այն վերակառուցվել ու ամրացվել է, հարմարեցվել նոր ժամանակների ռազմարվեստի պահանջներին, որի շնորհիվ այն համարվել է Հայաստանի անառիկ ու իշխող ամրոցներից մեկը:



Խոյակ Նորագյուղում, բերված Սարդարաշենի «Ցրտաջուր» վայրից (VI դ.), տեղաշարժված խաչքար (IX դ.)

# Բաղարայի բերդը

Բաղարա գետի ավազանը վաղ ժամանակներում եւ միջնադարում եղել է Խաչեն գավառի խիտ բնակեցված վայրերից: Այդ են վկայում բազմաթիվ հնագիտական հուշարձանները, գյուղատեղիներն ու վանական համալիրները, եկեղեցիներն ու գերեզմանոցները, որոնք սփռված են հատկապես Բաղարա գյուղի տարածքում: Այստեղ էր գտնվում նաեւ ենթաշրջանի հոգեւոր առաջնորդարանը, իսկ ներկայիս Լեւոնի մոտ գտնվող


Ամրոցի ընդհանուր տեսքը հյուսիս-արեւելքից



«Դարդաս» պաշտպանական բնակավայրն ու առանձին վիմական արձանագրություններ վկայում են տեղում իշխանական ապարանքի առկայության փաստը:


Ամրոցի ընդհանուր տեսքը հյուսիսից

Բնականաբար, նման խտաբնակ շրջանը պետք է ունենար պաշտպանական կառույցներ եւ հոգար ոչ միայն իր պաշտպանության մասին, այլեւ վտանգի դեպքում ապաստան լեռնային բարձունքներում ծվարած մյուս ամրոցներին: Դրանցից է Բաղարայի բերդը: Ամրոցը գտնվում է Բաղարա գյուղից մոտ 4կմ հարավ-արեւմուտք, համանուն գետի աջափնյակում վեր խոյացած, ծովի մակերեւույթից 1353մ բարձրությամբ ժայռի վրա, որն ունի հյուսիս-հարավ ուղղվածություն: Ամրոց – լեռնագագաթը զբաղեցնում է 200քառ. մետրից քիչ ավելի մակերես (չափերը՝ 24x9մ): Տեղանքը հիմնականում անհարթ է, խորդուբորդ՝ դեպի հարավ իջվածքով ու թեքությամբ: Ժայռագագաթը գրեթե բոլոր կողմերից շրջափակված է




Ամրոցի գագաթնամասի ընդհանուր տեսքը հարավ-արեւելքից

եղել 1,2մ հաստությամբ պարսպապատերով, որի 70 տոկոսը պահպանվում է կիսավեր: Համեմատաբար լավ վիճակում են արեւելյան, հարավ-արեւելյան հատվածները: Արեւելակողմի պատն ունի 7մ երկարություն եւ 1,8մ բարձրություն: Պարսպի ստորին մասում 1,1մ լայնությամբ կամարակիր անցք է բացված, որը նման է Կաչաղակաբերդի նույնատիպ անցքին: Սակայն, եթե Կաչաղակաբերդում այն ծառայում էր



Ամրոցի մուտքը



Ամրոցի ընդհանուր տեսքը հարավից

հիմնականում որպես քարեր գլորելու «կրակակետ» (նկատի ունենալով դեպի ամրոցամուտք եղած նրա տեղադրությունը), ապա այստեղ, կարծում եմ, դրա անհրաժեշտությունը չկար, քանի որ այդ հատվածից ամրոցը լիովին անմատույց է՝ պաշտպանությունն ապահովված բնականորեն:Այստեղ այն, կարծում եմ, ծառայել է իբրեւ գաղտնուղու մուտք: Պաշարման դեպքում կարելի է այդտեղից աննկատ դուրս գալ, անսպասելի հարվածել թիկունքից, հարկ եղած դեպքում՝ նահանջել կամ ջրի պաշար վերցնել: Ի դեպ,

Հյուսիսային պարսպապատը





ներկայումս տիրում է այն կարծիքը, թե բերդից մինչեւ գետ գոյություն ունի ստորգետնյա ուղի, որից օգտվել են ամրոցի պաշտպանները: Այդպես են կարծում ոչ միայն տեղի բնակիչները, այլեւ ժամանակակից առանձին հեղինակներ՝ հենվելով Մ.Բարխուտարյանցի հաղորդած տեղեկության վրա՝ «գիւղի հարաւային հանդէպ գետակի աջ կողմում մի լեռնակի գլխին փոքրիկ եւ հին բերդակ, որից գետնափոր ական կայ մինչեւ գետակն»[1]:



Հատված պարսպից (ներքուստ), ստորին մասում՝ գաղտնուղու մուտքը

Սակայն, իմ կողմից կատարված տեղազննության ընթացքում նման անցք չի հայտնաբերվել: Կարծում եմ, ամրոցից մինչեւ գետ (1,5կմ) գետնափոր ական հազիվ թե լիներ: Հնարավոր չէ մի ողորկ քարաժայռ փորել այդքան երկարությամբ: Սովորաբար Արցախի գրեթե բոլոր բարձրադիր (այդ թվում ավելի հզոր) ամրոցներում կառուցվում են ջրամբարներ, որտեղ հեղուկը կուտակվում էր անձրեւաջրերից կամ ձնհալներից: Չի բացառվում նման ջրամբարի առկայությունը նաեւ այս ամրոցում, սակայն ներկայիս վիճակը (ավերակված ու մացառուտներով ծածկված) հնարավորություն չի տալիս



Հատված հյուսիս-արեւմտյան պարսպից



Պարսպապատի տեսքը հարավ-արեւմուտքից

1 Մ.Բարխուտարեանց, Արցախ, էջ 157: Թվում է Մակար եպիսկոպոսը անձամբ տեղում չի եղել եւ հենվել է մարդկանց պատմածների վրա: Այլապես նա մի երկու խոսք կասեր ոչ միայն ամրոցի կառուցվածքի, այլեւ նրա մոտ գտնվող մատուռի մասին:



Ամրոցամերձ մատուռի ընդհանուր տեսքը

պարզելու խնդիրները: Չեն նշմարվում նաև կացարանները, որից եզրակացնել կարելի է, թե ամրոցը մշտապես բնակեցված չի եղել և միայն վտանգի դեպքում են մարդիկ ապաստարվել այստեղ, դիմագրավելով թշնամուն: Խաղաղ պայմաններում այն ծառայել է որպես դիտակետ՝ հսկելով Բաղարայի գետահովիտը, ընդհուպ մինչև Կարկառի մերձակա տարածքները, մասնավորապես Խաչենի իշխանության վարչական կենտրոն կամ Խաչենագետի հովիտ տանող ուղին: Ամրոցի մուտքը արևմտյան կողմից է՝ ավերված: Նրա և հարակից պարսպապատի քարերը թափված են արևմտահայաց լանջին:



Մատուռի արևելյան պատը

Դատելով ամրոցի հատակագծային հորինվածքից և շինարարական առանձնահատկություններից, այն պետք է վերագրել XII-XIII դարերին:

Մի նկատառում ևս. հեղինակները և ընդհանրապես այս ամրոցով հետաքրքրվողները հուշարձանը կոչում են «Բաղարայի բերդ» կամ պարզապես «Բերդ»՝ առանց որոշակի անվան: Ելիզավետպոլի նահանգի 1904թ. քարտեզում ամրոցին մերձ առկա է «ԹՈՐՎՈՒՏՊՐՑ» տե-ղավայրը, որը, կարծում եմ, ամրոցի հնագույն անվան



աղավաղումն է: Ելնելով տեղանունների ձևավորման առանձին սկզբունքներից, այս, առաջին հայացքից անիմաստ անվանումը ստուգաբանում եմ. «գաս» (համապատասխանում է հայկական և օտար աղբյուրներում հիշատակվող կաս, քաս, խաս և այլն բառերին) նշանակում է սուրբ, պաշտամունք և այլն: «Մախ»–ը (ռուսերեն) պետք է ուղղել «մահ», իսկ «պերտ–ը՝ բերդն է:



Ամրոցամերձ «Քառասուն կույս» («Քառասուն սուրբ») լեռան ընդհանուր տեսքը

Այսպիսով, այս անվանումը պետք է սրբագրել «Քասմահբերդ» (այսինքն՝ «Սուրբմահաբերդ» կամ «Սուրբ զոհաբերդ»):

Ի դեպ, վերջերս տեղեկացա, որ գյուղում պահպանվում է ամրոցի կործանման հետ կապված մի ավանդություն, ըստ որի բերդի պաշտպանները չդիմանալով թշնամու գրոհներին, ապաստարվում են ստորգետնյա գաղտնուղու մեջ, որը հայտնաբերում է թշնամին, երկու կողմերից խցանում ելքն ու մուտքը, ուր նահատակվում են պաշտպանները:

Այս ավանդությունը ինչ–որ չափով լրացնում է վերոհիշյալ ստուգաբանության ճշմարտացիությունը, թեև, վերակրկնում եմ, բուն բերդից դեպի գետը ստորգետնյա ուղի գոյություն չունի:

Արցախում բազմաթիվ լեռներ, գետեր, անգամ հանդամասեր

սրբացված են եղել եւ պաշտվել ժողովրդի կողմից՝ զոհեր մատուցվելով: Կարծում եմ, այս ժայռը եւս սրբացված է եղել հեթանոս նախնիների կողմից եւ զոհամատույցի արարողության անվանումն անցել է ամրոցին:

Չի բացառվում նաեւ ոչ երկրորդական մեկ այլ նույնիմաստ ստուգաբանում՝ «Գասմախ»-ը դիտելով «Գասբագի» (հմմտ. Կազբեկ) ձեւափոխության՝ «բագ»-աստված իմաստով, սուրբ, աստվածային նշանակությամբ:

Ելնելով վերոհիշյալից, «Բաղարայի բերդ»–ը կարելի է վերջնականապես անվանել «Կասաբերդ» (կուսաբերդ–սուրբ բերդ) կամ «Զոհաբերդ» (հմմտ. Մահկանաբերդ Գուգարքում)[2]:

Հարկ է նշել նաեւ, որ քրիստոնեական քարոզչության եւ ընդհանրապես հոգեւոր կենտրոնները (տվյալ դեպքում՝ Բաղարան) չեն կազմակերպվել պատահական վայրերում, այլ նախկին հեթանոսական պաշտամունքային կենտրոններում:

Ամրոցակալ ժայռի հարավ–արեւմտյան եզրին գտնվում է կիսավեր, անտաշ ու կոպտատաշ քարերով ու կրաշաղախով 6,4x4,4մ չափերի մատուռ, որը կառուցվածքով բերդի ժամանակակիցն է: Պատերը պահպանվում են 2,5-3մ բարձրությամբ: Մուտքը հարավ–արեւմուտքից է՝ 1,3մ լայնությամբ: Հետեւաբար ժողովուրդն այստեղ ոչ միայն պատսպարվել, այլ նաեւ բավարարել է հոգեւոր–պաշտամունքային պահանջները:

2 Այդ մասին ավելի հանգամանորեն իմ «Արցախ–Ուտիք. պատմական տեղանուններ» ուսումնասիրության մեջ:



## Կաչաղակաբերդ

Խաչենագետի ձորահովտի նշանավոր ամրոցներից է: Ամրոցի Կաչաղակաբերդ անվանումը կապվում է այն ավանդության հետ, թե անցյալում, պարտություն չտեսած եւ համառ դիմադրությամբ հռչակված ամրոցի պաշտպանները, երկար ժամանակ ջուր եւ սննդամթերք չունենալով, նահատակվում են, բայց չեն հանձնվում թշնամուն: Իսկ երբ կաչաղակներն ու մյուս գիշատիչ թռչունները սկսում են աղմուկ-աղաղակով պտույտներ գործել ամրոցի վրա, թշնամին կռահում է, որ պաշտպանները կենդանի չեն:

Ամրոցի ընդհանուր տեսքը հյուսիս-արեւելքից



Ամրոցը ընդհուպ մինչեւ Xդ. կոչվում էր Խաչենի բերդ[1], որից էլ տեղի իշխանությունը ստացել է Խաչենի իշխանություն անվանումը[2]: XIIIդարի մի ձեռագիր հիշատակարանում ամրոցը կոչվում է Սխսաղան Հավքախաղաց[3], իսկ սկսած XVդ.՝ Կաչաղակաբերդ[4]:

1 Մ.Կաղանկատուացի, Պատմութիւն Աղուանից աշխարհի, Երեւան, 1983, էջ 340, Մ.Բարխուտարեանց, Արցախ, Բագու, 1895, էջ 425, Մ.Հովհաննէսեան, Հայաստանի բերդերը, Վենետիկ, 1970, էջ 452, Մ.Չամչյանց, Հայոց պատմություն, հ. Գ, Երեւան, 1984, էջ 210 եւ այլն:
2 Բ.Ուլուբաբյան, Խաչենի իշխանությունը X-XVI դարերում, Երեւան, 1975, էջ 45:
3 Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ ԺԳ, Երեւան, 1984, էջ 199:
4 Ա.Բեկնազարեանց, Գաղտնիք Ղարաբաղի, Ս.Պետերբուրգ, 1886, էջ 90:

Ամրոցի ընդհանուր տեսքը արեւելքից





Կաչաղակաբերդը պատմահնագիտական առումով սպառիչ ուսումնասիրության չի ենթարկվել: Այն կարճառոտ պատումով ներկայացրել են Ս.Ջալալյանցը, Մ.Բարխուտարյանցը, Բ.Ուլուբաբյանը, Շ.Մկրտչյանը[5] եւ ուրիշներ: Ամենավաղ հիշատակագիրը Մովսես Կաղանկատվացին է. նա ամրոցի մասին ակնարկում է հայոց Առանշահիկ եւ պարսից Միհրական տոհմերի մրցակցության դրվագում: IXդ. առաջին կեսերին, երբ այս տոհմերի միջեւ բորբոքվել էր ժառանգական մրցությունը, Ներսեհ անունով մի իշխան Դադի վանքի մոտ՝ Խորաձորում, սպանում է Միհրական տոհմից Վարազ-Տրդատ իշխանին եւ նրա որդի Ստեփանոսին, նպատակադրվելով ոչնչացնել այդ տոհմի արական սերունդը[6]: Սպանվածի կինը, զինվելով այրական քաջությամբ, «առեալ զմնացեալ դուստրն իւր Սպրամ գիշերահեն տաժանելի ուղեւորմամբ մտանէ ի բերդն Խաչենայ՝ բարուրս խորհեալ տան իւրում ամուսնացուցանէ զՍպրամ Ատրներսեհի՝ Սահլի որդւոյ»[7]:

Ատրներսեհին ու նրա ժառանգներին աղբյուրները հիմնականում կապում են Վերին Խաչենի ու Ծար գավառի հետ[8], որտեղ «Ատրներսէհ շինէ զբերդն Հանդու եւ զապարանս իւր եղեալ ի գիւղն, որ կոչի Վայունիք»[9]: Բացի այդ, IXդ. Խաչենի տարածքում, մասնավորապես Թարթառ գետի աջ ափին, Դադի վանքի դիմաց[10] հիմնադրվում է մի այլ ամրոց, որը նույն Հավքախաղաց անունն է կրում[11]: Երկու Հավքախաղացների առկայությունը,

5 Ս.Ջալալեանց, Ճանապարհորդութիւն ի Մեծն Հայաստան, մասն Ա, Տփխիս, 1842, էջ 195, Մ.Բարխուտարեանց, նշվ. աշխ., էջ 197-198, Բ.Ուլուբաբյան, նշվ. աշխ., էջ 136, 145, Շ.Մկրտչյան, Լեռնային Ղարաբաղի պատմաճարտարապետական հուշարձանները, Երեւան, 1985, էջ 24-25 եւ այլն:

6 Տե՛ս Մ.Կաղանկատուացի, էջ 340, Ստ. Օրբելեան, Պատմութիւն նահանգին Սիսական, Թիֆլիս, 1910, էջ 158, Լեո, Հայոց պատմություն, հ.2, Երեւան, 1967, էջ 419 եւ այլն: VIIդ. սկզբին Պարսկաստանից գալիս է Միհրական տոհմի մի շառավիղը, դավով ու նենգությամբ կոտորում Ուտիքի Գարդման գավառի տեր Առանշահիկների տասնյակ տղամարդկանց եւ գրավում նրանց տիրույթները: Այսպես սկսվում է բնիկ հայկազուն Առանշահիկների եկվոր՝ հայացած Միհրանյանների դաժան մրցակցությունը (տե՛ս Բ.Ուլուբաբյան, Դրվագներ հայոց արեւելից կողմանց պատմության, Երեւան, 1981, էջ 129-130):

7 Մ.Կաղանկատուացի, էջ 340:

8 Բ.Ուլուբաբյան, Խաչենի իշխանությունը..., էջ 62, 71, 73: Տե՛ս նաեւ Սողք գավառի Մեծ Մազրա գյուղի 881թ. արձանագրությունը (Ս.Բարխուդարյան, Միջնադարյան հայ ճարտարապետներ եւ քարգործ վարպետներ, Երեւան, 1963, էջ189):

9 Մ.Կաղանկատուացի, էջ 340:

10 Մ.Բարխուտարեանց, նշվ. աշխ., էջ 211, 427:

11 Կիրակոս Գանձակեցին, խոսելով Խաչենի կողմերում մոնղոլների արշավանքների մասին, գրում է, որ Խաչենի բնակիչներն ամրացել են ապահով վայրերում, «...զոր վասն դժուարութեան տեղւոյն հաւախաղաց կոչէին (տե՛ս Կ.Գանձակեցի, Պատմություն Հայոց, Երեւան, 1961, էջ 267): Սա ըստ էության հիմք է տալիս ասելու, որ դժվարմատչելի ու բարձրադիր ամրոցները տեղացիները կոչել են Հավքախաղացներ:

Ամրոցի ընդհանուր տեսքը հյուսիսից



ինչպես և Ատրներսեհի ու նրա ժառանգների տիրապետությունը Ծարում և Վերին Խաչենում թյուրիմացության մեջ է գցել ուսումնասիրողներին, որոնք պատմագրության մեջ առանձնակի հետազոտման նյութ չդարձած ամրոցի տեղադրության վերաբերյալ հայտնել են իրարամերժ կարծիքներ: Մ.Բարխուտարյանցը, ելնելով ժամանակագրի վերոհիշյալ վկայությունից, Կաչաղակաբերդը իրավացիորեն տեղադրում է Խաչենագետի աջ կողմում, բայց առանց հիմնավորման նույնացնում աղբյուրներում հիշատակվող Խաչենի բերդի հետ: Նա միաժամանակ ժխտում է ամրոցի Հավխախաղաց անվանումը, գտնելով, որ վերջինս Դադի վանքի դիմացի ամրոցն է, Գրիգոր Ատրներսեհյանի կառուցածը[12]: Նույն կարծիքին է Շ.Մկրտչյանը, որը ամրոցն անվանում է Լևոնաբերդ`[13] վերակառուցված Կիլիկիայի թագավոր Լևոն Ա-ի ծախսերով14: Լեոյի և Րաֆֆու գործերում[15] ամրոցը հիշվում է Սաղսաղան անունով, որը Ս.Ջալալյանցի կարծիքով Հավխախաղացի թուրքերեն անվանումն է[16]: Ճիշտ չհամարելով Մ.Բարխուտարյանցի Հավխախաղացը նշված վայրում տեղադրելը[17] և չընդունելով

12 Մ.Բարխուտարեանց, նշվ. աշխ., էջ 197-198, 211, 425, 427:

13 Շ.Մկրտչյան, նշվ. աշխ., էջ 37:

14 Գ. Տեր-Հովհաննիսյանց, Բաղդասար մետրոպոլիտ Հասան-Ջալալյանցի համառոտ կենսագրությունը («Փորձ», 1880, N5, էջ 134, ծան. 2), Բ.Ուլուբաբյան, Խաչենի իշխանությունը..., էջ 248, Ս.Ջալալեանց, Ճանապարհորդութիւն..., մասն Բ, Տփխիս, 1858, էջ 214:

15 Լեո, Իմ հիշատակարանը, Շուշի, 1890, էջ 355, Րաֆֆի, Խամսայի մելիքությունները, Վիեննա, 1906, էջ 5:

16 Ս.Ջալալեանց, նշվ. աշխ., էջ 195:

17 Բ.Ուլուբաբյան, Խաչենի իշխանությունը...., էջ 136:



Ամրոցի տեսքը հարավից



Կաչաղակաբերդ-Խաչենի բերդ նույնացումը, Բ.Ուլուբաբյանը գտնում է, որ Կաչաղակաբերդը նույն Հավխախաղացն է` Պատարա և Քոլատակ գյուղերի միջև[18], իսկ Խաչենի բերդը գտնվում է Թարթառ-Տրտուի ափին[19]:

Ելնելով տեղում կատարած զննումներից ու աղբյուրների պատմահամեմատական ուսումնասիրությունից, եկանք այն համոզման, որ Խաչենի բերդը նույն Կաչաղակաբերդն է և կարող է տեղադրված լինել միայն Ներքին Խաչենի տարածքում (Կարկառ և Խաչեն գետերի միջև), որը բացատրվում է հետևյալ նկատառումներով:

1.Ներքին Խաչենի վերոհիշյալ տարածքը ոչ միայն Խաչենի հնագույն վարչական կենտրոնն էր, այլև արաբական տիրապետության ժամանակաշրջանի պատմագրության մեջ հիշատակվող Հայոց արևելից կողմանց նշանավոր քաղաքական գործիչների օրրանը: Հնագիտական պեղումներից հայտնաբերված բազմաթիվ գտածո զինատեսակները[20] վկայում են, որ նշված հատվածը, լինելով երկրամասի ռազմական կարևոր կենտրոններից մեկը, իրոք, դարձել էր իշխանների նստավայրը: Այստեղ են գտնվում նաև նշանավոր վանքերն ու վանական համալիրները, հին ու շատ կարևոր նշանակության հայտնի ամրոցները:

2. Խաչենի ձորակում, Խաչեն անունը հավաստող գետակի

18 Նույն տեղում:

19 Նույն տեղում

20 К. Х. Кушнарева, некоторые оамятники эпохи поздней бронзы в Нагорном Карабахе (Советская археология 1957, N 12, էջ 143-145):



Ամրոցի ընդհանուր տեսքը հարավ-արեւմուտքից

շրջակայքում քիչ են վաղ միջնադարյան հայտնի ամրոցները, այնպիսիք, որոնք իրենց դիրքով, անառիկությամբ ու հատուկ նշանակությամբ (իշխող դիրքը Կարկառ-Խաչեն կարեւոր ռազմառեւտրական ճանապարհի նկատմամբ) համեմատվեին Կաչաղակաբերդի հետ:

Հայտնի է, որ ավատական իշխանության պայմաններում պաշտպանության գործում շատ հուսալի դեր էին կատարում դղյակները՝ իշխանի աթոռանիստ բնակավայրերը, որոնք, բացի ռազմապաշտպանական դեր խաղալուց, նեցուկ էին ֆեոդալ իշխանի տիրապետության համար[21]: Չպետք է մոռանալ, որ Կաչաղակաբերդը, միաժամանակ, Ներքին Խաչենի վաղ միջնադարի ամենանշանավոր իշխանական դղյակն էր, որի մասին տեղեկություն կա հայերեն ձեռագրերի հիշատակարաններում[22]:

3. Երկու ամրոցների նույնացումը հիմնավորելու համար կարեւոր նշանակություն ունի նաեւ մոնղոլների՝ Խաչենագետի հովիտ կատարած արշավանքի ուղու պարզաբանումը: Պատմական տեղեկությունները հաստատում են, որ մոնղոլ-թաթարները Խաչենի կողմերն են ասպատակել

21 П. Закарая, Крепостные сооружения Картли, Тбилиси, 1968, էջ 6:

22 Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ ԺԳ, էջ 199:



հարավ-արեւելքից, հետեւաբար՝ Կարկառ գետի ուղղությամբ: Չարմաղանի եղբայր Ջոլա զորապետը 1238թ. մտնում է Խաչենի սահմանները, «ուր էր ամրոցն Խաչենոյ, յավարի էառ զբազում տեղիս»[23]: Հասան-Ջալալ իշխանը այդ տեսնելով, իր բնակիչներով հետ է նահանջում ու ամրանում Գանձասարի դիմացի Խոխանաբերդում[24]:

4. Ամրոցամերձ Քոլատակ գյուղը ի սկզբանե Խաչեն անունն էր կրում, որի մասին վկայում է, օրինակ, տեղանունների բառարանում զետեղված այս հիշատակությունը. «Խաչեն ...գյուղ Ելիզավետպոլի նահանգի Շուշիի գավառում: Հավանաբար գտնվում էր համանուն գետի ափին: Ըստ մի հիշատակության, 1265թ. Խաչենում շինվել է Ս.Ստեփանոս անունով եկեղեցի»[25]: Նշված Ս.Ստեփանոս եկեղեցին Քոլատակի տարածքում, գյուղից մոտ 5կմ հարավ-արեւմուտք գտնվող նշանավոր Կոշիկ անապատի գլխավոր եկեղեցին է, որի ՉԺԴ (1265) թվակիր արձանագրությունը[26] հարուստ տեղեկություններ է պարունակում Խաղբակյան մեծանուն տոհմի մասին, ինչ-որ չափով լրացնում նրա կենսագրությունը: Ս.Ստեփանոս եկեղեցին հիշատակվում է նաեւ 1471,1473թթ. ձեռագիր հիշատակարաններում, ընդ որում, պարզվում է նաեւ, որ XV դարում Խաչենաձոր է կոչվել Խաչեն գավառը, իսկ Մեծառանից կամ Հակոբավանքը՝ Գետամիջո վանք[27], քանզի գտնվում է Խաչեն եւ Քոլատակ գետերի միջեւ:

Այսպիսով, վերը վկայակոչված փաստերը հավաստում են, որ Խաչենի բերդը նույն Կաչաղակաբերդն է՝ Սխսաղան-Հավքախաղացը[28]:

Սակայն սա չպետք է շփոթել Թարթառի ափամերձ Հավքախաղացի հետ: Սխալ է նաեւ վերջինիս Լեւոնաբերդ անվանումը, այն Կիլիկիայի թագավորի ծախսերով վերակառուցելու մասին վարկածը: Իրականում Լեւոնաբերդ կամ Լեւաբերդ կոչվում է ոչ թե Գրիգոր իշխանի կառուցածը,

23 Մ. Չամչյանց, նշվ. աշխ., էջ 210:

24 Նույն տեղում: Տե՛ս նաեւ Կ.Գանձակեցի, էջ 269:

25 Հայաստանի եւ հարակից շրջանների տեղանունների բառարան, հ.2, Երեւան, 1988, էջ 665:

26 Դիվան հայ վիմագրության, V, Երեւան, 1982,էջ 29:

27 ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, մաս II, կազմեց Լ.Խաչիկյան, Երեւան, 1958, էջ 66, 325, 344:

28 Ի դեպ ինչպես վկայում են պատմական տեղանունների մանրակրկիտ ուսումնասիրությունները, Կաչաղակաբերդ, Խաչենի բերդ (Խաչեն), Սաղսաղան անվանումները իմաստային նշանակությամբ էլ հիմնականում նույնական են: Հետաքրքիր է, որ իրականում դրանք նույն տեղանվան աղավաղված կամ ձեւափոխված տարբերակներն են, որոնց ստուգաբանությունը շատ ավելի ընդգրկուն է եւ ներկայացվում է իմ «Արցախ-Ուտիք. պատմական տեղանուններ» դեռեւս չտպագրված գրքում:

այլ նրա հոր՝ Ատրներսեհի՝ IXդ. երկրորդ կեսին վերաշինած այն հզոր ու անմատույց ամրոցը, որ անվանվում է Հանդաբերդ. «Ատրներսեհ շինէ զբերդն Հանդու»[29]: Այն, կարծում եմ, կապ չունի Կիլիկիայի թագավոր Լեւոնի անվան հետ (XIIIդ. խառնակ ժամանակներում Լեւոն Ա-ն չէր կարող նման շինարարական գործունեություն ծավալել) եւ ծագել է Թարթառի ձախ վտակ Լեւ գետի անունից ու գտնվում է նրա աջ ափին, արդի Լեւ եւ Չափնի



Հատված պարսպից

ավերված գյուղերի մոտակայքում[30]: Գրիգոր Տեր-Հովհաննիսյանցը, համամիտ է Հավքախաղաց, Մխսաղան, Կաչաղակաբերդ անվանումներին, ամրոցի տեղադրությանը Խաչենագետի շրջանում, սակայն, կապված կառուցողի եւ կառուցման ժամանակի հետ, թույլ է տալիս անճշտություններ: Չհիշատակելով Թարթառի աջ ափին գտնվող Հավքախաղաց ամրոցի գոյության փաստը եւ հենվելով Մ.Կաղանկատվացու այն վկայության վրա, թե «Գրիգոր շինէ զՀավքախաղացին բերդն, եւ յայն կողմն ձգէ զձեռն իւր իշխանութեանն»[31], Կաչաղակաբերդի կառուցումը վերագրում է Գրիգոր իշխանին (Ատրներսեհյանին-Ս.Ս), իսկ կառուցման ավարտը համարում 891 թվականը[32]:

---

29 Մ.Կաղանկատուացի, էջ 340:
30 Մ.Բարխուտարեանց, նշվ., աշխ., էջ 409-410:
31 Մ.Կաղանկատուացի, էջ 340:
32 Գ.Տեր-Հովհաննիսյանց, նշվ. հոդվ., էջ 135:



Չի կարելի ընդունել նման տեսակետը, թե Խաչենի իշխանը կարող էր իր եւ նախորդների օրրանը հանդիսացող տարածքում, մասնավորապես՝ Խաչենագետի մոտակայքում, ամրոց կառուցել եւ «յայն կողմն» ձգել իր իշխանությունը: Նկատի ունենալով այս հանգամանքը, ինչպես նաեւ պատմական աղբյուրների հավաստի տեղեկությունները, գալիս ենք այն եզրակացության, որ առկա է երկու նույնանուն ամրոցների միջեւ շփոթությունը՝ Թարթառի Հավքախաղացի տվյալների վերագրումը Խաչենագետի Հավքախաղաց-Կաչաղակաբերդին:

Խաչենի բերդը եւ համանուն իշխանությունն ունեցել են ելեւէջներով լեցուն քաղաքական պատմություն: VIIդ. կեսերից Առաջավոր Ասիայի եւ Հայաստանի համար սկսվում է պատմական մի նոր ժամանակաշրջան, երբ իրենց տիրապետությունն են հաստատում արաբները: Արաբական տիրապետության շատ ծանր տարիներին ժողովուրդը ենթարկվում էր անխնա հալածանքների, բռնությունների, կոտորածների ու գերեվարության: VIII-IXդդ. արաբներից ծանր հարված են ստանում հայկական իշխանությունները, այդ թվում նաեւ Խաչենի իշխանությունը, որի քաջարի Առանշահիկ իշխանները (Սահլ Սմբատյան, Ատրներսեհ եւ ուրիշներ) ստիպված էին անդուլ պայքարով պահպանել իրենց տիրույթները: Այդուհանդերձ, 854թ. Խաչենի իշխանության սահմանները մտած Բուղա ոստիկանը, կռահելով, որ Ատրներսեհ իշխանը ամրացել է Խաչենի ամրոցում, պաշարում է այն «եւ կալաւ զԱտրներսէհ եւ զազգատոհմ նորա եւ զայլեւս երեւելի անձինս»[33] ու արյամբ է ողողում երկիրը: Սակայն մեզ հասած վկայություններից եւ նյութական վաղեմի մշակույթի մնացորդներից ակնհայտ է դառնում, որ, չնայած արաբների գերիշխանությանը, այդ երկրամասը որոշակի անկախության շրջան է ապրել վերոհիշյալ իշխանների եւ նրանց հաջորդների տիրապետության տարիներին, մինչեւ սելջուկ-թուրքերի եւ մոնղոլների ավերիչ արշավանքները: Կաչաղակաբերդ ամրոցը, որը գտնվում է Առանշահիկ տերերի իշխանության ներքո, հեռու չէր կարող մնալ քաղաքական այս եւ հետագա անցուդարձերից, իսկ զորեղ թշնամու առկայությունը, բնականաբար, պահանջում էր պաշտպանական միջոցներ ձեռնարկել, որին եւ ձեռնմուխ եղան այդ իշխանները:

XIդ. երկրորդ կեսից Խաչենի իշխանությունը գտնվում էր սելջուկյան տիրապետության տակ: Սելջուկ թուրքերի զորախումբը, ասպատակելով Խաչենը.«էառ զամենայն ամրոցս նոցա, քակեաց զեկեղեցիսն եւ այրեաց զվանորեայսն, կոտորեաց զազատսն եւ գերեաց զզօրականսն, պէսպէս

---

33 Մ.Չամչյանց, նշվ. աշխ., հ.Բ, Երեւան, 1984, էջ 450:

իսպառ մաշեաց զամենեսեան առ հասարակ ի սուր եւ ի գերութիւն»[34]: Այսպիսի պայմաններրում իշխանները, որոնք պատսպարվել էին անտառախիտ ձորերում եւ ամրացել բերդերում, չէին հանդուրժում թշնամուն եւ հերոսական մարտեր էին մղում մահմեդական արյունռուշ բռնակալների դեմ[35]: Չնայած այդ ճակատամարտերի մանրամասները ժամանակագիրները չեն հիշատակել, վիմագրական նյութերի կցկտուր տեղեկություններից կարելի է որոշակի պատկերացում կազմել սելջուկ-թուրքերի դեմ պարբերաբար մղված կռիվների մասին: Այսպես, Խաչենի իշխանաց իշխան, Հաթերքի գահակալ Հասանին՝ 1182թ. մի արձանագրությունից հայտնի է դառնում, որ նա, Խ(40) տարի (այսինքն՝ 1142-1182թթ.) լինելով Խաչենի իշխանաց իշխանը, մղել է շատ պատերազմներ եւ հաղթել իր բոլոր թշնամիներին (ամրոցն այդ ժամանակաշրջանում գտնվում էր նրա գերիշխանության ներքո). «Ես Հասան,-գրել է նա,- որդի Վախտանգա, տէր Հաթերո եւ Հանդաբերդո, Խաչինաբերդո եւ Հաւախաղացին. կացի յաւագութեան ամս Խ(40) շատ պատերազմաւ եւ յաղթեցի թշնամեաց իմոց...»[36]:

1220-ական թվականներին սկսվեցին Ջալալ ադ-Դինի ասպատակությունները: Արաբական աղբյուրները (իբն-Խալդուն) հաղորդում են, որ 1227թ. Ջալալ ադ-Դինի վեզիր Շարաֆ ալ-Մուլքը, հարկահավաքություն կատարելով, մոտեցավ Խաչեն-Կաչաղակաբերդին, որտեղ գտնվող Ջալալ իշխանը ստիպված էր 20000 դինար փրկագին վճարել եւ ազատել շուրջ 700 գերիների[37]:

XIIIդ. կեսերին Ներքին Խաչենը նվաճում են թաթար-մոնղոլական ասպատակները, հրի եւ սրի մատնելով խաղաղ բնակչությանը: Աղբյուրները բազմաթիվ ու հավաստի տեղեկություններ են հաղորդում մոնղոլների ավերածությունների գազանությունների մասին: Ներքին Խաչենում մոնղոլների կատարած վայրագությունների մասին Կիրակոս պատմագիրը գրում է. «Գերեցին եւ սպանին զբազումս՝ որ յարձակ վայրսն: Ապա մարտիւք մարտեան եւ զկէսս բռնութեամբ իջուցին, էր՝ զոր սպանին, եւ էր՝ զոր գերեցին... բայց քանզի ի տեառնէ էր բեկումն, յեղակարծում ժամու գաղտագողի ելեալ՝ մտին յամուրսն, եւ սրոյ ճարակ ետուն զբազմութիւնն եւ զկէսն գահավէժ արարին, եւ ի բազմութենէ անկելոցն ծածկեր երկիրն, եւ արիւնն առու եղեալ իբրեւ զջուր երթայր, եւ յոչ ոք խնայեցին. եւ ոսկերքն եւս յետ բազում ժամանակաց իբրեւ զբերդուկս քարանց կուտեալ երեւէին»[38]:

Ամրոցակալ ժայռը արեւելքից



Բացի այդ, մոնղոլների արշավանքի եւ Կաչաղակաբերդի ճակատամարտի մասին պատմվում էր մի ձեռագիր, որի հեղինակը Գանձասարի առաջնորդ Եղիա վարդապետն է (XVդ.): Այն կոչվում էր «Արշաւանք թաթարաց եւ պատերազմ ի Կաչաղակաբերդին»[39], որը հաստատում է ամրոցի կարեւոր եւ առաջնակարգ պաշտպանական նշանակությունը:

Մոնղոլական տիրապետության սկզբնական ժամանակաշրջանում Ներքին Խաչենի տեր Հասան-Ջալալը (1214-1261թթ.) իր ճկուն քաղաքականությամբ ու նվերներով կարողանում է նվաճել մոնղոլ զորապետների վստահությունը, որոնք փոքրիշատե հանգիստ են թողնում

34 Ղ.Ալիշան, Հայապատում, Վենետիկ, 1901, էջ 386: Տե՛ս նաեւ Մ.Կաղանկատուացի, Հավելված Բ, էջ 351:

35 Նույն տեղում:

36 Դիվան հայ վիմագրության, V, Երեւան, 1982, էջ 198: Այս արձանագրությունը նույնպես վկայում է, որ Խաչենի բերդը (Կաչաղակաբերդ) եւ Հավքախաղացը միեւնույն շինությունները չեն:

37 И.Орбели, hасан Джалал, Князь Хаченский, Ереван, 1963, էջ 152: Սակայն, մեկ այլ՝ ավելի հավաստի տեղեկության համաձայն, Հասան Ջալալը վճարել է նշված փրկագնի կեսը՝ 10000 դինար, որը հավասարազոր է բյուզանդական 5000 ոսկյա դինարի (Шихаб ад-Дин Мухаммад ан-Насави, Жизнеописание султана Джалал ад-Дина Манкбурны, Баку, 1973, էջ 211, 388):



38 Կ.Գանձակեցի, էջ 267:

39 Ա.Բեկնազարեանց, նշվ. աշխ., էջ 90: Երեւանի եւ Էջմիածնի ձեռագրատներում ձեռագիրը գտնելու փորձերը արդյունք չեն տվել: Նկատի ունենալով այն հանգամանքը, որ պարսից խաները (մասնավորապես՝ Իբրահիմ) եւ նրանց կամակատարները (Մելիք Շահնազար Գ, Իսրայել կաթողիկոս) ժողովրդի հանդեպ գործած իրենց ոճրագործությունները ապագա սերունդներից թաքցնելու նպատակով միտումնավոր ոչնչացնում էին ձեռագիր հիշատակարանները, հնարավոր է, որ մելիքները մոտակա քարայրներում թաքցրած լինեին որոշ ձեռագրեր, որոնց մեջ էր, գուցեեւ, նշված ձեռագիրը:

Խաչենի բնակչությանը[40]:

Քաղաքական այսպիսի պայմաններում էր գոյատեւում Կաչաղակաբերդը, որը, նկատի ունենալով ամրոցին վերաբերող կամ քիչ թե շատ նրան առնչվող աղբյուրների վկայությունը, իր պատմական դերն ու նշանակությունը հիմնականում կորցրել է 1246թ.[41], թաթարաց Ղարաբուղա զորավարի աշխարհավեր արշավանքներից հետո[42]:

Կաչաղակաբերդը տեղավորված է Պատառա (Պտրեցիք) եւ Քոլատակ գյուղերի միջեւ, դարավոր անտառից վեր խոյացող մի ահռելի՝ երեք կողմերից ողորկ, ուղղահայաց քարաժայռի գլխին, ծովի մակարդակից 1706մ բարձրության վրա: «Նայում ես եւ կարծում, թե այդ բերդը շինված-պատրաստված է մի ուրիշ տեղ եւ բոլորովին պատահաբար դրված է այս սարի գլխին, իբրեւ մի գլխարկ»,- գրում է Լեոն[43]: Գտնվելով մոտակա հարթավայրերից ավելի քան 1000մ բարձրության վրա, գրեթե անառիկ վայրում, ամրոցը ամենայն հավանականությամբ, ինչպես Արցախ-Ղարաբաղի մի շարք ամրոցներ[44], ծառայել է նաեւ որպես դիտակետ՝ ազդանշանային համակարգով: Այդ է վկայում ամրոցից բացվող գեղեցիկ, լայնահուն տեսադաշտը. հարավային կողմում երեւում են Քիրս լեռնաշղթան, Շուշին՝ իր շրջակայքով, հյուսիսային կողմում՝ Ջրաբերդի լեռները, Առաջաձորի լեռնաշղթան՝ հարակից գյուղերով, հյուսիս-արեւմուտքից՝ Գանձասարը, Խոխանաբերդը, արեւելքից՝ Ուլուպատի սուրբ Գեւորգի սարը, որտեղ Պտկես բերդն է, հարավ-արեւելքից՝ Կարկառի հովիտը՝ Քեթուկ եւ մոտակա այլ գյուղերով: Ինչպես հայկական մյուս ամրոցների (Ջրաբերդ, Գավառզին, Երնջակ), այնպես էլ Կաչաղակաբերդի բռնած տարածքն աչքի է ընկնում բնական պաշտպանական հուսալի եւ նպաստավոր պայմաններով, շրջագծով մոտ 150մ բարձրությամբ երիզված է անմատչելի մոխրակապտավուն սեպացած ժայռապատնեշներով (դժվարանցանելի միակ մուտքը հարավ-արեւմտյան կողմից է): Այդուհանդերձ, որեւէ այլ տեղ չենք նկատում մի այնպիսի բարձրաբերձ ու շրջակայքին իշխող ամրոց, որն իր կառուցվածքով, արտաքնապես ու ծավալատարածական հատկանիշներով նմանվի Կաչաղակաբերդին: Հարկ է ասել, որ այստեղ փայլում է ոչ այնքան մարդկային հանճարի ու հնարագիտության արվեստը, որքան «բնության ճարտարապետի» հրաշագործությունը:

40 Բ.Ուլուբաբյան, Խաչենի իշխանությունը..., էջ 188:
41 Մ.Չամչյանց, նշվ. աշխ., հ. Գ, էջ 222:
42 Գ. Տեր-Հովհաննիսյանց, նշվ. հոդվ., էջ 135, ծան. 1:
43 Լեո, Իմ հիշատակարանը, էջ 408:
44 Շ.Մկրտչյան, նշվ. աշխ., էջ 64-65:




Հատված ամրոցից

Տեղադրված լինելով լեռնաշխարհի գրեթե կենտրոնում, Կաչաղակաբերդը Խաչեն արշավող թշնամական զորքերի առաջխաղացման գլխավոր խոչընդոտներից մեկն էր: Գանձասարի շրջակայքում գտնվող մյուս ամրոցների (Ծիրանաքար, Շիկաքար, Խոխանաբերդ, Դեդ, Բերդաքար եւ այլն) հետ միասին այն հզոր վահան էր ոչ միայն հռչակավոր վանքի, այլեւ ընդհանրապես երկրամասի պաշտպանությունը կազմակերպելու համար: Այս ամրոցի գրավումը անչափ դժվար էր ոչ միայն այն պատճառով, որ թշնամին պետք է հաղթահարեր դեպի այնտեղ տանող վերելքի խոչընդոտներն ու բնական, գրեթե անմատչելի քարաժայռը, այլեւ պաշտպանների ցուցաբերած հայրենանվեր ու հերոսական դիմադրության շնորհիվ, որոնք կարող էին հեշտությամբ հաշիվ մաքրել հոգնած թշնամու հետ եւ նրան մեծ կորուստներ պատճառել:

Ամրոցակալ ժայռը, որ տեղավորված է հարավ-արեւելք եւ հյուսիս-արեւմուտք ուղղությամբ, ունի 150-160մ երկարություն եւ 75մ միջին լայնություն: Այսպիսով, վերնամասում ամրոցի մակերեւույթը, որը խորդուբորդ է եւ թեք լանջ ունի, ընդգրկում է ավելի քան 1.13հա տարածություն:

Ամրոցի տարածքն ամբողջապես ծածկված է զանազան շենքերի ավերակներով, որոնց մի մասը գետնի երեսին է, իսկ մյուս մասը՝ հողի տակ (երեւում են դրանց փոսորակները): Նախնական հաշվումներով սենյակների թիվը հասնում է 20-ի: Եթե ամրոցի զառիթափ լանջի սենյակների (որոնք ծածկված են հողով եւ խիտ բուսականությամբ) հատակագիծը, նրանց ստույգ նշանակությունն ու դերը դժվար է պարզել, ապա գագաթնամասում գտնվող երկու բնակարանները (6x4,50մ եւ 4,50x4,50մ չափերի, պատերի

հաստությունը՝ 1 մ 15սմ-ից 1 մ 45սմ) համեմատաբար լավ են պահպանվել, ունեն իշխող դիրք մյուսների նկատմամբ եւ, ըստ երեւույթին, ծառայել են որպես իշխանական տներ: Եվ դա պատահական չէ. ընդհանրապես, դեռեւս հին ժամանակներից, ինչպես նշվեց, ամրոցամերձ տարածքը Ներքին Խաչենի շատ խիտ բնակեցված շրջաններից մեկն էր, որոնց մասին վկայում են ոչ միայն դամբարանների բազմաքանակությունն ու դրանցից հայտնաբերված գտածոները[45], այլեւ միջնադարյան վանական մի շարք համալիրների (Մեծառանից վանք, Կոշիկ Անապատ, Հավապտուկ վանք եւ այլն) առկայությունը: Բացի այդ, հայտնի է, որ այս միջավայրում են գոյատեւել Պռոշյանց հանրահայտ տոհմի հնագույն հիշատակարանները, որոնք հայագետ Գ.Հովսեփյանին հանգեցրել են այն եզրակացության, որ Պռոշյան կամ Խաղբակյան տոհմի նախնական բնակավայրը եղել է այս վայրում, ավելի ստույգ՝ Քոլատակ գյուղը, Հավապտուկ վանքը նրանց տոհմական գերեզմանատունն էր, իսկ նստավայրը՝ Գեռաքար գյուղը[46]:

Հնագիտական մանրակրկիտ ուսումնասիրությունները, հավանաբար, կարող են ավելի լրիվ բացահայտել այդ հնագույն ամրոցի պատմության ուրիշ շատ հարցեր:

Կաչաղակաբերդի ավերակների մեջ լավ պահպանված միակ շինությունը ջրավազանն է: Այն ունի 5 մ 54սմ երկարություն, 3 մ 42սմ լայնություն եւ 2մ խորություն (բուսածածկ եւ հողածածկ է): Պետք է ասել, որ ջրավազանը կառուցվել է ոչ այնքան դրսից ջուր լցնելու համար, մի բան, որ գրեթե անհնարին է (ամրոցի մոտակայքի միակ աղբյուրը՝ «Սխսաղանի ջուրը», որից օգտվել են տեղաբնակները, հեռու է ամրոցից մոտ 1,5կմ եւ քիչ ջուր է պարունակում), որքան անձրեւաջրերի համար: Ի դեպ, տեղումների քանակն այստեղ այժմ էլ սովորականից շատ է:

Ամրոցի պաշտպանական համակարգում կարեւոր դեր են խաղացել ոչ միայն բնական-ժայռեղեն ամրությունները, այլեւ արհեստական կառուցվածքները՝ ամրոցը լիովին անմատույց դարձնող պարսպապատերը, որոնք գրեթե անմատչելի դիրքի շնորհիվ բավական լավ են պահպանվել: Ամրոցի հարավ-արեւելյան կողմից մինչեւ հյուսիս-արեւելյան եզրն ընկած գոտին փակվել է մինչեւ 40մ երկարության, արեւմտյան կողմում՝ աշտարակավոր պարսպով (որը ծառայել է որպես հենակետ): Պարիսպները, որոնք այժմ պահպանվում են 1 մ 50սմ-ից 1 մ 70սմ բարձրությամբ, կենտրոնական հատվածներում ունեն 1 մ 20սմ-ից մինչեւ 1 մ 50սմ

45 Հ.Թօփճեան, Ցուցակ ձեռագրաց Խաչիկ վարդապետի Դադեան, մասն Բ, Վաղարշապատ, 1900, էջ 63-74:

46 Գ.Հովսեփյան, Խաղբակյանք կամ Պռոշյանք հայոց պատմության մեջ, մասն 1-ին, Վաղարշապատ, 1928, էջ 34:



հաստություն, իսկ մուտքի կողմից, որտեղ կրկնակի ամրացված են՝ 2 մ 30սմ հաստություն: Հատկապես հետաքրքիր է պարսպի կամարատիպ՝ 3 մ 25սմ լայնությամբ մուտքի մոտի բացվածքը (պատի հաստությունը՝ 1 մ 20սմ), որը ծառայել է ոչ միայն որպես թշնամու վրա քարեր գլորելու «կրակակետ», այլեւ, ըստ երեւույթին, պաշտպանական օժանդակ դեր է կատարել: Ամրոցի պաշարման դեպքում կարելի է այդ անցքից աննկատ դուրս գալ, թշնամուն հարվածել թիկունքից կամ աղբյուրից ջուր վերցնել:



Ամրոցի ընդհանուր տեսքը Ծիրանաքարի մերձակայքից

Բացի վերոհիշյալ ուղղությամբ անցկացված պարսպից, որոշ պարսպահատվածներ են կառուցվել նաեւ այն տեղերում, որոնք պաշտպանական առումով խոցելի էին: Սակայն կամարատիպ անցքով գագաթնամասի արեւելյան կողմը երիզող պարսպահատվածը (պատի հաստությունը՝ 102սմ), որն ամրացված է ժայռաքարին, ըստ էության նույնպես ծառայել է որպես քարեր գլորելու կետ եւ արված է պաշարվածների անվտանգությունն ապահովելու (ցած չընկնելու) նպատակով, քանի որ այդ կողմից ամրոցը լրիվ անմատույց է: Բոլոր պարսպապատերն ու նրանց առանձին հատվածները կառուցված են տեղական մոխրակապտավուն եւ սպիտակ ոչ մեծ որձաքարերով ու կրաշաղախով:

Ի մի բերելով Կաչաղակաբերդի վերաբերյալ մեր ուսումնասիրություններն ու դիտարկումները, կարող ենք ասել, որ ամրոցը թե՛ պարսպապատերի եւ թե՛ սենյակների պատերի շարվածքների ձեւերով ու բնույթով, ինչպես նաեւ կառուցման արվեստով հիշեցնում է այս անառիկ երկրամասի մյուս ամրոցները (Շիկաքար,Ջրաբերդ, Դեդ, Գտիչ եւ այլն):

Ամրոցի հետ կապված շատ կարեւոր հարցերից մեկը կառուցման ժամանակի պարզաբանումն է: Ցավոք, դրա վերաբերյալ առայժմ արժանահավատ եւ ստույգ տեղեկություններ հայտնի չեն: Սակայն, նկատի ունենալով Խաչիկ վարդապետ Դադյանի մասնակի պեղումներն ու ուսումնասիրությունները Խաչենագետի ափամերձ շրջաններում եւ ամրոցի մոտակայքում[47], որի ժամանակ դամբարաններից ի հայտ են եկել նիզակակոթ (երկարությունը՝ 18սմ), նիզակածայր՝ կազմված սուր սլաքանման բրոնզե զանգվածից (16սմ երկարությամբ) եւ բրոնզե զանազան գտածոներ ու խեցեղեն, կարող ենք Կաչաղակաբերդի հիմնադրումը վերագրել զարգացած բրոնզի դարաշրջանին (մ.թ.ա. II-I հազ.):

Հետագայում, արաբական ու մոնղոլական արշավանքների ժամանակաշրջանում, ամրոցը վերակառուցվել է, հարմարեցվել տվյալ ժամանակի ռազմարվեստի պահանջներին (պահպանված բնակարանների հետքերն ու պարսպապատերը հետագայի կառուցումների մնացորդներ են)՝ դառնալով Ներքին Խաչենի ամենաանառիկ ամրոցներից մեկը:

Կաչաղակաբերդը նկատելի հետք է թողել մեր ժողովրդի փառավոր պատմության մեջ:

47 Հ.Թօփճեան, նշվ. աշխ., էջ 70-71: Տե՛ս նաեւ Հայաստանի Պատմության կենտրոնական պետական արխիվ, ֆ. 319, ց. 1, գ.9:



# Աղվեն ամրոց

Այս ամրոցը պատմության մեջ հայտնի է իր կանոնական սահմանադրությամբ՝ հաստատված Վաչագան Բարեպաշտ արքայի կողմից: Այստեղ, Vդ. վերջին[1], արքայի ամառանոցում հրավիրվեց աշխարհիկ-եկեղեցական ժողով, որի նպատակն էր՝ ներգործության իրավական միջոցներով հարթել երկրի աշխարհականների եւ հոգեւորականների, ազնվականների ու ռամիկների միջեւ եղած բազմաթիվ հակամարտությունները[2]:

Ամրոցի ընդհանուր տեսքը արեւմուտքից



Ներկայումս պատմագիտության մեջ իշխող է այն կարծիքը, թե արքայի ամառանոց Աղվենը գտնվում է «Հետագա Գյուլիստան մելիքանիստ գյուղի տեղը»[3]: Կ.Տրեւերը Աղվենը տեղադրում է Պարտավի մոտ[4], իսկ Հայաստանի եւ հարակից շրջանների տեղանունների բառարանում կարդում

1 Մ.Չամչյանց, Հայոց Պատմություն, Բ, Երեւան, 1984, էջ 219, Բ.Ուլուբաբյան, Դրվագներ հայոց արեւելից կողմանց պատմության, Երեւան, 1981, էջ 171 եւ այլն:
2 Մ.Կաղանկատվացի, Պատմություն Աղվանից աշխարհի, Երեւան, 1969, էջ 65:
3 Ս.Երեմյան, Հայաստանը ըստ «Աշխարհացույցի», Երեւան, 1963, էջ 34, Բ.Ուլուբաբյան, նշվ. աշխ., էջ 171 եւ այլն:
4 К.Тревер, Очерки по истории и культуре Кавказской Албании, IVв. д.н.э.-VIIв .н.э., М-Л, 1959, էջ 295:

ենք. «Աղվեն հովոց, ... բնույթն ու տեղը անորոշ»[5]:

Անդրադառնալով Աղվենի կանոններին, Լեոն գրում է. «Այս հովոցն անշուշտ գտնվում է Մռավ լեռան վրա, որը Պարսավի դիմացն է»[6]:

Այսպիսով, ինչպես տեսնում ենք, նշված հեղինակները Աղվենը գերադասում են տեղադրել Պարսավի եւ հատկապես Գյուտական


Հատված պարսպից


Ամրոցի հարավային աշտարակի ընդհանուր տեսքը

(աղբյուրներում՝ Դյուտական- Ս.Ս.)[7] գյուղի մոտերքում, ըստ էության նկատի ունենալով վերջինիս թագավորանիստ լինելը, ինչպես նաեւ այն, որ ամառանոցն արքունի գյուղից հեռու չի կարող լինել: Ըստ որում, անտեսվում է Մ.Բարխուտարյանցի տեսակետը: Իսկ վերջինս Աղվենը տեղադրում է Խաչենագետի հովտում: Այս վաղեմի պարիսպը (Աղվենը-Ս.Ս.) ընկած է Խաչեն գետակի եւ Քոլատակ վտակի մեջ՝ խառնուրդի մոտ,- գրում է նա[8]: Սակայն տեղագրողը այն դիտում է Աղուանք ձեւով, որը մեր կարծիքով Աղուան-Աղվենի ձեւափոխությունն է, մանավանդ որ Ս.Երեմյանը մեկ այլ տարբերության մեջ նշում է Աղուան ամրոցի առկայությունը Խաչենի հովտում, որը «... եղել է ... թագավորների ամառանոց, հովոց տեղիք, 4-5-րդ դարերում»[9]:

Անշուշտ, Մ.Բարխուտարյանցի տեսակետը անհիմն չէ, քանի որ «... ժողովրդեան բերանում ցարդ մնացեալ Աղուանք եւ «ի հովոցի տեղոջս Աղուէնն» կարծել են տալիս մեզ հավատալ, թե ժողովն եղած է պատիս

5 Հայաստանի եւ հարակից շրջանների տեղանունների բառարան, հ.1, Երեւան, 1986, էջ 196:

6 Լեո, Երկերի ժողովածու, հ.2, Երեւան, 1967, էջ 154:

7 Գյուտականի ավերակները գտնվում են այժմյան Թալիշ ու Մատաղիս գյուղերի միջեւ (Մ.Բարխուտարեանց, Արցախ, էջ 230):

8 Արցախ, էջ 198:

9 Ս.Երեմյան, նշվ. աշխ., էջ 34:




Ամրոցի աշտարակներից

մօտերքում, թե պատս է Աղուէնն, եւ ոչ թե Աղուէ գաւառն, քանզի եթե Աղուէ գաւառում եղած լիներ, կյիշեր պատմաբանն գաւառ բառը. մանաւանդ թե Աղուէ գաւառում չկայ հովասուն տեղ»[10]:

Մեր կարծիքով, Մ.Բարխուտարյանցի տեղադրությունը ճիշտ է, որը հիմնավորվում է հետեւյալ փաստերով.

1. Հայտնի է, որ ժողովրդական ավանդույթներն ու զրույցները որոշակի հիմք ունեն: Չի կարելի դրանք ժխտել, առանց հակառակ փաստ ունենալու: Տվյալ դեպքում, ինչպես պարզվում է աղբյուրներից, XIXդ. վերջերին ժողովուրդը ամրոցին Աղուան անունն էր տալիս: Տեղաբնակները, կարծելով, որ դա աղ-սպիտակ թուրքական բառն է, այժմ էլ ամրոցը թարգմանաբար «Սպիտակ պատ» են վերակոչել, անտես առնելով, որ այն բառիս թուրքական իմաստի հետ կապ չունի եւ, իրականում, ամրոցապատն էլ սպիտակ չէ:

2. Աղվեն ամրոցը կառուցված է իրոք հովասուն վայրում: Այն գրեթե անտառի մեջ է, Խաչեն եւ Քոլատակ գետերի միախառնման տեղում եւ, ինչպես երեւում է ամրոցի տեղադրությունից, դարեր առաջ Խաչենագետը ողողում էր ամրոցապատի հյուսիսային հատվածը: Սա իրոք ամառանոցային վայր է, Արցախի գայթակղիչ անկյուններից մեկը:

10 Արցախ, էջ 425:

3. Մ.Կաղանկատվացին գրում է. «Ես Վաչագան՝ Աղվանից արքաս… եւ այլ բազմաթիվ մարդիկ, որոնք միաբան ինձ մոտ ներկայացան՝ ամառանոցային վայր Աղվենում»[11]:

Կարծում ենք, որ «ինձ մոտ» արտահայտությունը ակնհայտորեն վերաբերվում է Խաչենագետի հովտում՝ Գառնաքար եւ Քոլատակ գյուղերի տարածքում գտնվող Խաչենի հնագույն վարչական կենտրոնին[12], որը Հայոց արեւելից կողմանց նշանավոր գործիչների օրրանն էր, իշխանների նստավայրը: «Բնակաւր ինքնակալ բարձր եւ մեծ Արցախական աշխարհի

Ամրոցի ընդհանուր տեսքը հյուսիսից



եւ թագավոր յոքնասահման նահանգաւք»[13] Հասան Ջալալը եւ Խաչենի իշխանական տոհմի մյուս ներկայացուցիչները, որոնց կենտրոնատեղին եղել է այստեղ, զտարյուն ժառանգներն էին Առանշահիկ տոհմի՝ հանձինս Վաչագան եւ Համամ Բարեպաշտների[14]: Ավելացնենք, որ վարչական տարածքը ամբողջովին շրջապատված է ամրոցներով. հարավից Կաչաղակաբերդը, հարավ-արեւմուտքից Բերդաքար, Դեդ (Նատարին)

11 Մ. Կաղանկատվացի, նշվ. աշխ., էջ 65-66:

12 Լրաբեր հասարակական գիտությունների, 1990, N 1, էջ 43:

13 И.Орбели, hасан Джалал, князь Хаченский, Избранные труды, էջ 158:

14 Բ.Ուլուբաբյան, Խաչենի իշխանությունը X-XVI դդ., Երեւան, 1975, էջ 213:



ամրոցները, արեւմուտքից՝ Խոխանաբերդը, իսկ արեւելքից՝ Աղվեն ամրոցը, որը փակում է թշնամու միակ մուտքը իշխանության կենտրոն: Այստեղ են տեղադրված նաեւ նշանավոր վանական համալիրները, որոնց թվում՝ հոգեւոր առաջնորդարան Մեծառանից վանքը, Համամ Բարեպաշտի անունը կրող հնադարյան եկեղեցին (այժմ ավերակ, գտնվում է Գառնաքարից մոտ 2,5կմ արեւմուտք–Մ.Մ.):

XI-XII դդ. Աղվենը գտնվում էր Խաղբակյանների իշխանության տակ[15], որից հետո այն մի շարք ամրոցների հետ միասին անցավ Ջալալյան իշխաններին: Պատմական այլ տեղեկություններ ամրոցի մասին չեն արձանագրվել:

Աղվեն ամրոցը հիմնականում կառուցված է գետաքարերով ու կրաշաղախով, ծովի մակերեւույթից բարձր է ավելի քան 700մ: Ամրոցապատի երկարությունը շուրջ 86 մետր է, որից ավելի քան 20 մետրը՝ ամբողջովին ավերված (պահպանվում են միայն հետքերը): Այն ձգվում է հյուսիս-հարավ ուղղությամբ 66մ, որից հետո թեքվում է հարավ-արեւելք (6մ) եւ շարունակվում մինչեւ հարավային ձորաեզրը, որտեղից հոսում է Քոլատակ գետը: Ամենայն հավանականությամբ, այս թեքման տեղում էլ պետք է լինի ամրոցի գլխավոր մուտքը:

Այժմ, ամրոցապատը պահպանվում է 3,5-4մ բարձրությամբ, իսկ կենտրոնական եւ առանձնապես հյուսիսային հատվածներում՝ 7-8մ: Հաստությունը 1,8-2մ է: Ամրոցապատը հանգուցված է 8 աշտարակներով ու կիսաշտարակներով, որոնք բնականաբար կառուցվել են ամրոցին խիստ ամրություն տալու եւ կռվամարտի նկատառումներով: Աշտարակներից երկուսը ամբողջովին քանդված են: Դրանք ունեցել են 2,9-3մ հաստություն (պարսպապատի կենտրոնում) եւ 3,5 եւ ավելի՝ եզրամասում, հատկապես Խաչեն եւ Քոլատակ գետերին հարող մասերում:

Նկատի ունենալով ամրոցի կառուցման հին ոճը եւ առանձնահատկությունները, կարելի է նրա հիմնարկումը վերագրել վաղ միջնադարին: Ճիշտ է, ամրոցը հետագա դարերում նորոգման էր ենթարկվել, որի հետքերը նկատելի են, սակայն լքվել է մեր երկիրը ներխուժող վաչկատուն թշնամիների հարձակման հետեւանքով, եւ կյանքն այնտեղ դադարել է դարեր առաջ:

15 Մ.Բարխուտարեանց, Պատմութիւն Աղուանից, Ա, Վաղարշապատ, 1902, էջ 154:

# Ամրոց Իսարանց
# (Իծարանց, Իծարանցոց)

«Իսարանց» ամրոցը գտնվում է Քոլատակ գյուղից մոտ 2կմ արեւմուտք, բարձրադիր, անտառապատ բլրի վրա: Ծովի մակերեւույթից բարձր է 1284,9մ: Ամրոց-բնակավայրը ձգվում է հարավ-արեւելքից հյուսիս-արեւմուտք ուղղությամբ, որի հատկապես հարավային եւ մասամբ հարավ-արեւմտյան հատվածները եզերվում են բնական ժայռապատնեշներով:

Ամրոցակալ անտառապատ բլրի ընդհանուր տեսքը



Զբաղեցնում է ավելի քան 1,5 հեկտար տարածք: Շրջափակող պարսպապատերի մնացորդները տեղ-տեղ պահպանվում են: Գլխավոր մուտքը (4,3մ լայնությամբ) արեւմտյան կողմից է, կառուցված հիմնականում անմշակ որձաքարերով: Ամրոցն իր մեջ ներառում է տարբեր նշանակության միմյանց կից շուրջ 50 կացարաններ, որոնք լրիվ ավերակ են, բուսածածկ ու հողածածկ, բայց հիմնապատերի շարվածքների առանձին մնացորդներ լավ նշմարվում են: Դրանց հատակագծերը համապատասխանում են միջնադարյան (XII-XIIIդդ.) բնակարանների ծավալատարածական ընդգրկումներին եւ լեռնային տեղանքի ընձեռած սահմանափակ հնարավորություններին:

Ամրոց-բնակավայրի գագաթնամասում (արեւելյան կողմում) մատուռի ավերակներն են (չափերը՝ 4x3մ), որի շուրջ տարածվում է գերեզմանոցը՝ XII-XIII դդ. վերագրվող շուրջ մեկ տասնյակ խաչքարերով: Դրանցից մեկը (չափերը՝ 2 x 1,3 x 0,25մ) ուշադրության է արժանանում ստորին մասում զետեղված, բայց եղծված ու դժվարընթեռնելի





Խաչքար XII-XIIIդդ.



Խաչքար XIIIդ.

արձանագրությամբ, որի մի մասը հողի տակ է: Երեւում է հետեւյալ գրությունը.

...ԹԻ ԿԱՆԳՆԵՑԻ ԶԽԱՉՍ ՎԵՐԱ ՏԱՊԱՆԻ ՀԱՒՐ... (5տող):

Առանց արձանագրության, բայց XIIIդ. բնորոշ զարդաքանդակներով խաչքարերից է մատուռի կողքինը (1 x0,46 x0,11մ չափերի), որի վրա նռան քանդակներ են: Խաչքարի եռանկյունաձեւ քիվը պարուրված է բուսական քանդակներով: մեկ այլ խաչքար (չափերը՝ 1,27 x 0,51 x 0,12մ) պարունակում է կենդանակերպ (խաչի հորիզոնական թեւի ներքնամասում) եւ նռան (վերնամասում) բարձրաքանդակներ:



Խաչքար XIII-XIVդդ.

Ամրոցի մասին պատմական աղբյուրներում տեղեկություններ չեն պահպանվել, սակայն, տեղացիների վկայությամբ, այն «Դեղ» անունն է կրում, որը կարծում եմ, թյուրիմացություն է եւ չի կարող վերաբերվել Կ.Գանձակեցու հիշատակած պատմական Դեղ (դեսք) ամրոցին հետեւյալ պատճառներով.

1. Ամրոցը տեսադաշտ չունի, գտնվում է անտառի մեջ եւ այլ ամրոցներից նկատելի չէ:

2. Դեպի ամրոց-բնակավայր տանող ուղիները մատչելի են եւ փաստորեն չի համապատասխանում պատմիչի նշած անառիկությանը:

3. Համաձայն Գանձակեցու վկայության, «Դեղ»-ը Խոխանաբերդին մերձակա ամրոցներից է (հիշատակվում է նրա հետ), իսկ այս ամրոցը գտնվում է Կաչաղակաբերդի մոտ:

4. Վերջապես, պատմական աղբյուրների եւ հատկապես տեղազննության միջոցով պարզել եմ, որ «Դեղ» ամրոցը ներկայիս «Փանջակ» քարն է (Նատարին բերդը), որի մասին խոսք կլինի հաջորդ էջերում:

# Բերդաքար ամրոց

Բերդաքարը, որ ներկայումս հայտնի է «Ղլեն քար» օտարահունչ անունով, Խաչենագետի հովտի ուշագրավ ամրոցներից է: Գտնվում է Քոլատակ գյուղից մոտ 8կմ հարավ-արեւմուտք, ծովի մակերեւույթից 1516մ բարձրությամբ զույգ ժայռերի վրա՝ շրջակայքի նկատմամբ գերիշխող դիրքով: Պատմական աղբյուրներում չի հիշատակվում, որը բացատրվում է նրա տեղադրությամբ: Գտնվելով թիկունքում (Խաչենի իշխանության վարչական տարածքի հարավ-արեւմտյան կողմում), անհասանելի է եղել ասպատակիչներին, որոնց գրոհները (արեւելյան հարթավայրային տարածքներից) դիմագրավվել են առաջատար բերդերի կողմից՝ թույլ չտալով

Ամրոցի զույգ ժայռագագաթները հյուսիս-արեւելքից



թշնամուն խորանալու թիկունք: Բայց Բերդաքարը սոսկ «թիկնապահ» ամրոց չի եղել: Տարածքի նշանավոր դիտակետերից մեկը լինելով, մոտակա «Իսարանց» ամրոց-բնակավայրին զուգընթաց, պաշտպանել է 1,5կմ հարավ-արեւելք գտնվող նշանավոր «Կոշիկ անապատ» վանական համալիրը:

Այս ամրոցի մասին միակ տեղեկությունը հաղորդում է Շ.Մկրտչյանը, որը գրում է. «Ղլեն քար: Բերդատեղի, տեղացիների հաղորդմամբ՝ այստեղ պահում էին բանտարկյալներին: Այն գտնվում է Բանտ անունով ժայռի գլխին»[1]: Սակայն, կարծում եմ «բանտ» անվան առկայությունը դեռեւս չի

1 Շ.Մկրտչյան, Լեռնային Ղարաբաղի պատմաճարտարապետական հուշարձանները, Երեւան, 1985, էջ 24:





Ամրոցի ընդհանուր տեսքը արեւմուտքից

նշանակում, որ այն պետք է կապել բանտ-արգելանոցի հետ: Ամրոցն այդ նշանակությունը չի ունեցել, իսկ բանդ կամ բանտ անվամբ տեղանուններ կան Արցախի այլ վայրերում: «Բանդ» նշանակում է կապ, կապանք[2], որը ցույց է տալիս, որ ժայռը կապող դեր է ունեցել երկու առանձին հանդամասերի միջեւ, ինչպես-որ իրականում կա:

Ամրոցակալ ժայռերն ունեն հարավ-արեւելք հյուսիս-արեւմուտք ուղղվածություն: Ստորին մասում գտնվողը զբաղեցնում է բավականին ընդարձակ տարածություն՝ ավելի քան 1500քառ.մետր, իսկ բուն Բերդաքարը, որ նրանից բարձր է մոտ 15-20 մետր՝ ավելի քան 800քառ.մետր: Ստորին լեռնագագաթին, որը մատչելի է ժայռի հարավ-արեւմտյան կողմից, կան 5,5x5,5 եւ7,5x4,5մ չափերի երկու ջրամբարների ավերակներ՝ ծածկված բուսականությամբ: Կացարանների հետքեր չեն նշմարվում:

Վերին լեռնագագաթում (բուն Բերդաքար) նույնպես կան երկու ջրավազաններ: Հարավ-արեւելյան եզրին՝ կիսաշրջան կառուցվածքով, հարմարեցված տեղանքին, 3,6x3,7մ չափերի, լիովին ծածկված

2 Տե՛ս Նոր բառգիրք հայկազեան լեզուի, հ. 1, Վենետիկ, 1836, էջ 437, Է.Աղայան, Մեղրու բարբառը, Երեւան, 1954, էջ 255:



Լեռնագագաթի շինության ընդհանուր տեսքը

բուսականությամբ եւ հարավ-արեւելյան եզրամասում՝ 4x4մ չափերի: Երկրորդ ջրամբարից վերեւ (լեռան գագաթնամասի գրեթե կենտրոնում) տեղադրված է ավելի քան 16քառ. մետր զբաղեցնող (3,3x4,9մ) մի կիսավեր շինություն (կացարան), որի 0,8-ից 1մ բարձրությամբ պատերը կառուցված են սովորական անտաշ քարերով ու կրաշաղախով (հաստությունը՝ 70սմ): Այլ կառույցների հետքեր չեն նկատվում, որը վկայում է ամրոցի սոսկ դիտակետ լինելու հանգամանքը, իսկ նշված շինությունը՝ որպես պահակատուն: Ամրոցակալ ժայռի «մուտքը» հարավ-արեւելյան կողմից է, ուր կարելի է հասնել ողորկ քերծը մագլցելով:

Լեռան ստորին՝ հարավ-արեւմտյան կողմում (ժայռի տակ) է գտնվում 15 քառ.մ (3x5x2,5մ) մակերեսով քարանձավը՝ անմշակ քարերով ու կրաշաղախով պատված մուտքով, որի մնացորդները պահպանվում են:

Ամրոցին անմիջապես մոտ, հյուսիսակողմի անտառախիտ բարձունքում, գրեթե հարավ-հյուսիս ուղղությամբ ձգվում է «Դարպասների խութ» գյուղատեղին:



Գյուղատեղիի շինության ներկայիս տեսքը՝ ներքուստ





Շինության արեւմտյան պատը

Անվանումը ցույց է տալիս այստեղ արքունի կամ իշխանական ապարանք լինելու հանգամանքը, քանի որ Դարպասն ունի նաեւ այդ նշանակությունը[3]: Օրինակ, Խոխանաբերդի հյուսիս-արեւելյան կողմում, անտառապատ լեռնալանջին գտնվում է «Դարպասներ» կոչվող իշխանական (Հասան Ջալալի) ապարանքը, Բադարայի տարածքի Լեսնոյի մոտ՝ «Դարպաս» գյուղատեղին եւ այլն: Գյուղատեղին, որ փաստորեն բուն ամրոցի մասն է կազմում (ինչպես Խոխանաբերդում), զբաղեցնում է բավականին ընդարձակ տարածություն՝ մոտ 2 հա: Տնատեղերի փոսորակները՝ ընկղմված մացառուտների եւ անտառային փարթամ




Գյուղատեղիի շինության հատակագիծը

բուսականության մեջ, պահպանվում են բարձունքի եւ նրա հարավահայաց լանջին: Գյուղատեղիի վերնամասում ուշադրություն է գրավում մի ընդարձակ (13,1x9,6մ չափերի) շինություն, որի պատերը՝ 80սմ հաստությամբ 1,5մ եւ ավելի բարձրություն ունեն:Կառուցված է անտաշ ու կոպտատաշ քարով, կրաշաղախով: Մուտքը հարավ-արեւմտյան կողմից է:

3 Նոր բառգիրք հայկազեան լեզուի, հ.1, էջ 604:



Ամրոցի արտաքին տեսքը հյուսիս-արեւելքից (հետին պլանում՝ Կաչաղակաբերդը)

Շինությունը բաժանվում է երկու հատվածի. հիմնական մասը գրեթե քառակուսի հատակագծով (9,6x9,2մ) ընդարձակ սրահ է, որի շարունակությունն է կազմում ուղղանկյուն հատակագծով 5,5x3,8մ չափերի աշտարակատիպ (բուն շինության հետ մի ամբողջություն կազմող) կառույցը՝ սրահից բացվող մուտքով: Վերջինս, ներքուստ, շինության երկու հատվածները բաժանող պատի հետ միասին հիմնովին ավերված է:

Ստույգ դժվար է ասել, թե ինչ նպատակով է կառուցվել այս ընդարձակ շինությունը: Իշխանական նստավայր, զորանոց, թե՝ ժողովարան-հավաքատեղի:

Բերդաքարը հարակից բոլոր կառուցվածքներով վերաբերվում է XII-XIII դարերին:



# Դեդ (Նատարին) ամրոցը

Դեռեւս 1987թ., երբ առաջին անգամ այցելեցի այս կողմերը, անգամ տեղացիների օգնությամբ չհաջողվեց գտնել «Նատարին» ամրոցի գտնվելու վայրը, քանզի այդպես էր կոչվում նաեւ Քոլատակից արեւմուտք ձգվող լեռնաշղթան եւ դժվար էր պարզել, թե լեռան որ կողմում է տեղադրված ամրոցը:

Ամրոց - լեռնագագաթի (ձախից առաջին բարձունքը) ընդհանուր տեսքը հյուսիս-արեւելքից



Երկրորդ անգամ (1996թ.) գտնվելով «Խոխանաբերդ»-ում, ճանապարհորդական քարտեզի վրա ուշադրություն գրավեց «Քարագլուխ» կոչվող մի տեղավայր, որը գտնվում է Խոխանաբերդից 4,5-5կմ հարավ (Գառնաքար գյուղից 5-6կմ արեւմուտք), ծովի մակերեւույթից 1933մ բարձրության վրա՝ լեռան կատարին: Անվանումն ամրոցի առկայությունն էր հուշում եւ մի քանի ժամից այնտեղ գտնվելով, պարզվեց, որ Մ.Բարխուտարյանցի եւ այլոց կողմից հիշատակվող Նատարին ամրոցը հենց սա է: Ըստ Մ. Բարխուտարյանցի, Նատարին բերդը գտնվում է Խոխանաբերդից հարավ, քառորդ մղոն հեռավորության վրա[1]: Տեղագրողը նաեւ նշում է, որ ամրոցը պատկանել է Վախթանգյան-Ջալալյաններին, չնայած այդ մասին ակնարկություն չկա պատմության մեջ[2]: Մեկ այլ տեղ, անդրադառնալով

1 Մ. Բարխուտարեանց, Արցախ, էջ 199:

2 Նույն տեղում, էջ 425:

այս ամրոցին, Մ.Բարխուտարյանցը գրում է, որ «Խաղբակեան Ջաջուռ իշխում էր իւր հպատակների վրա Նադարի բերդում»[3], ամրոցը համարելով Խաղբակյան իշխանների սեփականությունը:

Ամրոցին անդրադարձած մեկ այլ հեղինակ՝ Մ.Հովաննեսյանը, կրկնելով Բարխուտարյանցին, միաժամանակ ավելացնում է, որ «այս բերդը եւս արիւնալից կռիվներու թատր եղած է արաբական արշաւանքներու շրջանին: Վերջին ժամանակներս անցած է Ղարաբաղի մելիքներուն ձեռքը, որոնք զայն հզօր ամրոցի մը վերածած են եւ երկար դիմադրած Օսմանցիներուն դէմ»[4]: Սակայն, աղբյուրներում եւ ուսումնասիրողների մոտ նման տեղեկություններ չկան, իսկ Մ.Բարխուտարյանցը, որի վրա հենվում է


Ամրոցի ջրամբարից մի հատված

Մ.Հովհաննեսյանը, այդպիսի բան չի ասել: Օսմանցիներն ընդհանրապես այդ կողմերում չեն եղել:

Ամրոցը գտնվում է Խաչենագետի հովտի ամենաբարձր լեռան (կամ լեռնագագաթի) վրա, որին տեղացիները ներկայումս «Փանջակ քար» անունն են տալիս: Լեռը «Փանջակ» անվանումն է ստացել կողք-կողքի գտնվող հինգ լեռնագագաթների շնորհիվ, որոնք են՝ Մուղդուսի (մահտեսի) քար, Ղուզղուն քար, Խոխանա քար (Խոխանաբերդ), Միջի քար եւ վերջինը՝ Փանջակ քար, որից այն կողմ լեռնաշղթան ընդհատվում է:

Նատարին ամրոցը Խաչենի հովտի ամենագլխավոր դիտակետն է,

3 Մ. Բարխուտարեանց, Պատմութիւն Աղուանից, հ. Ա, Վաղարշապատ, 1902, էջ 154, 192:
4 Մ. Հովհաննէսեան, Հայաստանի բերդերը, Վենետիկ, 1970, էջ 467:



որտեղից պարզորոշ երեւում է Արցախի կենտրոնական մասը՝ մասնավորապես Մռավ լեռնաշղթայից մինչեւ Հադրութի հյուսիսային եւ հյուսիս-արեւմտյան մատույցները, ներկայիս Լաչինի եւ Քարվաճառի շրջանների արեւելյան հիմնական լեռնագագաթները, արեւելքից՝ Տիգրանակերտ-Շահբուլաղն ու հարակից հարթավայրերը: Այս ամրոցից տեսանելի են Խաչենի գրեթե բոլոր ամրոցները:

Ամրոց-բնակատեղին տեղադրված է լեռնագագաթի արեւելակողմում՝ դեպի Խաչենագետի հովիտ ուղղված թեքության վրա եւ


Ջրամբարի հյուսիս-արեւմտյան պատը

ընդգրկում է ավելի քան 2,5 հեկտար մակերես: Թեեւ արտաքինից սրածայր լեռան գագաթնամասը իրականում հարթ է, սակայն բնակատեղին հիմնականում խորդուբորդ տարածքում է, որտեղ տարաչափ բնակարան-կացարանները հարմարեցված են լեռնային տեղանքի ընձեռած սահմանափակ հնարավորություններին: Բնական դժվարամատչելիության պատճառով այստեղ պարիսպների կամ աշտարակների կարիք չի զգացվել: Սակայն, ինչպես համանման այլ ամրոցներում, հատկապես ժայռամերձ հատվածներում կամ եզրամասերում գտնվող շինությունների կամ բնակարանների պատերը կառուցված են եղել համեմատաբար մեծ քարերով՝ աչքի ընկնելով հաստությամբ եւ ամրությամբ:

Ժայռաքար ամրոցի միակ մուտքը հյուսիսային կողմից է, այն հատվածում, որտեղ (արեւելք-արեւմուտք ուղղությամբ) ընդամենը 23,2մ երկարությամբ տեղադրված են կից 8 փոքրիկ, տարբեր չափերի բնակարան-կացարաններ, որոնց միջին մակերեսը 9-15 քառ. մետր է: Որոշ կացարաններ (կամ բնակարաններ) համեմատաբար մեծ չափեր ունեն եւ հողածածկույթի առկայությամբ դժվար է պարզել նրանց ստույգ դերն ու նշանակությունը: Ընդհանրապես, բացառությամբ երեք-չորս շինությունների (որոնց պատերը երեւում են), հինգ-վեց տասնյակի հասնող բոլոր «տները» հողածածկ ու բուսածածկ են եւ միայն փոսորակներից կարելի է որոշել դրանց առկայությունը:

Գագաթնամասի (արեւելահայաց) գլխավոր շինությունը 6,6x4,1մ

չափերն ունենալով (պատի հաստությունը՝ 1,15 մ), ըստ էության զգացնել է տալիս իր իշխանական «դեմքը»: Պատերը, որ կառուցված են մոխրակապտավուն քարով, պահպանվում են 60-110 սմ բարձրությամբ: Ուշագրավ է նաեւ այս շինությունից ոչ հեռու՝ հարավ-արեւմտյան կողմում գտնվող մեկ այլ շինություն, որն ամենայն հավանականությամբ եղել է ամրոցի ջրամբարը (6,6x5մ չափի), նկատի ունենալով ոչ միայն նրա տեղադրությունը (այնպիսի դիրքում, որ անձրեւաջրերն ու ձնհալոցները թափվեն ներս), այլեւ տվյալ պահին մոտ 15-20սմ հաստությամբ ջրի առկայությունը: Սակայն, ամ-րոցաբնակներն օգտվել են ժայռազանգվածից ներքեւ՝ հա-րավակողմում գտնվող աղբյուրից, որը ամրոցից բավականին հեռավորության վրա է, իսկ դեպի այն տանող ուղին՝ դժվարաթեք:



Ամրոցի հյուսիս–արեւելյան կացարաններից մեկի արեւելյան պատը

Ամրոց-բնակավայրի հյուսիսային եւ արեւմտյան կողմերում վար ու ցանքի համար նախատեսված դաշտակներն են, որոնցից երկրորդը (2հա) տե-ղադրված է լեռան հակառակ կողմի խոր ձորում:

Այսպիսին է ամրոցի ներկայիս ընդհանուր վիճակը: Հարկ է նշել նաեւ, որ դատելով կառուցվածքային եւ հատկապես առանձին խեցեղեն մնացորդներից, ամրոցը կարելի է վերագրել X-XIII դարերին: Սակայն, նրա ստույգ պատմությունը հնարավոր կլինի ճշտորոշել այնտեղ շատ թե քիչ կանոնավոր պեղումներ կատարելուց հետո:

Ուսումնասիրությունները բերել են այն համոզման, որ «Նատարին»-ը Կ.Գանձակեցու հիշատակած «Դեղ» ամրոցն է: Նկատի ունենալով ոչ միայն նրա դիտակետ լինելու իրողությունը, այլեւ, Խոխանաբերդի հետ հիշատակությունն ու նրա դժվարագնաց անառիկ դիրքը: Պետք է նկատի ունենալ նաեւ այն հանգամանքը, որ «Նատարին» անվամբ ամրոց պատմական աղբյուրներում չի հիշատակվում:

Կ.Գանձակեցին, Խաչենի իշխան Հասան Ջալալի եւ մոնղոլ հարկահան Բուղայի միջեւ 1246թ. առաջացած հակամարտության առիթով գրում է, որ Բուղան քանդում է Հասան Ջալալի անառիկ ամրոցները՝ «...Խոխանաբերդ



կոչվածը, Դեղը, Ծիրանաքարը»[5]: Նույն միտքն է հայտնում նաեւ Մ.Չամչյանը[6]: Նշված երեք ամրություններն էլ գտնվում են մոնղոլների առաջխաղացման գծի վրա՝ Ծիրանաքարը (որ նաեւ Անանուն է կոչվում)՝ Առաջաձորի մոտ, այնուհետեւ՝ Խաչենագետի երկայնքով վեր՝ դեպի Խոխանաբերդ, այնտեղից էլ՝ Դեղ:

«Դէտ» նշանակում է դիտող, պահապան, դիտանոց, նաեւ «նկատող ի բարձր վայրէ»[7], որը լիովին համապատասխանում է այս ամրոցի տեղադրությանը: Գրեթե նույն կերպ է ստուգաբանվում նաեւ «Նատար»-ը[8]:

5 Կ. Գանձակեցի, Հայոց պատմություն, Երեւան, 1982, էջ 224:
6 Մ. Չամչյանց, Հայոց պատմություն, Գ, Երեւան, 1984, էջ 221-222:
7 Նոր բառգիրք հայկազեան լեզուի, հ. 1, Վենետիկ, 1836, էջ 613, Հր.Աճառյան, Հայերեն արմատական բառարան, Հ. Ա, Երեւան, 1971, էջ 661:
8 Հր. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հ. Ե, Երեւան, 1931, էջ 49:

# Խոխանաբերդ ամրոցն ու մեծակայքի նորահայտ վիմագրերը

Քաղաքական կյանքի անկայուն վիճակը, արտաքին վտանգի անընդհատ աճող սպառնալիքը, դարեր շարունակ Արցախի ժողովրդին հարկադրում էին կառուցել ամրոցներ, որոնք հիմնվում էին ոչ միայն սահմանամերձ հատվածներում, այլեւ խորքերում՝ ամրապնդելով կենտրոնական ռազմավարական հանգույցները: Նման ամրություններից է Խոխանաբերդը: Այն տեղադրված է Խաչենագետից հարավ, այժմյան



Խոխանաբերդի ընդհանուր տեսքը

Մարտակերտի շրջանի Վանք գյուղից 3կմ հարավ–արեւմուտք, բարձրաբերձ լեռան վրա:

Խոխանաբերդը առայսօր սպառիչ ուսումնասիրության չի ենթարկվել: Ս.Ջալալյանցը[1], Մ.Բարխուդարյանցը[2] (նրանք ամրոցն

1 Ս.Ջալալեանց, Ճանապարհորդութիւն ի մեծն Հայաստան, մասն Ա, Տփխիս, 1842, էջ 192: Մ.Բարխուդարեանց, Արցախ, Բագու, 1895, էջ 198-199: Թարխանը Ավան հարյուրապետի
2 եղբայրն է: ԺԸ դարի մի ավետարանի ձեռագրի 248 ա էջում «Խաչինու երկրի տէր» Թարխան յուզբաշու՝ 1726թ. գրված հիշատակարանն է, որը պարունակում է նրա ընտանիքի անդամների եւ ազգականներից շատերի անունները (տե՛ս ԺԸ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, մաս 3, Երեւան, 1967, էջ 161):



անվանում են Թարխանաբերդ), Հ.Օրբելին[3], Բ.Ուլուբաբյանը[4] եւ ուրիշներ[5] ամրոցի մասին որոշակի հիշատակություններ ունեն: Ամենավաղ տեղեկությանը հանդիպում ենք Կիրակոս Գանձակեցու «Հայոց պատմության» մեջ, որտեղ հեղինակը ամրոցին անդրադառնում է մոնղոլների արշավանքների, ինչպես նաեւ Գանձասարի վանքի կառուցման կապակցությամբ[6]: Ուսումնասիրությունները բերել են այն համոզման, որ ամրոցը ժամանակակից է Մեծառանք (Խաչեն) գավառի մի քանի այլ ամրոցների (Շիկաքար, Խաչեն – Կաչաղակաբերդ), բայց կառուցվել է դրանցից հետո՝ ելնելով երկրամասի ռազմապաշտպանական միասնական համակարգի ստեղծման անհրաժեշտությունից:

Ամրոցի հարավային ժայռագագաթը



Համաձայն տեղում կատարած զննումների եւ աղբյուրների պատմահամեմատական վերլուծության, ամրոցի կառուցման ժամանակաշրջանը VII-IX դդ. են, այսինքն՝ հայ ժողովրդի պատմության

3 И.Орбели, Хасан Джалал, Князь Хаченский, Ереван, 1963, էջ 153:
4 Բ.Ուլուբաբյան, Խաչենի իշխանությունը X-XVI դդ., Երեւան, 1975, էջ 123, 180, 196 եւ այլն:
5 Ամրոցին անդրադարձած Գարեգին Կաթողիկոսը Խոխանաբերդը շփոթում է Կաչաղակաբերդի հետ, այն անվանում Ախսաղան Հավքախաղաց (տե՛ս Գարեգին կաթողիկոս, Յիշատակարանք ձեռագրաց, հ. Ա, Անթիլիաս, 1951, էջ 928): Իսկ հարեւանների պատմությունը յուրացնելու գործում փորձված թուրքերը թարգմանել եւ Օղլանղալասի են վերակոչել Խոխանաբերդը (Ադրբեջանի հանրագիտարան, հ. 10, Բաքու, 1987, էջ 62):
6 Կ.Գանձակեցի, Պատմություն Հայոց, Երեւան, 1961, էջ 269, 270, 313:

արաբական շրջանը: Արաբական արշավանքների սպառնալիքը պետականությունը կորցրած, նախալեռնային վայրերում անհաջողությունների մատնվող իշխաններին ստիպում էր քաշվել դժվարագնաց լեռնազանգվածները, ամրանալ ժայռագագաթներին, կառուցել ամրոցներ, հոգալ ժողովրդի պաշտպանությունը եւ պայքարել թշնամու բռնակալության դեմ: Ինչպես հայտնի է, այդպես չէր Արշակունյաց եւ նրան հաջորդող մարզպանական շրջանում, երբ կարելի էր մեծ զորաբանակ հանել եւ թշնամուն ճակատամարտ տալ հարթավայրում՝ սահմանամերձ հատվածներում (օրինակ՝ 450թ. Խաղխաղի ճակատամարտը) եւ կանխել նրա առաջխաղացումը երկրի խորքը: Եվ պատահական չէ, թե ինչու պարսիկներին, իսկ հետո արաբներին (եթե չհաշվենք մանր-մունր ապստամբությունները) չհաջողվեց ոտք դնել Արցախի լեռնային գավառները, որտեղ Առանշահիկ իշխանական տան ներկայացուցիչները, իրենց թագավորներ հայտարարելով, պահում էին հնագույն իշխանական տոհմի ավանդներն ու հավակնությունները[7]:

Ուսումնասիրողներից Գրիգոր Տեր-Հովհաննիսյանցը Խոխանաբերդի կառուցումը վերագրում է Սահլ իշխանին[8]: Թերեւս դրա վկայությունը պիտի դիտել ամրոցից հյուսիս, Խաչենագետի ափին գտնվող մի հարթ եւ բավական ընդարձակ տարածքի անվանակոչությունը, որը կրում է նրա անունը՝ Սահլատափ (Սահլի հող): Սա ըստ էության ցույց է տալիս, որ այս վայրում է գործել Սահլ Սմբատյան Առանշահիկ իշխանը, որը ինչպես հայտնի է, Շիկաքարի տերն էր, որի մատույցներում 837թ. բռնեց «մարդախողխող, աշխարհավեր, արյունարբու գազան»[9] Բաբեկին եւ հանձնեց արաբների ձեռքը:

Ամրոցի վերաբերյալ X դարից հիշատակություններ հայտնի չեն: XI դ. երկրորդ կեսին Խաչենում իրենց տիրապետությունը հաստատեցին սելջուկ-թուրքերը, այնուհետեւ, սելջուկ-թուրքերից իրենց անկախ հռչակած ամիրաները (XII դ. երկրորդ կես): Խոխանաբերդը Ներքին Խաչենի վարչական կենտրոնն էր: Ամրոցում իշխում էին սկզբում Գրիգոր[10], իսկ հետո՝ Վախթանգ[11] իշխանները:

1236թ. սկսվում են մոնղոլ-թաթարական արշավանքները: Ինչպես

7 Բ.Ուլուբաբյան, Դրվագներ, Հայոց Արեւելից կողմանց պատմության, Երեւան, 1981, էջ 272:

8 Գ.Տեր-Հովհաննիսյանց, Բաղդասար Մետրոպոլիս Հասան-Ջալալյանցի համառոտ կենսագրություն (Փորձ, 1880, N 5, էջ 133):

9 Մ. Կաղանկատվացի, Պատմություն Աղվանից, Երեւան, 1969, էջ 259:

10 Ղ.Ալիշան, Հայապատում, Վենետիկ, 1901, էջ 387:

11 Բ.Ուլուբաբյան, Խաչենի իշխանությունը..., էջ 168:





Ամրոցի արտաքին տեսքը հյուսիս-արեւելքից

հաղորդում է Կ.Գանձակեցին, Խաչենը վիճակով բաժին էր ընկել Ջուղբուղային, որը Մ.Չամչյանի «Հայոց պատմության» մեջ հիշատակված է «Ջոլա եղբայր Չարմաղանայ»[12]: Այս զորավարը Խաչենի անպաշտպան շրջաններն ասպատակելուց ու ավերելուց հետո, անակնկալ հարձակվում է պաշտպանական ամրությունների վրա, անխնա սրի մատնում, մասամբ էլ գահավեժ անում այնտեղ ապաստանած ժողովրդին[13]: Արնածարավ կողոպտիչներից բնակչությանը պաշտպանելու եւ հարձակումը կասեցնելու նպատակով Խաչենի տեր Հասան Ջալալ իշխանը իր ընտանիքի հետ ամրացավ Խոխանաբերդում: Երկար ժամանակ նրա ամրոցը պաշարած թշնամին, տեսնելով, որ գրավել չի կարողանում, սկսեց ավերել շրջակա գյուղերը: Ջալալ իշխանը իր երկիրը ավերումներից զերծ պահելու համար մեծագին ընծաներով իջավ Ջոլայի բանակը եւ նրան խոստացավ ամեն տարի հարկ եւ զորք տալ, եթե նա համաձայնի թողնել իր երկիրը: Ջոլան սրանով չբավարարվեց եւ պահանջեց, որ հայ իշխանը, ի հաստատումն իր խոստման, Ռուզան դստերը կնության տա իր Բուղա եղբորորդուն: Հանուն հպատակների փրկության, Ջալալ իշխանը վճռեց զոհել սիրելի աղջկան, որին Ջոլան առնելով՝ Ջալալ իշխանի հետ խաղաղություն հաստատեց եւ զորքը հանեց երկրից[14]:

Սակայն շուտով մոնղոլները ավերեցին և՛ Խոխանաբերդը, և՛ այլ

12 Մ.Չամչյանց, Հայոց պատմություն, հ. Գ, Երեւան, 1984, էջ 210:

13 Կ.Գանձակեցի, նշվ. աշխ., էջ 267:

14 Նույն տեղում, էջ 269, Մ.Չամչյանց, նշվ. աշխ., էջ 210, Գ.Տեր-Հովհաննիսյանց, նշվ. աշխ., էջ 139:

ամրոցներ: 1246թ., երբ մոնղոլական մեծ ժողովում Գույուկն ընտրվեց մեծ խան, նրա առաջին ձեռնարկումը նվաճված երկրներում հարկահանությունն էր. այդ նպատակի համար նա հարկահաններ ուղարկեց ամեն տեղ: Խաչենի կողմերում հարկեր էր հավաքում Բուղան: «Վերջինս,- պատմում է Կ.Գանձակեցին,- գալով թաթարական զորքի հետ, ներխուժում է ավագանու տները եւ անխնա կողոպտում: Ոչ ոք չէր համարձակվում ընդդիմանալ նրան, որովհետեւ նա իր շուրջն էր հավաքել քրիստոնյաներին թշնամի՝ տաճիկ եւ պարսիկ ավարառուներին: Վերջիններս բարեպաշտ Հասան իշխանի դեմ գրգռեցին Բուղային, որը քանդեց Հասան Ջալալի անմատչելի ամրոցները՝ Խոխանաբերդը, Դեդը, Ծիրանաքարը եւ այլն»[15]:

Ամրոցի գլխավոր ժայռագագաթը արեւմուտքից



Դարավերջին Խաչենը ենթարկվեց նոր աղետի, այս անգամ մոնղոլ-թաթարական հորդաների կողմից, որոնց առաջնորդում էր Լենկ Թեմուրը: Ժողովրդի դրությունը չբարելավվեց նաեւ XIV դ. երկրորդ կեսին: Ավերածությունները պարբերաբար շարունակվեցին կարակոյունլու եւ ակկոյունլու թուրքմենների տիրապետության ժամանակ: Երկրամասի պարբերական ամայացումը եւ հայ ժողովրդի բարեկեցության ու մշակույթի

15 Կ.Գանձակեցի, նշվ. աշխ., էջ 313, Մ.Չամչյանց, նշվ. աշխ., էջ 222:



կործանումը ամենամեծ չափերով շարունակվեցին XV դարում: Խոխանաբերդը այլեւս կորցրել էր իր վաղեմի դերն ու նշանակությունը: Այն վերջնականապես ավերվեց XV-XVI դդ. թուրքերի արշավանքների ժամանակ[16]:

Ամրոցի կենտրոնական մասն ընդգրկում է «Խոխանա» ժայռագագաթը՝ իր շրջակայքով: Այստեղ, ժայռազանգվածի հարավային կողմում (նրա թիկունքին), մի կիսահարթ լանջ-սարավանդակի վրա, որի հարավային հատվածներն է կազմում լեռնազանգվածի շարունակությունը, տեղադրված է Խոխանաբերդ պատմական ամրոց-բնակավայրը՝ շրջապատված լեռնագագաթներով ու ժայռապատնեշներով, ինչպես նաեւ՝ դարավոր անտառով: Սարավանդակը հարավից եւ մասամբ արեւելքից ավարտվում է անդնդախոր ձորերով, որոնք էլ ավելի անառիկ են դարձնում անգամ ամրոցամերձ տարածքը: Տեղանքի ընտրությունը պատահական չէր. հայ իշխանները, ավելորդ արյունահեղություններից խուսափելու նպատակով, ստիպված էին ժողովրդին պատսպարել անմատչելի, դժվարագնաց լեռներում, որպեսզի կարողանային հաջողությամբ պայքարել զավթիչների դեմ եւ դրանով իսկ ազատ պահել երկրամասը: Այժմ բնակատեղիից պահպանվում են տների մնացորդները՝ ծածկված հողի շերտերով: Նախնական հաշվումներով կացարանների թիվն անցնում է հիսունից: Քանի որ բնակատեղին հարավից եւ մասամբ արեւելյան կողմից հարում է ժայռազանգվածի կտրվածքին, պաշտպանական նկատառումներով (վայր չընկնելու նպատակով) եզրագծով պատ է կառուցվել, որը չի պահպանվել: Առանձին սենյակներ առաջապահ, պաշտպանական նշանակություն ունեին: Օրինակ, բնակատեղիի արեւելյան կողմում տեղադրված բնակարանը, որն ունի քառակուսի հատակագիծ (չափերը՝ 6x6 ք.մ.), ըստ էության նպատակ ուներ պաշտպանելու ամրոցամերձ արեւելյան դժվարամատչելի մուտքը: Այստեղ, տուն-կացարանները ներսի բնակարանների համեմատությամբ կառուցված են բավական մեծ քարերով եւ ունեն 1,20մ հաստություն: Բնակատեղին, որն ընդգրկում է շուրջ 0,5 հեկտար եւ տարածվում է ամրոցի երկու ժայռագագաթների ստորոտով, հարավ-արեւելք-արեւմուտք ուղղությամբ, ունի մի այնպիսի դիրք, որը հնարավորություն է տալիս պահպանության տակ առնելու դեպի գլխավոր ամրոց՝ Խոխանա տանող մուտքը:

Խոխանաբերդի արեւմտյան եւ հարավ-արեւմտյան հատվածներում տարածվում են վարուցանքի համար հատկացված ոչ մեծ տափարակները

16 Հայաստանի եւ հարակից շրջանների տեղանունների բառարան, հ. 2, Երեւան, 1988, էջ 765:

(ժայռազանգվածի ստորոտում մնացել են ընդեղենի եւ ցորենի մի՛ քանի հորեր), դրանցից արեւմուտք՝ գերեզմանոցը եւ աղբյուրը, որը կրում է Ռուզանի (Յասան Ջալալի աղջկա) անունը:

Խոխանաբերդ ամրոցի գլխավոր ժայռագագաթը Խոխանա քարն է՝ միջնաբերդը, որը տեղադրված է լեռան արեւմտյան եզրին: Ամրոցակալ ժայռի բարձրությունը մոտ 100մ է, իսկ ծովի մակերեւույթից հաշված՝ 1812



Խոխանաբերդ ամրոցի ընդհանուր տեսքը

մետր: Միակ մուտքը արեւելյան կողմից է. «Սաստիկ զառիվեր, խիստ վտանգավոր եւ միջոց ահարկու կածան ժեռ քարի վրայով արեւելյան կողմից դեպի հարավ-արեւմուտք բարձրանում է մանված ձեւով: Ահա այստեղի դժվարատար եւ միանգամայն սոսկալի է նեղ կածանը, քանզի, Տերն մի՛ արասցե, եթե սահեցավ բարձրացողի ոտքն կամ փոքր-ինչ ծռվեցավ նորա մարմնո հավասարակշռության դիրքն, խպառ կորսված է. վասն զի ընկնելուց հետո սեղմացյալ ժայռերին զարկվելով դիշի գլորվի անդունդն»[17]: Կածանը, որ վիմափոր է եւ 2-3 մետր լայնություն ունի, տանում է ամրոցի վերնամասը, որի մակերեւույթը բավականին հարթ է եւ ընդգրկում է ոչ մեծ տարածություն՝ մոտ 250քառ. մետր:

Ջուրը Խոխանաբերդի եւ ընդհանրապես ամրոցների համար

17 Ս.Բարխուտարեանց, նշվ. աշխ., էջ 198:



ունեցել է առաջնահերթ նշանակություն: Եվ որպեսզի պաշարման ժամանակ թշնամին չկարողանա խափանել ջրամատակարարման գործը ամրոցի վրա, ժայռագագաթի արեւմտյան կողմում, իրար կից փորված է երկու վիմափոր ջրամբար: Առաջինի երկարությունը 3,85մ է, լայնությունը՝ 2,95, խորությունը անցնում է 2,50-ից (հողածածկ է): Երկրորդի չափերն են՝ 3,90x3,30x2 մետր:

Ջրամբարները ներքուստ սվաղված էին անջրաթափանց կրաշաղախի ամուր շերտով, որի մնացորդները տեղ-տեղ պահպանվում են:



Վիմափոր կացարան ամրոցի մոտակայքում

Դրանք կառուցվել են անձրեւաջրերի հավաքման համար եւ կարեւոր նշանակություն ունեին հատկապես պատերազմների ժամանակ, երկարատեւ պաշարման պայմաններում:

Խոխանաբերդ ամրոցի գլխավոր ժայռագագաթը երկրամասի ռազմա-պաշտպանական համակարգում կարեւոր դեր ունեցող ազդանշանային կենտրոնական դիտակետ է: Ամրոցի հարավ-արեւմտյան կողմում, մոտ 10կմ հեռավորության վրա գտնվում է Կաչաղակաբերդը, նրանից այն կողմ՝ Քիրսի լեռնաշղթան՝ Շուշին իր շրջակայքով, Կարկառ գետի հովիտը, արեւելքից՝ Խաչենագետի ստորին հովտում՝ ս. Գեւորգի սարը, որի գագաթին Կասսապատի բերդն էր, իսկ սրանից արեւելք՝ Շիկաքար ամրոցի


Խոխանաբերդ.
Մակար Բարխուտարյանցի հետքերով (առաջին պլանում հուշարձանների պահպանության ԼՂՀ տեսչության մասնագետներ Ջամալ Թադեւոսյան եւ Արտո Մարտիրոսյան)

արեւմտյան եւ հյուսիսային հատվածները, ընդհուպ մինչեւ Տիգրանակերտ: Հյուսիսային կողմում Մռավի լեռնազանգվածն է, որից հարավ-արեւմուտք՝ Հաթերք, Ականա, Հավքախաղաց եւ այլ ամրոցները: Արեւմտյան կողմում, Խաչենագետի վերին հոսանքի ուղղությամբ պատմական Վայկունիք սահմանամերձ գավառի արեւելյան տարածքներն են, ինչպես նաեւ՝ Բերդաձոր գավառի հյուսիսային հատվածները: Ամրոցի արեւելյան եւ հյուսիսային կողմերում, մոտ 400-500մ հեռավորության վրա գտնվում են ազդանշանային համակարգի մյուս կարեւոր կետերը, որոնք պետք է հսկողության տակ պահեին Խաչենագետի ձորահովիտը՝ արեւելք-արեւմուտք ուղղությամբ:

Խոխանաբերդը, որ տեղադրված է ռազմավարական կարեւոր վայրում՝ լեռնային երկրամասի կենտրոնում, անմիջական կապեր ուներ շրջակա ամրոցների հետ: Քաղաքական իրավիճակի բարդացման պայմաններում կապը տեղի էր ունենում ազդանշաններով, որոնք տարբեր ժամանակներում իրականացվում էին տեխնիկական տարբեր միջոցներով:

Ամրոցի պաշտպանական հնարավորությունների մեջ հսկայական նշանակություն ունեին նաեւ ժայռեղեն արգելապատերը, դժվարամատչելի կիրճերը, վիմավոր բնակարանները եւ այլն:

Խոխանաբերդ ամրոցի շրջակայքում սփռված են բազմաթիվ հուշարձաններ՝ մ.թ.ա. III-I հազ. դամբարաններից մինչեւ XII-XIIIդդ. եկեղեցիներն ու խաչքարերը, որոնք անցյալի պատմական իրականությունը առավել հանգամանորեն ուսումնասիրելու տեսակետից ամենահավաստի աղբյուրներն են: Այդ հուշարձաններից են Գառնաքար[18] եւ շրջակա այլ

18 Գյուղի տարածքի հուշարձանների, այդ թվում Խոխանաբերդի ուսումնասիրության գործում իրենց օգնությունն են ցույց տվել Պատմական միջավայրի պահպանության Արցախի տարածքային ծառայության աշխատակիցներ Ջամալ Թադեւոսյանը եւ Արտո Մարտիրոսյանը, որոնց շնորհակալություն ենք հայտնում:




Նորահայտ խաչքար, XIII դ

գյուղերի տարածքների արձանագիր կոթողները, որոնք Խաչեն գավառի առայսօր հետազոտության նյութ չդարձած հիշատակարաններից են եւ կարեւոր տեղեկություններ են հաղորդում Խաղբակյան նշանավոր իշխանական տոհմի մասին[19]:

«Մուղդուսի» եկեղեցին, որ բնորոշ է XII - XIIIդդ., գտնվում է Խոխանաբերդին մեծ, հարավային կազմող «Մուղդուսի» կոչվող լեռան տակ՝ հարավ-արեւմուտք: Այն իրականում ժայռին հըպված մի փոքրիկ շինություն է՝ ուղղանկյան հատակագծով (չափերը՝ 6,6x7,6մ): Ներկայումս պահպանվում է կիսավեր վիճակում՝ 2,8մ բարձրությամբ: Մուտքն ունի դեկորատիվ երիզվածք(չափերը՝ 1x4,4):

Եկեղեցուց քիչ ներքեւ, նույն ժայռի մեջ է գտնվում այսպես կոչված «Ճգնավորի քարայրը», որը ներկայումս պահպանվում է 5մ խորությամբ եւ 1,6մ լայնությամբ (բարձրությունը՝ 2մ): Քարայրի առջեւով անցկացված եւ այն փակող պատը, որ ձգվում է արեւելք-արեւմուտք ուղղությամբ, ունի 6մ բարձրություն եւ 1,4մ հաստություն:

Հավապտուկ վանքը գտնվում է Խոխանաբերդից 1,5 կմ հյուսիս-արեւելք, անտառապատ բլրի վրա: Այն բաղկացած է մի շարք կառույցներից՝ եկեղեցուց, գավթից, ինչպես նաեւ չորս այլ

19 Խաղբակյան տոհմի ծագումնաբանությունը քննության է առել պատմաբան Ռ. Մաթեւոսյանը (ՀՍՍՀ ԳԱ Լրաբեր հասարակական գիտությունների, 1986, N 11), իսկ վիմագրագետ Ս.Սաղումյանը վերծանել է Վասակ եւ Գրիգոր Խաղբակյաններին նվիրված արձանագրությունները (ՀՍՍՀ ԳԱ Լրաբեր հասարակական գիտությունների, 1977, N 9):

շինություններից (զբաղեցնում են 16-17 մ երկարությամբ եւ 13 մ լայնությամբ տարածք), որոնք, բացի հոգեւոր դեր կատարելուց, ծառայել են որպես «բնական տուն եւ շիրիմ Ջաջռոյ իշխանի եւ նախնեաց իւրոց»[20]:

Հավապտուկ վանքը Խաղբակյան նշանավոր տոհմի հոգեւոր կենտրոններից էր եւ տոհմական գերեզմանատունը[21]: Տոհմի նախահայրը Մամիկոնյան Բակ իշխանն[22] է, որը Ավարայրի ճակատամարտից հետո, 452թ. ճեղքում է Սասանյան զորքերի շղթան, 700 հոգով դուրս գալիս Անգեղ բերդից[23] եւ, համաձայն Վանենու (Ջաջուռ Խաղբակյանի դուստրը) 1232թ. գրչագիր ավետարան-հիշատակարանի տեղեկությունների, հաստատվում Արցախում[24]:

Խաղբակյան տոհմը որպես Մամիկոնյաններից սերված է ներկայացվում նաեւ Ն.Լամբրոնացու 1332թ. հիշատակարանում[25]:

Ավարայրի ճակատամարտից հետո հաստատվելով Ներքին Խաչենում՝ Խաղբակյանները տեղի Առանշահիկ թագավորական տոհմի իշխանների աջակցությանն են արժանանում եւ ամրապնդում լեռնային երկրամասը, հաջողությամբ պայքարում ոչ միայն ընդդեմ պարսիկների, որոնք «երկյուղ կրելով, դուրս չէին գալիս Արցախի ջոկատների դեմ»[26], այլեւ արաբների ու մյուս զավթիչների: Համաձայն XIII դ. մի արձանագրության[27], Խաղբակյանները ստորադրված էին Խոխանաբերդի կամ Ներքին Խաչենի մեծ իշխաններին:

Ստորեւ ներկայացվող եւ առաջին անգամ հրապարակվող վիմագիր արձանագրությունները[28] օգտակար նյութ են պարունակում Խաղբակյան

20 Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԳ դար (1201-1300թթ.), կազմեց՝ Ա.Ս. Մաթեւոսյան, Երեւան, 1984, էջ 182:

21 Գ.Հովսեփյան, Խաղբակյանք կամ Պռոշյանք Հայոց պատմության մեջ, մաս I, Վաղարշապատ, 1928, էջ 34 (այսուհետեւ՝ Խաղբակյանք):

22 Նույն տեղում, էջ 27:

23 Եղիշէի Վասն Վարդանայ եւ Հայոց պատերազմին, Երեւան, 1957, էջ 122-123:

24 Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԳ, էջ 182:

25 Ղ.Ալիշան, Սիսական, Վենետիկ, 1893, էջ 487, նույնի՝ Արցախ («Բազմավեպ», 1988, էջ 269):

26 Հ.Հարությունյան, Ավարայրի ճակատամարտը եւ հայ ազատագրական պատերազմները պարսկական տիրապետության դեմ V դարում, Երեւան, 1962, էջ 25:

27 Խաղբակյանք ..., էջ 33:

28 Օրբելին, Մ.Բարխուտարյանցը, Գ.Հովսեփյանը եւ ուրիշներ Հավապտուկ վանքի գերեզմանոցից գրի են առել 12 արձանագրություն (տե՛ս Դիվան հայ վիմագրության, պր. 5, Երեւան, 1982, էջ 33-36): Որեւէ կերպ չկարողացանք տեղում տեսնել հրատարակված արձանագրությունները, բացառությամբ մեկի: Դրանք գտնելու համար պեղման-մաքրման աշխատանքներ են պետք:



մեծանուն տոհմի մասին, ինչ-որ չափով լրացնում նրա կենսագրությունը:

1. Խաչքար, գտնվում է գերեզմանոցի կենտրոնում (չափերը՝ 100x65x65սմ): Կենտրոնում մեծ խաչաքանդակն է, որի եզրամասերը պատված են պարզատիպ քանդակաշարով: Ստորին մասում հինգ տողանոց արձանագրությունն է, որից պարզվում է, որ Վասակը մոր հետ խաչքար է կանգնեցրել Սմբատի հիշատակին:

Ի ԹՈՒԻՆ ՈՁԱ (=1232) ԵՍ Վ/ԱՍԱԿ ԵՒ ՄԵՐՍ/ ԿԱՆԳՆԵՑԱՔ ՁԽ/ԱՉՍ ՍՄԲԱՏԱ ՈՐ/Ք ԵՐԿՐՊԱԳԵՔ [ՅԻՇԵՑԵՔ Ի ՔՐԻՍՏՈՍ]:

2. Խաչքար, գտնվում է գերեզմանոցի հարավ-արեւելյան կողմում (չափերը՝ 1,34x58-60x12 սմ): Ունի պարզ, բայց XIII դ. բնորոշ քանդակներ: Արձանագրությունը տարածվում է հուշարձանի քիվից մինչեւ ստորին մասը՝ աջակողմյան եզրագծով.

ԵՍ ԱՂ/(Բ) ԵՐ ՈՐԴ/Ի ՋԱՀ/ԱՆԻՆ Կ/ԱՆԳ/ՆԵՑ/Ի ՁԽ/Ա/ՉՍ ՀԱՒ/ՐԻՄ/
(ՈՐՔ ԵՐԿՐՊԱԳԷՔ ՅԻՇԵՑԵՔ Ի ՔՐԻՍՏՈՍ)
(վերջին բառերը եղծված են եւ դժվար է ընթերցել):

3. Խաչքար, գտնվում է վանքից 7-8մ արեւելք (չափերը՝ 1,6x49x12սմ): Հուշարձանի կենտրոնում նրբահյուս խաչաքանդակն է շրջապատված մանվածո զարդաքանդակաշարով: Խաչքարն առանձնապես մեծ արժեք է ներկայացնում թիկունքին փորագրված արձանագրությամբ.

Թ(ՈՒԻՆ) ՈՀԲ (=1223) ԵՍ (Գ) ՐԻԳՈՐ ԵՒ ԹԽ ՄԵՐ ՈՐԴԻ(Ք) ՀԱՍԱՆԱ ԿԱՆ ԳՆԵՑԱՔ ՁԽԱՉՍ ԳՈՐԳԱ ԵՂԲԱԻՐ ՄԵՐ (ԱՍՏՈՒԱԾ) ՈՂՈՐՄԵԱ ՆՄԱ ԱՄԵՆ:

4. Խաչքար, նույն գերեզմանատան մեջ, կոտրված: Ստորին մասում արված են քահանայի եւ հեծյալի բարձրաքանդակներ: Արձանագրությունը հետեւյալն է.

Թ[ՈՒԻ]Ս ՈԼ (=1181) ԷՐ/ ԵՍ ՎԱՐ/ՀԱՄ ԿԱ/ՆԳՆԵ/ՑԻ ՁԽԱՉՍ/ ԵՂԲԱՐՑ ԻՄՈՑ. /ԽԱՐԻԲ ՍԱՐԳԻՍ/ ՔԱՀԱ[ՆԱ][29]:

5. Գերեզմանատան հարավային եզրի խաչքարը (չափերը 1,30x85սմ) աչքի է ընկնում բուսական ու երկրաչափական քանդակներով: Կենտրոնում հյուսածո քանդակներով խաչապատկերն է, խաչի հորիզոնական թեւերի վրա՝ խաղողի ողկույզներ: Արձանագրությունը ստորին մասում է.

ԷՐՆԻ ՎԵՐ/ԱՏԱՊԱՆԻ Հ/[ԱՒ]Ր ՄԵՐ ՈՒ ՄԵՐ ԵՂԲ/[ԱԻ]Ր ՎԱԽՏԱՆԳԱՅ/ ՊԱՏԱ[ՐԱԳ]:

Վախտանգ անվան հիշատակությունը Խաղբակյանների

29 Այս արձանագրությունը Հ.Օրբելին արտագրել է բացթողումներով, առանց խաչս, եղբարց, իմոց, խարիբ բառերի (տե՛ս И.Орбели, Бытовые рельефы, Ереван, 1963, էջ 199):

տոհմական գերեզմանատանը պատահական չէ: Ինչպես նշել է Գ.Հովսեփյանը[30], Հասան Մեծ իշխանի որդու՝ Տանգիկ Վախտանգի տոհմը ցեղակից էր Խաղբակյան-Պռոշյանների տոհմին: Ընդ որում, Հավապտուկը նրանց աթոռանիստ կենտրոնն էր, իսկ Գանձասարը՝ տոհմային տապանատունը:

6. Խաղբակ Բ-ի խաչքար-տապանաքար՝ կիսովին ջարդված (1,30x75x14սմ): Կենտրոնում ավանդական դարձած մեծ խաչաքանդակն է՝ մանվածո, որի վերին հատվածներում, խաչի հորիզոնական երկու թեւերի



Խաղբակ Բ իշխանի նորահայտ խաչքարը

վրա մրգերի (խաղող եւ խնձոր) բարձրաքանդակներն են: Խաչքարի եզրամասերը հյուսված են զարդաքանդակներով: Առանձնապես հետաքրքիր է ներքնամասը՝ արձանագրությունն ու բարձրաքանդակները: Խաղբակ իշխանը պատկերված է կանգնած, զինավառ (իշխանին հատուկ գլխարկ, ձախ ձեռքում՝ երկարասայր սուր, աջում՝ դաշույն): Իշխանից ձախ Գեւորգ (արձանագրություններում Գերգ, Գորգ) վանահայրը[31] աջ ձեռքով ցույց է

30 Խաղբակյանք..., էջ 28-29:

31 Սա Մեծառանից տան Գրիգոր եպիսկոպոսի եղբորորդին է, որը վանքի 1163թ. արձանագրության մեջ հիշվում է իբրեւ վանական, իսկ ավելի ուշ՝ մի անթվական արձանագրության մեջ՝ «հայր վանից» եւ հաջորդել է վանքի առաջին վանահայր Հոհանին (Խաղբակյանք ..., էջ 30: Տե՛ս նաեւ սույն հոդվածի 3-րդ արձանագրությունը):



տալիս արձանագրությունը եւ կարծես թե պահում է անվան Խ տառը:

Բարձրաքանդակներից վերեւ գրված է. Թ(ՈՒԻՆ) ՈԽԳ (=1194) ԽԱՂԲԱԿ: Նրանից ձախ քանդակված է Թ տառը: Այս արձանագրությունը վերաբերում է Խաղբակ Բ իշխանին, որը ինչպես պարզվում է, մահացել է 1194թ., ինչը առ այսօր հայտնի չէր պատմագիտությանը:

Խաղբակյան հայտնի իշխանները՝ Գրիգորը, Վասակը, Զաջուռը եւ Հասանը Խաղբակ Բ-ի որդիներն են: Առաջինը զոհվել է ղփչաղների դեմ մղված Գանձակի ճակատամարտում (1222թ.): Վասակ Խաղբակյանը, գործակցելով ամիրսպասալար Զաքարեին եւ աթաբեկ Իվանեին (XIII դ. առաջին տասնամյակ) ազատագրեց Վայոց ձորը, Դվինը, Բջնին եւ հիմնադրեց մի ընդարձակ իշխանություն, որի կալվածքները գտնվում էին Վայոց ձորի, Շահապունիքի, Վարաժնունիքի եւ Կոտայքի գավառամասերում: Արատեսի վանքի մի արձանագրության վկայությամբ Վասակը նվաճել էր Եղեգյաց ձորի ամրոցները, իսկ ըստ Ստ.Օրբելյանի՝ նաեւ Հրաշկաբերդը[32]:

Զաջուռը զորական էր, պատերազմների ժամանակ եղբոր՝ Վասակ Խաղբակյանի զինակիցը: Ինչպես երեւում է Հավապտուկի արձանագրություններից[33], Զաջուռ իշխանի հիմնական տիրույթը Խաչենագետի հովիտն էր: Նրա իշխանության տակ էր ոչ միայն նշված վանքը, այլեւ Կոշիկ անապատը, իսկ Նատարին բերդը նրա ամրոցն էր[34]: Խաղբակի մյուս որդու՝ Հասանի մասին հիշատակությունները սակավ են: Միակ արձանագրությունը, գրված նրա անունից, վերաբերում է 1184թ.[35]: Կարծում ենք, որ այս Հասանը Բաղաց Գրիգոր Երկրորդ թագավորին փեսայացած Հասանը պետք է լինի, որը գեռաքարեցի էր, իսկ Գեռաքարը (Գառնաքարը–Ս.Ս.) Խաղբակյանների բնակատեղին էր[36]:

Ստ.Օրբելյանը նշում է, թե Գրիգորը, որ իշխում էր Բաղքում, բերել տվեց Խաչենից գեռաքարեցի մի կտրիճի՝ Հասան անունով, իր դուստր Կատային նրան կնության տվեց եւ դարձրեց իր թագավորության ժառանգորդը: Երբ սելջուկները 1170թ. պաշարեցին Բաղաբերդը, «Հասան կացոյց բերդապահս, եւ ինքն առեալ զկին իւր եւ զընտանիս՝ ի գիշերի ել ի բերդէն եւ անց, գնաց ի գաւառ իւր եւ ի տուն ի Խաչէն»[37]:

7. Խաչքար (ջարդված), Խոխանաբերդից հարավ-արեւելք,

32 Խաղբակյանք..., էջ 35, Ստ. Օրբելյան, Սյունիքի պատմություն, Երեւան, 1986, էջ 289:

33 Դիվան, պր. 5, էջ 35:

34 Մ.Բարխուտարեանց, Պատմութիւն Աղուանից, հ. Ա, Վաղարշապատ, 1902, էջ 192-193:

35 Դիվան, պր.5, էջ 34: Տե՛ս նաեւ И.Орбели, նշվ. աշխ., էջ 198:

36 Խաղբակյանք..., էջ 32:

37 Ստ. Օրբելեան, Պատմութիւն նահանգին Սիսական, Թիֆլիս, 1910, էջ 337:

«Իծաfարի ձorում»: Կենsrոնում խաչաfանդակն է, cուrջը՝ բուսական, մանված զարդանախcեr: Թիկունfին կցագrեrով աrձանագrություն է՝ 8 ՝sող.

(ԹՈՒ)ՈՒ (=1171) ԹԱՐԴԲԱՆ (=ԹՈՐԴԱ՞Ն, ԹԱՐԴԱՆ) ԵՐԵՑ Թ/ՈՌՆ ՅԱՍԱՆԱ ԵՒ ՈՐԴ(Ի) ՆՈՐԱ ՍՄ/ԲՅԱԴԻ ԿԱՆԳՆԵՑԻ ԶԽԱՉ/Ս ԻՆՉ ԵՒ ԱՄՈՒՍՆՈ ԻՄՈ ՏԻՐԱՄԱԻՐ(Ն) ԵՒ ԱՍԳՈՐԴՈՒ ՄՈՐ ՅԱՆԷՍԻ ԵՒ /ՎՐԴԱՆԷՍԻ (ՈՐ ԿԻՍԱԻՐԵԱ /ՓՈԽԵՑԱՆ Ի ՔՐԻՍՏՈՍ) ՈՐՔ ԵՐԿՐՊԱ (ԳԷՔ / ՅԻՇԵՑԵՔ):

8. Խաչfաr Նոr cենի «Ցrsաջուr» վայrում, գsնվում է Սաrդաrաcեն գյուղից 1,5կմ աrեւմուsf, աrձանագrությունը՝ չոru sող.

(Ո)ԽԲ (=1193) ԹՈՒԱԿԱՆ/ (ԿԱՆԳՆԵ) ՑԻ ԶԽԱՉՍ/ (ՍՈՒՐԲ) ՅՈՌԵԿԱ /Ք(ՐԻՍՏՈՍ) ՅԻՇԵՑ(ԵՔ):

9. Քաrի կsոr նույն վայrում, նrա վrա կա դժվաr ընթեռնելի, fայfայված 7 sողանոց գrություն.

(Ո)ԿԱ (=1212) (Յ)ԱՍ(Ա)ՆԻ/ ԳՐ(Ի)Գ(Ո)Ր(Ի) Յ(Ո)ՎՐ/ԵՍ... ՄԷԿԵ. Ո/Կ(Ա)Ն (ԳՆԵ)ՑԱ (Ք) (Զ)/(ԽԱՉՍ)ՈՐ (ԿԱՐԴԱ)/ՅՔ Ա(Ղ)Ո(ԹՍ)/Յ(ԻՇԵՑԵՔ):

10. Աrձանագrություն Կոcիկ անապաsի Մեծ եկեղեցու (Քոլաsակ գյուղից 8կմ աrեւմուsf) բեմի բաrձrության վrա[38].

[ՅԱՍԱՆ] ԱՅ ԵՒ ՄԱՄ..................................[ՄԱՄ] ԱԽԱԹՈՒՆԻՆ ԹՈՌՆ ՎԳ: ՅԵՏ ԻՒՐ..........................ՂԱՆՆ ԳՆԱՑԻ ՅԱՐԵՒ ՔԻ..........................ԻՄ ԱԶԳԷՆ ԹԱՓԵՑԻ Դ ԱՏԱՍՏԱՆԱԻ ԶԶՐԿԱՆՔՆ ՄԵՐ: Ի ԺԱՄԱՆԱԿԻՆ ..................ԽԷՐԽԱՆ, ՄԱՐԾՊԱՆ, ՄԱՄԻԿՈՆ ԿԱՄԵՑԱՔ ՆՈՐՈԳԵԼ ԶՄԵՐ ԳԵՐԵԶՄԱՆԱՏՈՒՆՍ. ԵՍ ԽԷՐԽԱՆՍ ......................................./ՇԻՆ/ԵՑԻ ԶԱԲ. ՍՏԵՓԱՆՈՍՍ ԵՒ ՆՈՐՈԳԵՑԻ ԶԱՅԼ ԵԿԵՂԵՑԻՔՍ ԵՒ ԶԱՐԴԱՐԵՑԻՄԽԻԹԱՐՔ ԵՂԲԱՒՐ ԻՄՈ......................................./ԹԷՍ ՄԱՐՏԻՐՈՍԱ: ԵՍ ՍԵՒԱԴԱ ՏՎԻ ԶԳՐԳՈՐԱՆԱՑ, ԶՄՌԸՆԴԱՆԱՑ ԶԳԵԼՎԱՐԴԱՆՑ Ի ՍԲ ԵԿԵՂԵՑԻՍ.........................../[ՅԱ] ՄՆ: Ժ: ԱԻՐ ԺԱՄ: Բ: ՅԱՍԱՆԱ ԶԱՏԿԻՆ,:Բ: ՄԱՄԱԽԱԹՈՒՆԻՆ ՎԱՐԴԱՎԱՌԻՆ, :Ա: ՌԶՈՒ/ՔԱՆԱ................................../:Բ: ԽԷՐԽԱՆԻՆ Յ[Ա]ՅՏՆՈՒԹԵ[ԱՆ]ՑՆ :Բ: ԱՍԹԻՆ. /ՈՐՉԱՓ......../ ԿԱՏԱՐԵՆ: ՈՐ ՅԱԿԱՌԱԿԻ ԿԱՄ ԶՐԿԵԼ ԶԱՆԱՅ ԶԱՅՍ ՏԵՂԵՐՍ Ի ՍԲ. ԳՒՈՐԳԱՅ, ՈՍՈԽՆ ՆՈՐԱՅ ԱԾ. ԵՂԻՑԻ/ԵՒ ԻՆՔՆ ԶՐԿԵԼ ԼԻՑԻ ՅԱՒԻՏԵՆԻՑ ՅԱՅՐԵՆԵՑՆ ԵՒ ՄԵՐ ՄԵՂԱՑՆ ՊԱՐՏԱՊԱՆ ԱՌԱՋԻ ՔԻ. ԳՐԵՑԱՒ ԳԻՐՍ Ի ԹՎԻՍ ՅԱՅՈՑ: ՉԺԴ: (1265):

Այս աrձանագrության մեջ հիcաsկվող անձինf(Յասան, Մամախաթուն, Մաrծպան, Մամիկոն, Սեւադա), բացառությամբ Խեrխանի եւ Ռուզուfանի, sեղ են գsել նաեւ Չիկագոյի համալսաrանի հայեrեն

38. Դիվան, պr. 5, էջ 29, Մ.Բաrխուsաrեանց, Աrցախ, էջ 168-169:






ձեռագrեrի «Կաrմիr ավեsաrանի» հիcաsակաrանում[39], ոrից պաrզվում է, ոr Մաrծպանը Շիկաfաrի ս.Աստվածածին եկեղեցուն կաsաrել է նվիrաsվություն, ոrի դիմաց մասուցվել է չոru պաsաrագ (իr հաrազաsնեrի՝ Յասանի, Մամախաթունի, Սեւադայի հիcաsակին): Գ.Սաrգսյանը, fննության ենթաrկելով այս եrկու հիcաsակությունները եւ հիմf ընդունելով Յ.Քյուrsյանի sեղեկությունները[40], Մաrծպանին, Մամիկոնին, Սեւադային, Խեrխանին, ինչպես նաեւ Ռուզուfանին նեrկայացնում է ոrպես Յասանի եւ Մամախաթունի զավակնեr եւ, հաcվի առնելով Մաrծպան ու Մամիկոն անունները, ոrոնf բնոrոc են Դսեղի Մամիկոնյաններին, գsնում է, ոr նrանf Յամազասպյան–Մամիկոնյան sան նեrկայացուցիչնեr են եւ ընsանիfով Տաcիrից sեղափոխվել են Նեrfին Խաչեն, ոrsեղ ձեռf են բեrել sիrույթնեr[41]:

39. Տե՛ս Չիfակոյի համալսաrանի հայեrեն ձեռագrեrը, կազմող՝ Յ.Քյուrsյան (Սիոն, 1971, N 7-8, էջ 273): Յմմs. Յայեrեն ձեռագrեrի հիcաsակաrաննեr, ԺԳ, էջ 905:

40. Յ.Քյուrsյան, Դսեղի կամ Յամազասպյան Մամիկոնյաններու sունը (Սիոն, 1970, N 3-4, էջ 177):

41. Գ.Սաrգսյան, Նոr նյութեr Մամիկոնյան–Յամազասպյան sան վեrաբեrյալ (ՅՍՍՅ ԳԱ Լrաբեr հասաrակական գիsությունների, 1979, N 3, էջ 78-79):

Նույն կարծիքին է Ռ.Մաթեւոսյանը[42], որը վերջնականապես «ամրապնդում է» Հասանյան–Մամիկոնյանների հաստատումը Խաղբակյան իշխանության վարչական կենտրոնում, նրանց վերագրում Կոշիկ անապատի ս. Ստեփանոս եկեղեցու կառուցումը, վանքի մոտ գտնվող տապանատունը համարում այդ տոհմի սեփականությունը[43] եւ այլն:

Այս երկու հիշատակությունների մանրամասն վերլուծությունը դիտելով տվյալ ուսումնասիրության շրջանակներից դուրս՝ այդուհանդերձ նշենք, որ վերոհիշյալ տեսակետները ճիշտ չեն՝ փաստական տվյալներով չեն հիմնավորվում:

Այսպես, արձանագրության մեջ նշված Խերխանը Համազասպյան–Մամիկոնյան չի կարող լինել, քանի որ նա, համաձայն նույն Կոշիկ անապատի սրահի տապանաքարի վիմագրության, Բաղաց[44] թագավորի թոռն է. «Այս է հանգիստ իշխան Խերխանին, որդոյ Հասանին, թոռին Բաղաց թագավորին, թվին: ՉԼԵ (1286թ.)»[45]: Եվ իրոք, Խերխան անձնանուն չկա Տաշիր գավառում: Այն բացի Խաչենից «բնորոշ է Բաղքին, Վայոց ձորին»[46]: Սեւադան հայերեն ձեռագրերի հիշատակարաններում ներկայացված է ոչ թե եղբայր, այլ որպես հորեղբայր[47]: Այս անունը եւս Տաշիր գավառում տարածված չէ: Ինչ վերաբերում է Հասան, Ռուզուքան, Մամախաթուն անուններին, ապա դրանք ավելի մեծ տարածում գտել են նաեւ Խաչենում: Պետք է ասել, որ այստեղ միայն Հասան անունով անձանց թիվը անցնում է չորս տասնյակից, ի տարբերություն Համազասպյան–Մամիկոնյանների միակ Հասանի, որը նշված հեղինակների կարծիքով «տեղափոխվել է» Ներքին Խաչեն: Ճիշտ է, Խաչենում Մամիկոն եւ հատկապես Մարծպան անունների առայժմ հազվադեպ կարելի է հանդիպել (վիմագրերի ուսումնասիրությունները

42 Ռ.Մաթեւոսյան, Պռոշյան ֆեոդալական տոհմի ծագումնաբանությունը (ՀՍՍՀ ԳԱ Լրաբեր հասարակական գիտությունների, 1986, N 11, էջ 68):

43 Նույն տեղում, էջ 69:

44 Բաղքը Սյունիքի իններորդ գավառն է եւ համապատասխանում է այժմյան Կապանի շրջանի հիմնական մասին (տե՛ս Ս.Երեմյան, Հայաստանը ըստ Աշխարհացոյցի, Երեւան, 1963, էջ 44, 70, 100):

45 Դիվան, պր. 5, էջ 29, Խաղբակյանք... էջ 80: Խերխանի անունով գյուղեր ու բնակատեղիներ են պահպանվում Շուշիի եւ Մարտունու (Արցախ) շրջաններում, իսկ որպես տեղավայր («Քեարխանի հարթ»)՝ Գանձասարից հարավ-արեւմուտք, Խաչենագետի ձախ ափին (Մ.Բարխուտարեանց, Արցախ, էջ 180):

46 Դիվան, պր. 3, Երեւան, 1967, էջ 52:

47 Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԳ, էջ 905:



շարունակվում են), բայց դա չէր կարող նշանակել, որ նրանք, ինչպես նաեւ այդ երկու աղբյուրներում հիշատակվող մյուս անձինք Խաչեն են տեղափոխվել Տաշիրից: Ի դեպ, Մ.Բարխուտարյանցը Խերխանին, Մարծպանին եւ Մամիկոնին համարում է Խաղբակյան Ջաջուռ Բ իշխանի թոռներ[48]: Եվ, վերջապես, կարծում ենք, որ տոհմական գերեզմանատուն հասկացությունը չի կարող վերաբերել Համազասպյան–Մամիկոնյաններին՝ որպես երկվորների: Այսպիսով, նշված փաստերը հավաստում են, որ Կոշիկ անապատի արձանագրությունը կապ չունի Համազասպյան–Մամիկոնյանների Խաչեն տեղափոխման հետ, եւ որ արձանագրության մեջ հիշատակվող անձինք խաչենցիներ են՝ Խաղբակյանների ներկայացուցիչներ: «Կոշիկ անապատը Խաղբակյանների բնագավառի մի մասն է»,- գրում է Գ.Հովսեփյանը[49]:

Մեր կարծիքով, Դսեղի Մամիկոնյաններին հատուկ անձնանունների գործածությունը հատկապես Ներքին Խաչենում բացատրվում է ոչ միայն տոհմակցական, այլեւ ամուսնական (խնամիական) կապերի ու փոխհարաբերությունների առկայությամբ: Խաղբակյան իշխանները չէին կարող նման կապեր չունենալ մանավանդ իրենց տոհմակից Մամիկոնյանների հետ, որի հետեւանքով ի հայտ են գալիս այդ տոհմերին բնորոշ անձնանուններ: Ուսումնասիրություններից պարզվել է, որ Խաղբակյան իշխանների մեծամասնությունը այդպիսի կապ հաստատել էր առանձնապես Տաշիրի (Դսեղի) Համազասպյան–Մամիկոնյանների տան անդամների հետ[50]: Բացի այդ, հայտնի է, որ ըստ Խաչենի (եւ շրջակա մի քանի գավառների–Ս.Ս.) ավանդույթի, ծնված որդիներից հատկապես ավագը կոչվում էր պապի անունով[51]: Այդ ամենի հետեւանքով Խաչենում մեծ տարածում են ստանում այլ գավառների տոհմերին բնորոշ անուններ, եւ ընդհակառակը, շրջակա գավառներում ի հայտ են գալիս Խաչենին բնորոշ անուններ:

Խաղբակյան տոհմի պատմությունը առավել մանրակրկիտ ուսումնասիրության կարիք ունի:

48 Մ.Բարխուտարեանց, Պատմութիւն Աղուանից, հ. Ա, էջ 144: Հմմտ. Հ.Աճառյան, Հայոց անձնանունների բառարան, հ. Գ, Երեւան, 1946, էջ 185, 264, հ. Բ, Երեւան, 1944, էջ 511:

49 Խաղբակյանք..., էջ 30: Նույն կարծիքին է Մ.Բարխուտարյանցը, որը Կոշիկ անապատի հիմնարկումը վերագրում է Ջաջուռ Խաղբակյանին (Պատմութիւն Աղուանից, հ. Ա, էջ 143, 193):

50 Այսպես, Խաչենի Գրիգոր իշխանը ամուսնացել է Համազասպյան Մամքան տիկնոջ հետ, Խաղբակի որդի Ջաջուռը՝ Մամախաթունի, Վասակ Խաղբակյանը՝ Մամայի հետ եւ այլն:

51 Բ.Ուլուբաբյան, Խաչենի իշխանությունը, էջ 141:

# Ծիրանաքար բերդ

Ամրոցի ավերակները գտնվում են Խաչենագետի հովտի Առաջաձոր գյուղի հյուսիս-արեւմտյան անտառապատ բարձունքի վրա: Ներկայումս հայտնի է «Ղլեն խութ» անվամբ: Բերդի մասին տեղեկություններ են պահպանվել Կ.Գանձակեցու, տեղագրող Մ.Բարխուտարյանցի եւ այլոց մոտ: Ըստ Գանձակեցու, մոնղոլ զորապետ Բուղան, ընդհարվելով Հասան

Ամրոցակալ բլրի ընդհանուր տեսքն արեւելքից







Հատվածներ հյուսիս-արեւելյան պարսպապատից, արտաքուստ

բարեպաշտ իշխանի հետ, քանդում է նրա ամրոցները՝ Խոխանաբերդը, Դեղը, Ծիրանաքարը[1]: Մ.Բարխուտարյանցը ամրոցը Անանուն կամ Ծիրանաբերդ է կոչում, այն համարելով Ջալալյան իշխանների հենակետերից[2]: Իրականում

1 Կ.Գանձակեցի, Հայոց պատմություն, Երեւան, 1982, էջ 224 (հմմտ, Մ.Հովհաննէսեան, Հայաստանի բերդերը, Վենետիկ, 1976, էջ 464):

2 Մ.Բարխուտարեանց, Պատմութիւն Աղուանից, Վաղարշապատ, Ա, 1902, էջ 154:



Ամրոցակալ բլրի ընդհանուր տեսքն արեւմուտքից



ամրոցը ծիրանի գույն չունի եւ, թերեւս, այդպես է անվանվել թիկունքում գտնվող համագույն ժայռից: Ի դեպ, Մեսրոպ Թաղիադյանցի տեղեկություններից պարզվում է, որ Ծիրանաքար է կոչվել նաեւ Առաջաձոր գյուղը. «Խնածախից թրթնջուկ եւ ողին ուտելով հասանք Ծիրանաքար, որ



Հատված ամրոցի պարսպապատից, ներսից



Պարսպապատի տեսքն արեւմուտքից



Հյուսիս-արեւելյան կցակառույց հենարան-աշտարակը

... ընդ մէջ անկանի Գաձասարայ եւ Գետկայ վանից, ունի աւերակ ամրոցի–մեծի ի գլուխ հյուսիսակողման լերին»[3]: Նույն հեղինակը Ծիրանաքարը ներկայացնում է նաեւ «Ծառաքար» անվամբ, համարելով «կալուած Մէլիք



Հատված արեւելյան պարսպապատից

3 Մեսրովբ Թաղիդեանց, Ճանապարհորդութիւն ի Հայս, հ. 1, Կալկաթա, 1847, էջ 301-302: Հիշատակվող Գետկա վանքը Քոլատակից հյուսիս–արեւելք գտնվող Մեծառանից վանքն է, որը մասնավորապես 1456, 1473թթ. տվյալներով կրում էր Գետամիջո անունը (ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, մաս II, Երեւան, 1958, էջ 66, 344):



Վանւոյ»[4]:



Ավերված երկու կցակառույցներ ամրոցի արեւելյան պարսպին

Ղ.Ալիշանը Ծիրանաքարը նույնացրել է Շիկաքարին[5], իսկ վերջերս լույս տեսած մի գրքում, բերդանունը վերագրվել է Թբլղու գյուղին[6]: Ծիրանաքար բերդն ունի ուղղանկյուն հատակագիծ: «Բերդաբլուրն ... ձգուած է հիւսիսից հարաւ դիրքով... Նեղ եւ երկար է բերդակիս մակերեւոյթն բլրի գագաթի ձեւով: Պարսպուած է բլրիս գագաթն ամուր պարսպով, միայն հիւսիսային ու հարաւային անկիւններում շինված են երկու բուրգեր, որք միեւնոյն ժամանակ ծառայած են իբրեւ ջրամբար, որոնց ջուրն բերուած է մօտակայ աղբիւրներից: Անպակաս են եւ սորա միջից քարուկիր հին տնաբակեր»[7]:



Հատված ամրոցի պարսպապատից

Բուն շինությունն ունի 39,8x8,4մ մակերես: Այն ներքուստ բաժանվում է երկու հատվածների՝ արեւելակողմի եւ արեւմտակողմի (ամրոցն ունի հարավ – արեւելք հյուսիս–արեւմուտք ուղղվածություն), ընդ որում, վերջինիս շարունակությունն է կազմում կիսակլոր կառուցվածքով եւ թաղակապ ծածկով 4,2x2,5-2-8 չափերի, ներքուստ սվաղված կիսավեր կցակառույց աշտա-

4 Նույն տեղում, էջ 332:
5 Ղ.Ալիշան, Արցախ, էջ 84:
6 Ш.Мкртчян, Щ.Давтян, Шуши, Ереван, 1997, տե՛ս գրքում զետեղված քարտեզը:
7 Մ.Բարխուտարեանց, Արցախ, էջ 199:



Արեւմտակողմի կցակառույց աշտարակի եւ ամրոցապատի տեսքը ներքուստ



րակը, որը Մ.Բարխուտարյանցի կարծիքով ամրոցի ջրամբարներից է եղել: Սակայն, չի բացառվում, որ այն ծառայեր այլ նպատակներով (զինանոց – մթերանոց), նկատի ունենալով ոչ միայն բուն ամրոցից դեպի այն տանող մուտքի առկայությունը, այլեւ ջուրը մոտ 1 կմ հեռավորության վրա գտնվող աղբյուրից ամրոց բարձրացնելու անհարմարությունը: Թերեւս հնագիտական ուսումնասիրություններով կբացահայտվի իրողությունը:

Համանման (բրգաձեւ) շինություններ են եղել նաեւ ամրոցի այլ հատվածներում, որոնք պարսպապատերի ամ-





Առաջաձոր գյուղի ընդհանուր տեսքն ամրոցից

րացման համար ծառայում էին որպես հենարաններ: Ամրոցի ուշագրավ շինություններից են նաեւ արեւելյան կողմից հիմնովին ավերված երկու կցակառույցները, որոնք, ըստ էության, ծառայում էին որպես դիտակետ: Ավելացնենք, որ ներկայումս ամրոցապատերը պահպանվում են 1-2,5մ բարձրությամբ: Հարավային եւ հարավ–արեւմտյան կողմերից պատի հաստությունը 1,6մետր է, իսկ հյուսիսային եւ հյուսիս–արեւելյան կողմերից՝ 2,3: Ընդ որում, այստեղ կան 1,5x1,5 չափերի երկու կիսաշրջան հենարանաշտարակներ:

Ծիրանաքար ամրոցը Խաչենի հովտի միջնադարյան պաշտպանական կարեւոր հանգույցներից է եւ արժանի գիտական խորազնին ուսումնասիրության:

# Ջրաբերդ

Հնուց ի վեր Թարթառի հովիտը եւ այն շրջափակող անտառապատ ու բարձրաբերձ լեռնալանջերը (Մռավ լեռնաշղթայի, դաշտաբերանի, Թրղի եւ Թարթառ գետերի ձախ եւ Կուրակ գետակի աջ ափերի մեջ)[1] կազմել են Հայաստանի Արցախ նահանգի Մեծկուենք (Մեծկողմանք) գավառը:

Հնագիտական հետազոտությունները վկայում են, որ մարդն այստեղ ապրել ու ստեղծագործել է հնագույն ժամանակներից: Այն Հայաստանի ամենախիտ բնակեցված վայրերից էր: Հայտնի է նաեւ, որ հետագայում, մասնավորապես արաբական տիրապետության ընթացքում, Մեծկուենքը ընդգրկվում է առեւտրական ակտիվ գործառնության ոլորտի մեջ եւ Դվին–Պարտավ տարանցիկ առեւտրական ճանապարհով, որի վրա ստեղծվել էին մի շարք կայարաններ, այդ թվում՝ Հաթերքի եւ Կաղանկատույքի կայանները[2], կապվում էր Հայաստանի կենտրոնական շրջաններին:

Գավառի պաշտպանությունը կազմակերպվում էր մի շարք հենակետերի միջոցով, որոնց մեջ առանձնահատուկ տեղ է գրավում Ջրաբերդը՝ միջնադարյան Հայաստանի ամենահզոր ամրոցներից մեկը:

Ջրաբերդը լիակատար եւ համակողմանի ուսումնասիրության չի ենթարկվել: Ամրոցի մասին ամենավաղ հիշատակությունը վերաբերվում է Խաչեն ներխուժած խազարների 620-ական թվականների վերջերի ասպատակություններին եւ դրանց դեմ Աղվանից կաթողիկոս Վիրոյի ձեռնարկած միջոցառումներին, որի մասին հաղորդում է Մ.Կաղանկատվացին՝ մանրակրկիտ նկարագրելով վայրենասուն ու թափառական ձիավորների պատճառած սարսափներն ու վայրագությունները[3]: Կողթ-ագարակ կոչված գյուղից փախչելով Չարաբերդ (Ջրաբերդ) ամրոցը, Աղվանից կաթողիկոսն իր շուրջն է հավաքում «...զամենայն գլխավորս զորդիս թագաւորազանց մեծաց աշխարհիս, զգաւառապետս եւ զգիւղապետս, զերիցունս եւ զսարկաւագունս եւ զդպիրս...»[4], որ ամենքը բերեն իրենց հարստությունները՝ ոսկի, արծաթ, հագուստներ եւ այլն, որպեսզի դրանցով հնարավոր լինի կաշառել անագորույն թշնամուն[5] եւ երկիրը զերծ պահել նախճիրներից:

Ուտիի դաշտում բանակած խազարների զորահրամանատար Շաթը, ընդունելով նվերները, խոստանում է չասպատակել Հայոց Արեւելից Կողմանքը եւ գերիներին շնորհել ազատություն[6]:

Ամրոցը հիշատակվում է նաեւ Կ.Գանձակեցու[7], Ստ.Օրբելյանի[8] պատմություններում: Խնդրին անդրադարձել նաեւ Ղ.Ալիշանը[9],



Ամրոցի արտաքին տեսքը հյուսիս-արեւելքից

Հ.Հյուբշմանը[10], Մ.Բարխուտարյանցը[11], Լեոն[12], Հ.Մանանդյանը[13], Բ.Ուլուբաբյանը[14] եւ ուրիշներ:

Այդուհանդերձ, VII դ. կեսերից մինչեւ XI դ. Ջրաբերդը չի հիշվում

1 Մ.Բարխուտարեանց, Արցախ, Բաքու, 1895, էջ 24:
2 Հ.Մանանդյան, Հայաստանի գլխավոր ճանապարհները ըստ Պեւտինգերյան քարտեզի, Երեւան, 1936, էջ 202:
3 Մ.Կաղանկատվացի, Պատմութիւն Աղուանից աշխարհի, Երեւան, 1983, էջ 156-158, Բ.. Ուլուբաբյան, Դրվագներ Հայոց արեւելից կողմանց պատմության, Երեւան, 1981, էջ 206-233:
4 Կաղանկատվացի, էջ 157:
5 Լեո, Հայոց Պատմություն, հ.2, Երեւան, 1967, էջ 262:



6 М. Артамонов, Очерки древнейшей истории хазар, Ленинград, 1936, էջ 62-63:
7 Կ.Գանձակեցի, Պատմություն Հայոց, Երեւան, 1961, էջ 359:
8 Ստ.Օրբելյան, Պատմութիւն նահանգին Սիսական, Թիֆլիս, 1910, էջ 392:
9 Ղ.Ալիշան, Հայապատում, Վենետիկ, 1901, էջ 387, նույնի՝ Արցախ, «Բազմավեպ», 1988, N 1-4, էջ 253:
10 Հ.Հիւբշման, Հին Հայոց Տեղիոյ անունները, Վիեննա, 1907, էջ 397:
11 Մ.Բարխուտարեանց, Արցախ, էջ 240:
12 Լեո, Հայ հերոսներ, Ջրաբերդ, մելիքներ եւ նրանց քաջերը, Երեւան, 1920, էջ 5-24, Վերջին վերքեր, մաս 1-ին, Թիֆլիս, 1891, էջ 13-16, Իմ հիշատակարանը, Շուշի, 1890, էջ 252-264:
13 Հ.Մանանդյան, Երկեր, հատոր Գ, Երեւան, 1977, էջ 153, 230:
14 Բ.Ուլուբաբյան, Խաչենի իշխանությունը X-XVI դարերում, Երեւան, 1975, էջ 119, 120, 190, 400:

մեր պատմության մեջ։ Երբ XIդ. երկրորդ կեսից Արցախն ընկնում է սելջուկ-թուրքերի տիրապետության տակ, Ջրաբերդը, այլ ամրոցների հետ անցնում է Գանձակի գավառի թուրքմենների հսկողության տակ[15], որոնց գլխավորում էր Խուհտուղտին։ Վերջինս, նպատակ հետապնդելով ընդարձակելու իր տիրապետության սահմանները, հարձակումներ է գործում Արցախի ամրությունների, այդ թվում՝ Ջրաբերդի վրա (1142թ.)։ 1143-44թթ. Խաչենի կողմերն է ասպատակում Չավլի ամիրան, որը գրավում է ամրոցները, քանդում եկեղեցիները, այրում վանքերը[16]։ Ս.Անեցին նույն անցքերի մասին գրում է, որ. «ՌճԽԵ. ի ՇՂԲ. ամին Չոլի առնու զամուրսն Խաչէնոյ խաբէութեամբ եւ երդմամբ յինքն յանկուցանէլով զսիրտս իշխանացն...»[17]։ Նույն փաստն է երկրորդում նաեւ Մ.Այրիվանեցին[18]։ Սելջուկ ցեղախմբերը հայկական գյուղերն ու տարածքները նվաճում էին ինչպես բռնությամբ, այնպես էլ խնամիական կապերի միջոցով[19]։ 1147-48թթ. Խոխանաբերդի իշխան Գրիգորին փեսայացել էր «որդի Դարին Տաւղան անուն, իշխան աշխարհին ճառաբերդոյ եւ նորին դղեակին...»[20], որն այնքան էր ամբարտավան դարձել, որ ցանկանում էր գրավել նաեւ շրջակա գավառները։ Սակայն Տողանը իր նպատակներն իրագործելու համար պետք է հաղթահարեր որդու՝ սելջուկ մեծ սուլթան Չախր-շահի ընդդիմությունը, որը հաստատվել էր Ջրաբերդի մատույցներում եւ ձգտում էր իրեն ենթարկել եւ հարկատու դարձնել հորն ու նրա աներոջը[21]։

Սկսած XIIդ. կեսերից, Արցախ երկրամասը հակասելջուկյան պայքարի մեջ էր, իսկ դարավերջին՝ գործուն դեր էր կատարում Զաքարյան իշխանների ռազմա-քաղաքական ձեռնարկումներում[22]։ Ինչպես վկայում են աղբյուրները[23], 1211-12թթ. Զաքարյան իշխանները մեծ ջանքերի գնով սելջուկ թուրքերից ազատագրեցին Հայոց երկրները՝ Առանից մինչեւ Ներքին Բասեն, Բարկուշատից Մժնկերտ, որոնց մեջ էին նաեւ Գարդմանը, Պարտավն ու Ջրաբերդը։ Սական, թուրք սուլթան Ջալալ-ադ-Դինի (1227-30թթ.), իսկ հետո՝ մոնղոլական արշավանքների հետեւանքով հայկական իշխանությունների հետագա ճակատագիրը ստացավ նոր ընթացք։ Ջրաբերդն

15 Հ.Մանանդյան, Գ, էջ 106-107։
16 Ղ.Ալիշան, Հայապատում, էջ 386։ Մեկ այլ առիթով Ղ.Ալիշանը (Արցախ, «Բազմավէպ», 1988, N 1-4, էջ 269) նշում է, որ Չաւլին կրկին անգամ հարձակվելով (1146-47թթ.-Ս.Ս.) «զամրոցսն ոչ կարաց առնուլ, բայց զգաւառն զամենայն իսպառ աւերէր»։
17 Ս.Անեցի, Հաւաքմունք ի գրոց պատմագրաց, Վաղարշապատ, 1893, էջ 132։
18 Մ.Այրիվանեցի, Պատմութիւն Հայոց, Մոսկվա, 1860, էջ 63։
19 Բ.Ուլուբաբյան, Խաչենի իշխանությունը, էջ 120։
20 Ղ.Ալիշան, Հայապատում, էջ 387, նույնի Արցախ, «Բազմավէպ», էջ 253-254։
21 Բ.Ուլուբաբյան, Խաչենի իշխանությունը, էջ 120։
22 Նույն տեղում, էջ 124։
23 Ստ. Օրբելյան, նշվ. աշխ., էջ 391-392։




Ամրոցի արտաքին տեսքը հյուսիս-արեւմուտքից


Ամրոցի հյուսիսային աշտարակներից

ընկավ սկզբում Ջալալ-ադ-Դինի, իսկ հետո՝ մոնղոլների իշխանության ներքո։ Ջալալ-ադ-Դինի անձնական քարտուղար ան-Նասավիի մի տեղեկությունից պարզվում է, որ Սուլթանը Ջրաբերդում ամրոցի վալի Սախլան Սալուկբեկի միջոցով ձերբակալում է իր իսկ զորահրամանատար Շարաֆ ալ-Մուլքին, որի հետ սրվել էին հարաբերությունները՝ կապված հատկապես գանձատան գումարների շռայլումների հետ[24]։

Ջրաբերդը ակնարկվում է նաեւ մոնղոլական տիրապետության ժամանակաշրջանում, երբ իր հայրենական իշխանության սահմանները վերականգնելու նպատակով 1246թ. Բաթուի եւ նրա որդի Սարթախի մոտ մեկնեց Ներքին Խաչենի Հասան Ջալալ իշխանը։ Վերջինիս ընդունեցին մեծարանքով եւ հրամայեցին վերադարձնել հայրենական կալվածները՝ «իւր զՉարաբերդ եւ զԱկանա եւ զԿարկառն»[25], որ առաջներում խլել էին թուրքերը[26]։

XVIդ. հայ ժողովրդին բերեց նոր ու դաժան փորձություններ։ Պարսկաստանն ու Օսմանյան Թուրքիան միմյանց դեմ պատերազմներ էին մղում, որոնց թատերաբեմը Հայաստանն էր։

1557թ. օսմանյան զորքերը մտնում են Ջրաբերդ գավառի դաշտաբերանի գյուղերը[27], որտեղ հանդիպելով հայերի լուրջ դիմադրությանը, տալիս են 700 զոհ[28]։ Թուրք-պարսկական պատերազմը հայոց հողի վրա վերսկսվում է Մուհամմեդ Խուդաբանդայի՝ 1578թ. պարսից շահ հռչակվելուց հետո։ 1579թ. թուրք արյունարբու զորապետներից Օսման

24 Шихаб ад-Дин Мухаммад ан-Насави, Жизнеописание султана Джалал ад-Дина Манкбурны, Баку, 1973, էջ 276, 280, 281։
25 Կ.Գանձակեցի, Պատմութիւն Հայոց, էջ 359։
26 Նույն տեղում։
27 Մ.Բարխուտարեանց, Պատմութիւն Աղուանից, Բ, Թիֆլիս, 1907, էջ 23։
28 Արցախ, էջ 213-214։



Ամրոցի շինություններից

Յուզդեմիրը, հավաքելով կովկասյան ավարառու լեռնականներին, ասպատակ սփռեց Գանձակից մինչեւ Պարտավ ու Ջրաբերդ, Խաչենից Վարանդա եւ Դիզակ, ընդհուպ մինչեւ Արաքս գետը, գերելով ու կոտորելով բազմաթիվ անմեղ մարդկանց[29]:

Այս դեպքերից հետո, վերջին դարերում, հին նախարարական տների փոխարեն ասպարեզ եկան մելիքները, որոնց իրավասությունները կանոնակարգվեց Շահ Աբասի ժամանակ (1603թ.): Այլասեռ ժողովուրդներին իրենց ներկայացուցիչների միջոցով կառավարելու նպատակով, շահը հայ իշխանների մեջ հաստատեց «Մելիք» տիտղոսը՝ վարձահատույց լինելով այն ծառայությանը, որ կատարեցին հայերը օսմանյան թուրքերի դեմ մղված կռիվներում: Արցախի հինգ մելիքություններից մեկը Ջրաբերդի մելիքությունն էր, ուր իշխում էին Մելիք-Իսրայելյանները: Մելիք-Իսրայելի որդի Եսային 1687թ. ջարդում է խանական զորքերին, գրավում Կուանք կոչվող ձորը, ինչպես նաեւ՝ Ռմբոսյան լեռներից մինչեւ Դյուտական գյուղը[30]:

XVIIIդ. սկզբներից սկսած՝ Ղարաբաղի մելիքները պայքարում են՝ թոթափելու պարսից լուծը եւ հիմնելու անկախ պետություն: Այս ժամանակներից էլ սկիզբ է առնում հայ ժողովրդի պատմության ազատագրական շարժումների նոր ժամանակաշրջանը: Դարի 20-ական թվականներին ակտիվացան նաեւ Օսմանյան թուրքերը, որոնք, տեսնելով

29 Ա.Դավրիժեցի, Պատմութիւն, Վաղարշապատ, 1896, էջ 608, Մ.Չամչյանց, Հայոց Պատմություն, Գ, էջ 530-531, Վ.Հակոբյան, Մանր ժամանակագրություններ, հ. 2, Երեւան, 1956, էջ 242, 252, Մատենադարան, ձեռ. 173, էջ 95 ա:

30 Րաֆֆի, Խամսայի մելիքությունները, հ. 10, Երեւան, 1959, էջ 175:

31 1722-23թթ. ռուսները նվաճեցին մերձկասպյան պարսկական տիրույթները՝ Դերբենտը, Գիլանը, Բաքուն եւ այլն:





Հատված ամրոցապատից

ռուսների առաջխաղացումը իրենց սահմանների մոտակայքում[31] եւ քաջատեղյակ լինելով Պետրոս առաջինի աշխարհակալական ձգտումներին, իրենց հերթին գրավեցին սահմանակից պարսկական նահանգները եւ մոտեցան Ղարաբաղի մելիքների տարածքներին, որոնց սպառնում էր նաեւ լեզգիների եւ պարսից խաների հարձակումների վտանգը: Թշնամու դեմ պայքարելու եւ երկիրը զինված հարձակումներից զերծ պահելու նպատակով, Ջրաբերդի եւ Պարտավի հայ զորահրամանատարները իրենց պաշտպանական ամրությունները դարձրին հենակետային կենտրոններ[32]:

1722թ. ապրիլի 20-ին լեզգի լեռնականները «... ի Կարկառ գետոյն մինչեւ ի Դըրդուական գետն եւ յերկիրն Չարաբերդու, միահաղոյն ասպատակ սփռեցան ընդ լերինս եւ ընդդաշտս»[33]: Գերելով ու թալանելով բնակչությանը, ավարառուները «բանակեցան ի վերայ գետոյն Դըրդու, զոր այժմ Թարթառ կոչեմք... ի վերայ կամրջին, որ Ղառի-քորփի ասեն»[34]: Սակայն լեզգիները «ոչ կարացին այնքան վնասել երկրին Չարաբերդու եւ Պարտայու... Քանզի նոքա յառաջագոյն լեալ ի յամուր տեղիս լերանց իւրեանց ամրացեալ էին, մանաւանդ թե երիտասարդք ոմանք ընդդիմանային եւս, որ եւ զբազումս հարին ի թշնամեացն»[35]:

XVIIIդ. 20-ական թվականներին (մասնավորապես 1722թ. դեկտեմբերին) հայ ինքնապաշտպանական ուժերը Ջրաբերդի մելիքներ Սարգսի եւ Շիրվանի, Գյուլիստանի մելիք Եսայի հարյուրապետի, ինչպես

32 Армяно-русские отношения в первой трети XVIIIв., т.2, ч. 1, Ереван, 1964, введение XXXIX:

33 Պատմութիւն կամ Յիշատակ ինչ ինչ անցից՝ դիպելոց յաշխարհին Աղուանից, եսայեայ Հասան Ջալալենց, ի թուական հայոց ՌՃԿ, Շուշի, 1839, էջ 45, նույնի՝ Երուսաղեմի 1868թ. հրատարակությունը, էջ 37, նույնը՝ Ղ.Ալիշան, Արցախ, «Բազմավեպ», 1989, N 1-4, էջ 200-201:

34 Նույն տեղում, էջ 47, 38 (Ղառի-քորփի՝ այժմյան Պառավի կամուրջը- Ս.Ս.):

35 Նույն տեղում:

նաեւ Գանձակի մելիք Հովսեփի գլխավորությամբ պայքարում են ոչ միայն լեզգի լեռնականների, այլեւ թուրքերի դեմ՝ պաշտպանելով Ղարաբաղի մատույցները Շամախու թուրքերի առաջնորդ Հաջի Դաուդի զորախմբերից[36]: Պարբերաբար կրկնվող թշնամական գործողություններին վերջ տալու նպատակով, 1723թ. մարտին Գանձասարի Ներսես Կաթողիկոսը նամակ է հղում Պետրոս Մեծին[37], խնդրում օգնել եւ հայ քրիստոնյա ազգն ազատել մահմեդական նվաճողներից: Նույն թվականին Պետրոս Առաջինին են դիմել Ղարաբաղի չորս մելիքները (այդ թվում՝ Ջրաբերդի) եւ խնդրել օգնություն՝ լեզգիների եւ թուրքերի դեմ մղվող չկանխվող պայքարում. «Ժ եւ մեկ տարի է, որ երկիրս Աղուանից գերի է ձեռս լազգուց, նոքայ կոտորէյին եւ եսիրն տանէյին, ես մնացածն տեղոյս բռնակալաց թուրքերն այրելով... հարկս բահանջէին, ամէնն թախտու թալան յափշտակ էին»[38]:


Հատված ամրոցից

1724թ. հունիսին, ռուս-թուրքական պայմանագրի կնքումից հետո, թուրքերը հարմար պահ ընտրելով, գրավեցին Լոռին, Թիֆլիսը, Ղազախը եւ այլ շրջաններ ու մտան Գանձակ: Ղարաբաղի իշխանությունները մերժեցին հպատակության մասին Ումար փաշայի սպառնալից դիմումը եւ թուրքական հրամանատարությունը զորքերը շարժեց Արցախի վրա (1725թ. գարունն)[39]: Մելիքները դարավոր թշնամու դեմ միասնական ճակատ ստեղծեցին: Ինքնապաշտպանությունն ու հայ ժողովրդի ազատագրական պայքարը, ընդհուպ մինչեւ 1729թ., ղեկավարում

36 Армяно-русские отношения ... т.2, ч. 2, Ереван, 1967, док. 177, էջ 29:
37 Г. Эзов, Сношения Петра Великого с армянским народом, СПБ, 1898, док. 221, էջ 344-345:
38 Նույն տեղում, էջ 341:
39 Ա.Աբրահամյան, Մի էջ Անդրկովկասի ժողովուրդների եւ հայ-ռուսական հարաբերությունների պատմությունից, Երեւան, 1953, էջ 114, 116:



էր Ավան հարյուրապետը[40]: Մեծ աշխատանք են կատարում Եսայի կաթողիկոսն ու Իվան Կարապետը, որը ցարի կողմից Ղարաբաղ էր ուղարկվել դեռեւս 1723թ. դեկտեմբերին[41]: Ամբողջ 1726թ. ընթացքում Ղարաբաղի բնակչութունը շարունակում էր պայքարը թուրքերի դեմ[42]: 1726թ. գարնանը թուրքերը հարձակվեցին Խաչենի եւ Ջրաբերդի հայկական գյուղերի վրա, բայց պարտություն կրեցին: Ավան եւ Օհան հարյուրապետների 1726թ. նոյեմբերի 14-ի՝ ռուսական արքունիքին հղած նամակից[43] պարզվում է, որ օսմանյան բանակը Սարու-Մուստաֆա փաշայի գլխավորությամբ հարձակվելով իրենց սխնախների վրա, պարտություն է կրում: Թուրքերը տալիս են 800 զոհ եւ, ծանր հակահարված ստանալով, նահանջում Գանձակ:

Այդուհանդերձ, ուժերն անհավասար էին եւ մելիքները Եսայի Հասան Ջալալյանի գլխավորությամբ, նամակով դիմում են վրաց Վախթանգ թագավորին, խնդրում արագացնել սպասվելիք օգնությունը: Դիմումի մեջ նշվում է, որ թուրքերը «հիմա տուս են եկել մեզ վերայ կռիւ են անում: Ինչպես որ յունիս ամսոյ Ժ (10)–ումն Գանջու ղոշունն (Գանձակի թուրքական զորքը-Ս.Ս.) եկին Խաչինու վերայ՝ Ղազանչի, Ղապարթու, Չանկաթաղ անուն գեղարանքն չափմիշ արին՝ կոտորեցին, եսիր ապրանքն տարան: Մենք էլ տուս եկինք նոցա վերայ, աստուծով, կոխեցինք, կոտորեցինք՝ եսիրն, ապրանքն թափեցինք, փախցրինք. էլ նոր շատունք գալու են մեզ վերայ...»[44]:

Չորս օր հետո, չսպասելով վրաց թագավորի պատասխանին, Եսայի Հասան Ջալալյանը դիմում է Իվան Կարապետին եւ նրան հասկանալ տալիս, որ ինքը, ելնելով Ղարաբաղի բնակչության ֆիզիկական գոյությունը պահպանելու շահերից, ստիպված է հրաժարվել թուրք բռնագրավիչներին դիմադրելուց[45], քանի որ իրեն հայտնի է դարձել, որ համաձայն Կոստանդնուպոլսի՝ ռուս-թուրքական դաշնագրի, երկու տերությունների միջեւ անցկացվող սահմանազատման գծի հաստատման նպատակով, Շամախիում արդեն հանդիպել են ռուսական (Ալեքսանդր Ռումյանցեւ) եւ թուրքական (Հաջի Մուստաֆա փաշա) ներկայացուցիչները[46]:

1727թ. թուրքերը նվաճում են Ղարաբաղը: Ջրաբերդի մի հիշատակարանում կարդում ենք. «Մեր երկիրը օսմանցիների իշխանության

40 Армяно-русские отношения во второй тридцатилетии XVIIIв. т. 3, ч. 2, Ереван, 1978, էջ 358:
41 Ա.Աբրահամյան, նշվ. աշխ., էջ 32:
42 Նույն տեղում, էջ 122:
43 Նույն տեղում, էջ 257, N 76 փաստաթուղթ եւ էջ 125:
44 Армяно-русские отношения ... т.2, ч. 2, док. 344, էջ285:
45 Армяно-русские отношения ... т.2, ч. 1, введение LXXXVII, док. 345, էջ 285-286:
46 Նույն տեղում:

տակ է»[47]: Այս իրադարձություններից հետո, աստիճանաբար սկսում են քայքայվել հայոց սղնախները, Ավան հարյուրապետը հեռանում է Ռուսաստան (1729թ.-Ս.Ս.) եւ Ղարաբաղում վերականգնվում է նախկին վիճակը՝ վերածվում անջատ մելիքությունների[48]: Իրադրությունը կտրուկ փոխվում է դարի կեսերին, երբ Վարանդայի Մելիք Շահնազարը, իր մոտ հրավիրելով Փանահ խանին, դավաճանությամբ նրան է հանձնում Շուշիի բերդը[49]: Հայրենի հողի համար կռվող մյուս մելիքները (մասնավորապես Ալլահ Ղուլին եւ Մելիք Հաթամը, որոնք տիրում են Վերին Խաչենին, Հավքախաղաց, Հանդաբերդ, Հաթերք, Ականա եւ Ջրաբերդ ամրոցներին) չհանդուրժեցին այս դավաճանությունը եւ անզիջում պայքար ծավալեցին ինքնակոչ խանի դեմ: Անպարտելի հերոսի համբավ էր վաստակել Ջրաբերդի Մելիք Ալլահ Ղուլին (Մելիք Եսայու հաջորդը)[50], որին խաբեությամբ կալանավորում եւ սպանել է տալիս Փանահ խանը: Սպանված եղբորը փոխարինած Մելիք Հաթամը, Գյուլիստանի Մելիք Հովսեփի հետ միասին, շարունակում է պատերազմը խանի դեմ: Հաստատվելով Ջրաբերդ անառիկ ամրոցում[51], նա շուրջ մեկ տարի դիմադրեց հրոսակներին, որից հետո, զորքը դուրս բերելով ամրոցից, նահանջեց Գյուլիստան, իսկ այնտեղից՝ Գանձակի կողմերը[52]: Այստեղ մնալով շատ տարիներ, Մելիք Հաթամը բաց չէր թողնում առիթը՝ հարձակումներ ձեռնարկելու Ղարաբաղի թուրքերի դեմ, ընդհուպ մինչեւ Շուշի[53]: Իսկ երբ մեռավ ինքնակոչ խանը, Մելիք Հաթամն ընդունեց նրան փոխարինած Իբրահիմ խանի՝ հաշտության մասին առաջարկությունը,վերադարձավ իր հայրենիք Ջրաբերդը եւ մինչեւ կյանքի վերջը (1783թ.) պահպանեց իր սեփականատիրական իրավունքները[54]:

Ջրաբերդը հայտնի է նաեւ այլ քաջարի հերոսներով: Դրանցից էր Դալի Մահրասան (իսկական անունը՝ Ավագ), նրա ընկեր Թիուլի Արզումանը, որոնք իրենց ջոկատներով հալածում ու կոտորում էին թուրքերին, սարսափ տարածում Ջրաբերդից Ասկերան, Ասկերանից Շուշի[55]: Նրանից հետ չէր մնում

47 Յ.Թօփչեան, Ցուցակ ձեռագրաց Խաչիկ Վարդապետի Դադեան, մաս Ա, 1898, Վաղարշապատ, էջ 70:

48 Լեո, Երկերի ժողովածու, հ. 3, Երեւան, 1973, էջ 253-254:

49 М. Нерсисян, Из истории русско- армянских отношений, книга 1, Ереван, 1956, էջ 96:

50 Արցախ, էջ 122:

51 Ахмед-бек Джеваншир, О полетическом существовании Карабагского ханства, Шуши, 1901, էջ 11:

52 Լեո, Հայ հերոսներ, Ջրաբերդ, մելիքներ եւ նրանց քաջերը, էջ 12:

53 Նույն տեղում, էջ 13, Լեո, հ. 3, էջ 273:

54 Նույն տեղում:

55 Նույն տեղում, էջ 16: Այս հերոսների գերեզմանները գտնվում են Գանձակի Հայոց եկեղեցու գավթում, ինչպես նաեւ՝ Դասակերտի եղիշե Առաքյալ կամ Ջրվշտիկ վանքի երրորդ մատուռի մուտքի մոտ (Արցախ, էջ 28, 236):



նաեւ Չալաղան Յուզբաշին (հափշտակող հարյուրապետ) եւ ուրիշներ: Ջրաբերդի վերջին իշխանապետը Մելիք Մեժլումն էր՝ Մելիք Հաթամի որդին: Գործում էր Գանձակում: Նա զինեց վրացիներին, բանակցեց Վրաստան եկած ռուսական պաշտոնատար անձանց հետ, համագործակցեց Աղա Մահմեդ խանի հետ, միայն թե ոչնչացներ Շուշիում որջացած Իբրահիմ խանին[56]:



Ամրոցի տեսքը արեւմուտքից

Ջրաբերդը վերջին դարերում, խաղաղ ժամանակներում գրեթե անբնակ է եղել: Բայց երբ սկսվել են ռազմական ընդհարումները, ժողովուրդն անմիջապես պատսպարվել է ամրոցում, կազմակերպել դիմադրություն: Վերջին անգամ, համաձայն աղբյուրների[57], շրջակա գյուղերի բնակիչները այստեղ են պատսպարվել 1793թ., երբ Պարսկաստանի երբեմնի գերիշխանությունը Անդրկովկասում վերականգնելու նպատակով Ղարաբաղ է արշավում պարսից զորապետ Սուլեյման Շահզադան:

Ամրոցը տեղադրված է Թարթառ (Տրտու) գետի ձախ ափին, Երիցմանկանց վանքից մոտ 5 կմ հարավ-արեւելք: Հայ մեծանուն պատմաբան Լեոն գեղեցիկ ու պատկերավոր է ներկայացնում ամրոցի տեղադրությունը. «Մռավի առջեւով խոտոտ ձորերի մեջ պտույտ տալով, հոսում է Թարթառը: Մի տեղ... նրա մեջ է թափվում Մռավի կրծքից բխող մի գետակ՝ փրփուր Թրղին: Խառնուրդի տեղում բարձրանում է մի ահարկու սեպացած ժայռ, որի կուրծքն ու կատարը շրջափակված են հաստ պատերով: Մարդ վիթխարի եւ անմատչելի ժայռը բերդ է դարձել եւ անվանել Ջրաբերդ»[58]: Այնուհետեւ շարունակվում է. «Երկու կողմից, արեւմուտքից եւ արեւելքից այդ հսկա ժայռը կազմում է վիթխարի բնական պատեր, որոնք

56 «Ազատամարտ», N 42, 1991թ.:

57 Մատենադարան, ձեռ. 2734:

58 Լեո, Հայ հերոսներ. Ջրաբերդ, մելիքներ եւ նրանց քաջերը, էջ 5:

կախ են ընկած Թրղու եւ Թարթառի վրա: Իսկ երրորդ, հարավային կողմը մի դժվար եւ թեք զառիվայրով իջնում է դեպի Թարթառը... Միայն ժայռերը չեն ամրացնում այդ բերդը, միայն խոր ձորերը չեն, որ կտրում են նրա չորս կողմը անմերձենալի խրամատների պես: Երեք կողմից նրան շրջապատում են անհանգիստ արնախում ջրեր... ջրերի այդ բերդիցն է ամբողջ գավառը Ջրաբերդ կոչվում»[59]:

Ճանապարհամերձ կողմից (հյուսիսից) ամրոցակալ ժայռի բարձրությունը մոտ 40մ է, որի գագաթնամասում ամրոցապատն է՝ աշտարակներով: Մյուս երեք կողմերից, մասնավորապես հարավային եւ արեւմտյան հատվածներում ժայռի բարձրությունը 200-250 մ է:

Ամրոցը զբաղացնում է շուրջ 0,6 հա տարածություն, ծովի մակարդակից բարձր է ավելի քան 550մ: Այստեղ կան բազմաթիվ բնակարաններ, պաշտպանական խցեր, գետնափոր կացարաններ, պահեստներ, այլ նշանակության շինություններ: Ամրոցի կենտրոնական մասում է գտնվում կլոր հատակագծով գետնափոր կացարանը՝ կառուցված անտաշ քարերով ու կրաշաղախով, հարավային կողմից՝ հարմարեցված ժայռաքարին: Վերգետնյա բոլոր շինությունները հիմնականում ծառայել են որպես բնակարաններ: Դրանցից մեկը տեղադրված է նշված ստորգետնյա շինության հարավային կողմում (չափերը՝ 4,5x2,8 մ): Մուտքը (0,77 մ լայնությամբ) հարավից է, պահպանվող պատի բարձրությունը՝ 1,6 մ: Այս շինությանը կից սենյակներից մեկը բավականին լավ է պահպանվում: Պատերի միջին բարձրությունը 2 մ է, արեւելյան կողմից՝ ավելի քան 4 մ: Մուտքը հարավ-արեւելյան կողմից է: Արեւելքից կամարաձեւ (1,17 մ միջին լայնությամբ) խորանն է, որի եզրամասերը շարված են կարմիր աղյուսով:

59 Լեո, Վերջին վերքեր, մաս 1-ին, էջ 13: Իրոք, ամրոցի անվանումը համապատասխանում է նրա տեղադրությանը՝ երկու գետերի միախառնման տեղում, կապվելով ջրի հետ: Սակայն, այստեղ կա մի ոչ երկրորդական հանգամանք. պատմական աղբյուրներում (Կաղանկատվացի, Գանձակեցի, Օրբելյան եւ ուրիշներ) ի սկզբանե ամրոցը ներկայացվում է «Չարաբերդ» անվամբ, որը հիմք է տալիս անվանումը ստուգաբանել այլ կերպ. «Չար»-ն ունի նաեւ անօրեն ու խոտորեալ նշանակությունը (Նոր բառգիրք հայկազեան լեզուի, հ. 2, Վենետիկ, 1837, էջ 563), իսկ վերջինս՝ մոլոր, ծուռ, զարտուղի իմաստը (Նույն տեղում, հ. 1, Վենետիկ, 1836, էջ 969):
Խոտորել նշանակում է խորշել, օտարանալ, խոտորեցուցիչ-մոլորեցուցիչ, խանգարիչ եւ այլն (Նույն տեղում, էջ 969-970): Պարզ է, որ այստեղ խոսք կարող է լինել դավանական խոտորման՝ առաքելական դավանությունից շեղման մասին: Այդ է վկայում այն իրողությունը, որ ամրոցի մոտ գտնվող Երիցմանկանց վանքը հակաթոռ էր Գանձասարին (Արցախ, էջ 232), եղել է Աղվանից հակաթոռ կաթողիկոսների նստոցը (Դիվան, V, Երեւան, 1982, էջ 96), իսկ վանքի մոտ գտնվող գյուղատեղին կրում է «Խոտորաշեն» անվանումը (Ս.Ջալալեանց, Ճանապարհորդութիւն ի մեծն Հայաստան, Ա, Տփխիս, 1842, էջ 177):



Ամրոցի հարավային եզրի կիսավեր շինություններից մեկը (4,,6x3,2) աչքի է ընկնում չորս որմնախորշերով, որոնցից արեւմտյան կողմինը՝ կարմրագույն աղյուսաշեն է: Պատերը պահպանվում են 1,6 մ բարձրությամբ: Մուտքը (0,96 մ)՝ բացվում է հարավ-արեւելյան կողմից: Այս շինությանը հարավից կից է մեկ ուրիշը՝ նույնատիպ որմնախորշերով ու աղյուսաշեն շրջանակներով: Մուտքն արեւելյան կողմից է (լայնությունը՝ 1 մ), որը նախկինում փայտաշեն էր (պահպանվում են մնացորդները): Շինություններից մեկը՝ որ տեղադրված է նշվածների հարավային եզրամասում, բավականին մեծ չափեր ունի (9x5): Մուտքերը բացվում են արեւելյան եւ հարավային կողմերից: Այս շինությանը հյուսիսային կողմից կից է կիսավեր վիճակում գտնվող, նեղ հատակագծով փոքր չափերի (5x2 մ) մի կառույց:

Միջնաբերդը կառուցված է ամրոցի հյուսիսային հատվածում, բարձրադիր տեղում եւ վերաբերում է XVII-XVIIIդդ.: Այն իրականում մի ապարանք է՝ բաղկացած մի շարք սենյակներից[60]: Արեւմտյան սենյակաշարում երկայնական պատերով երեք կցասենյակներ են, գրեթե միաչափ (ներքուստ՝ 3,25x4,5մ), որոնք ունեն պահպանախորշեր, բուխարիներ եւ մեկական մուտք՝ միջանցքից, իսկ երրորդ սենյակի մուտքի դիմաց ՝ բուխարի, պատեզրին՝ միակ պատուհանը, որ բացվում է դեպի Թրղիի գետահովիտն ու Երիցմանկանց վանքը:


Երիցմանկանց վանքը հյուսիս-արեւելքից

Արեւելյան սենյակաշարը արտաքին պարսպապատերին է հարում երկայնական կողմով՝ շարքի միջին մասում առաջացնելով բաժանմունքներ: Սրանց հարավային մասում, բուխարու եւ խորշերի մնացորդներով ու ձորահայաց նեղլիկ պատուհանով մի երկարավուն սենյակ է, իսկ հյուսիսային շարունակությունը բաղկացած է միջանկյալ երեսբաց սրահով

60 Ա. Ղուլյան, Արցախի եւ Սյունիքի մելիքական ապարանքները, Երեւան, 2001, էջ 82-84:

կապված երկու գրեթե միաչափ սենյակներից, որոնց բակահայաց ճակատից 1,5-2,0մ հեռավորությամբ ձգվում է հաստվածաբար հենապատերով ամրացված ժայռազանգվածը:

Սենյակների պատերը պահպանվում են մինչեւ 2մ բարձրությամբ: Ըստ պահպանված հետքերի՝ սենյակների ծածկը փայտաշեն է եղել՝ հարթ, հողածածկ տանիքով:



Ջրաբերդ ամրոցի ապարանքը
*Չափ. Ա. Ղուլյանի*

Բացի վերոհիշյալ շինություններից, ամրոցի եզրամասերում (հատկապես հարավ-արեւմտյան կողմում) պահպանվում են բնակելի տների փլատակները, որոնք ավելի հին են, քան ներկայացված (XVII-XVIII դարերի) բոլոր շինությունները: Ամրոցի վերնամասում շրջագծով անց էր կացվել հենապատ, որը բազրիքի դեր է կատարել: Հարավ-արեւելյան եւ արեւմտյան կողմերից պարիսպները ունեին դիտակետեր: Պարսպապատերը բավականին լավ պահպանվում են ամրոցի հատկապես հարավ-արեւելյան եւ հարավ-արեւմտյան կողմերում, ինչպես նաեւ՝ հյուսիսային հատվածներում: Դրանց միջին հաստությունը 1 մ է: Հյուսիսային կողմի պարսպաշերտի վրա, գագաթնամասում, հյուսիս-արեւելյան եւ հյուսիս-արեւմտյան հատվածներում կառուցված են երկու աշտարակներ, որոնք հսկողության տակ են պահում ամրոցամերձ ճանապարհը: «Իհարկե, այսպիսի մի ամրություն





Կացարան ամրոցում

անհնարին էր պատերազմական գործողություններով գրավել. ուստի պաշարողները համբերությամբ նստել են նրա շուրջը, հեռվից նայել, մինչեւ որ կամ մի դավաճան կմատնե բերդը, կամ թե սովը կսկսէ պաշարուածներին զոռել: Ավանդությունը պատմում է, թե մի անգամ այսպիսի սով է ընկնում բերդի մեջ. բայց գտնվում են քաջեր, որոնք չեն թողնում, որ սովը մարդկանց գերության դուռը տանի: Նրանք դուրս են թափում բերդի շինությունների համար ամբարած կիրը, փռում են, սկսում քամել մաղերով: Պաշարող թշնամին տեսնում է այդ , կարծում է թե կիրը ալյուր է, որ դեռ երկար ժամանակ պիտի պահէ պաշարուածներին եւ հուսահատված քաշվում է, հեռանում»[61]:

Ջրաբերդ ամրոցն ունի միայն մի մուտք՝ պարսպի պատով[62]: «Թրղի գետի ժայռոտ ձորի կողքով, ճանապարհի գլխին, ժայռի մի ահագին բեկորի վրա երեւում է բերդի դուռը»,- գրում է Լեոն[63]: «... Բայց որովհետեւ բերդումս չկայ ջուր, վասն որոյ բերդիս միջից դեպի Թարթառ գետն կտրած են վիմափոր ականներ, որոնց միջի սանդղաձեւ աստիճաններով երթեւեկելով ջուր մատակարարած են բերդիս պաշարման ժամանակ: Թարթառն գործ դնելով իւր մշտագործ գործիները, վերստին փորած եւ իջեցրած է բաւականին իւր յատակը, այս պատճառաւ ականների արտաքին բերանները բարձր մնացած են գետի երեսիցն»[64]:

Ամրոցի խիտ բուսականությունը (ծառեր, թփեր, մացառուտներ) հնարավորություն չտվեց առավել ամբողջական ու մանրակրկիտ ուսումնասիրություն կատարել: Կարծում ենք, որ պեղման-մաքրման աշխատանքների միջոցով միայն կարելի է բացահայտել այս նշանավոր ամրոցի պատմությունը, փաստացի տվյալներով որոշել նրա գոյատեւման ճշգրիտ էտապները ու ճարտարապետական, ամրաշինական յուրահատկությունները:

61 Լեո, Իմ հիշատակարանը, էջ 264:

62 Արցախ, էջ 240: Երիցմանկանց վանք տանող ճանապարհի կողմից, ամրոցի տակով 50-ական թվականներին երկրաբանական–հետախուզական արշավախումբը թունել է փորել, նպատակ ունենալով հիդրոէլեկտրակայան կառուցել: Այդ թունելից դուրս գալով, ավելի հեշտությամբ կարելի է մտնել ամրոցի տարածքը:

63 Լեո, Իմ հիշատակարանը, էջ 253:

64 Արցախ, էջ 240:

# Ասկերանի ամրոցը

Ասկերանի ամրոցը գտնվում է Ստեփանակերտից 12կմ արևելք, Ասկերան ավանից հարավ-արևմուտք, Կարկառ գետի ստորին հոսանքում, որտեղից դեպի հյուսիս-արևմուտք տարածվում է Խաչենի հարավային դաշտավայրը, իսկ դեպի հարավ-արևելք՝ Վարանդայի ամրակուռ բարձրավանդակը, սկսած Քյաթուկ լեռնազանգվածից[1]:

XVII և XVIIIդ. առաջին կեսին Անդրկովկասի զգալի մասը (այդ



Ասկերանի ընդհանուր տեսքը հարավ - արևմուտքից

թվում Լեռնային Ղարաբաղը) գտնվում էր Պարսկաստանի գերիշխանության տակ: Երբ 1747թ. սպանվեց Նադիր շահը և ծայր առան երկպառակտությունները ու գահակալական կռիվները, խաները իրենց անկախ հռչակեցին: Ինքնիշխան խանություն կազմակերպվեց նաև Ղարաբաղում՝ վաչկատուն ցեղապետ, իննակոչ Փանահ Ալիի գլխավորությամբ: Վերջինս հաստատվելով Շուշիում, պայքար է ծավալում մելիքությունների դեմ՝ նպատակ հետապնդելով Լեռնային Ղարաբաղը ամբողջապես ենթարկել իրեն: Այս ժամանակներից սկսած, Ղարաբաղ են ներթափանցում թուրք-քոչվորների առաջին ստվար խմբերը:

Պարսկաստանը չի հաշտվում տարածքային կորուստների հետ և ձգտում է իրեն վերաենթարկել խանությունները, իսկ վերջիններս միմյանց նկատմամբ անհաշտություն են ցուցաբերում, հաճախակի են դառնում թափառական ավարառու ցեղախմբերի ասպատակությունները: Այս ամենը կտրուկ փոխում է ռազմա - քաղաքական իրավիճակը

1 Ա-դո, Հայ-թուրքական ընդհարումները Կովկասում, Երևան, 1907, էջ 190:



տարածաշրջանում՝ կարևորելով հուսալի պաշտպանական շինությունների կառուցման, հների նորոգման գործը: Դրանցից էր Ասկերանի ամրոցը:

Ամրոցի մասին պատմական աղբյուրները բավականաչափ տեղեկություններ են հաղորդում: Հակոբ Զաքարյան-Շուշեցին գրում է. «Վեց ժամու հեռի ի քաղաքէն (Շուշիից-Ս.Ս.) դեպի յարևելեան կողմն, ուր վերոյիշեալ երկու կետքն ընդ այլ ևս երկուց կետոց և բազում գետանման աղբերց միաւորեալ, ի մի գետ ընթացեալ անցանէ ընդ հովիտս երկուց մեծամեծ լերանցն Ասկարանու, ի վերայ որոց շինեցան ամրոցքն: Մեկն յայս կոյս գետոյն և միւսն յայն կոյս դէմ հանդիման միմեանց»[2]:

Հիշատակություններ ունեն նաև Ս.Ջալալյանցը[3], Ա-դոն[4] և ուրիշներ, որոնք ամրոցի կառուցումը վերագրում են Փանահ խանին, ժամանակը՝ XVIIIդ. կեսերը:

Ամրոցի կառուցումը Ղարաբաղի խաներին է վերագրում նաև ադրբեջանական պատմագիտությունը. Ախմեդ-բեկ Ջևանշիրը՝ Միհրալի խանին (ժամանակը՝ 1758-60թթ.)[5], Միրզա Ջամալը՝ Իբրահիմ խանին (1788-89թթ.)[6], ադրբեջանական հանրագիտարանը՝ Փանահ խանին[7]:

Ասկերանի մասին պատմական խիստ արժեքավոր տեղեկություններ են հաղորդում ռուսական աղբյուրները (Պոտտո, Դուբրովին, Պախոմով):

Ներկայացնելով 1804-13թթ. ռուս-պարսկական պատերազմը, Ասկերանին անդրադարձել է նաև ավստրիացի Վիսսերդը[8]:

Աղբյուրների պատմա - համեմատական վերլուծությունն ու տեղում կատարած ուսումնասիրությունները իրենք վկայում են, որ ներկայիս ամրոցը հիմնականում կառուցվել է XVIIIդ. երկրորդ կեսին՝ խանական ժամանակաշրջանում: Ըստ էության շինարարությունն իրականացվել է թե՛ դարի 50-ական թվականներին (ձախակողմյան հատված) և թե 1788-89թթ. (աջակողմյան հատված): Սակայն, բոլոր դեպքերում, ամրոցի կառուցումն իրականացրել են հայերը (Վարանդայի և Խաչենի

2 Հակոբ Զաքարյան-Շուշեցի, «Պատմութիւն գաւառին Արցախու», Երուսաղեմ, 1853, Մատենադարան, ձեռ. 2734:

3 Ս.Ջալալեանց, Ճանապարհորդութիւն ի Մեծն Հայաստան, մասն Ա, Տփխիս, 1842, էջ 197:

4 Ա-դո, նշվ. աշխ., էջ 190:

5 Ахмед-бек Джеваншир, О политическом существовании Карабагского ханства, Шуши,1901, էջ 19 - 20:

6 Мирза Джамал Джеваншир, История Карабага, Баку, 1959, էջ 102:

7 АСЕ, Т.4, Баку, 1980, էջ 233:

8 O.Wssehrd, Die Kampfe zwischen- Persien und Russland in Transkaukasien Seit 1804 bis 1813, Vien, 1864, էջ 13:

մելիքությունների՝ ամրոցին մերձակա գյուղերի բնակիչները)։ Ամրոցի ճարտարապետությունը, շինարարական արվեստը մեծ ընդհանրություններ ունեն XVIIդ. կառուցված Բովուրխանի ամրոց-համալիրի, Ավետարանոցի (XVIIIդ. ), ինչպես նաեւ Շուշիի ամրոցի հետ։ Թուրքերի մասնակցությունը շինարարությունում բացառվում է ոչ միայն այն պատճառով, որ քոչվորն անկարող էր հատկապես ճարտարագիտական նման սխրանքի, այլեւ այն, որ տվյալ ժամանակաշրջանում մոտակայքում թուրքական բնակավայր ընդհանրապես գոյություն չի ունեցել։ Ավելին, առանձին փաստեր վկայում են, որ ամրոցը ըստ էության վերակառուցվել է հնի տեղում՝ հարմարեցվելով նոր պահանջներին։ Սակայն, հին շրջանի պատմական անցքերի մասին մեզ տեղեկություններ չեն հասել, բայց բուռն իրադարձություններ են ծավալվել ամրոցում XVIIIդ. վերջին տասնամյակներից ի վեր։ Ե.Պախոմովը 1902թ. լինելով Ասկերանում, գրել է. «Մինչեւ XVIIIդ. կեսերը նշված վայրը

Ամրոցի գծապատկերը ըստ Ե. Պախոմովի (1902թ.)



(Ասկերանը-Ս.Ս.) մտնում էր Վարանդայի մելիքության մեջ՝ հանդիսանալով այն դարպասը, որտեղից այդ ժամանակներում լեռնաշխարհ էին թափանցում թուրքերը։ Այնուհետեւ, Ասկերանը, որ Ղարաբաղի խանության մայրաքաղաք Շուշի տանող դարպաս էր ծառայում, նշանակալի դեր է խաղացել XIXդ. սկզբին, Ղարաբաղի՝ Ռուսաստանին միացման ժամանակաշրջանում եւ ավելի ուշ ու լքվել է խանությունների վերջնական կործանումից հետո»[9]։

«Լեռնային Ղարաբաղի պատմաճարտարապետական հուշարձանները» գրքի հեղինակ Շ.Մկրտչյանը գրում է. «Անհիշելի ժամանակներում ամրոցը մոտակայքում գտնվող հայկական բնակավայրի հետ միասին կոչվել է Մայրաբերդ»[10]։ Ասկերանը Մայրաբերդ է անվանում

9 Տես Известия азербайджанского археологического комитета, Баку, 1926, թիվ 2, էջ 9։
10 Ш.Мкртчян, Историко-архитектурные памятники Нагорного Карабаха, Ереван,1988, էջ 162։



նաեւ Հ.Խաչատրյանը, նշելով նաեւ, որ այն եղել է Տիգրան Մեծի հովոցը[11], որը հեռու է իրականությունից։

1779թ. գահակալական կռիվներում հաղթանակած Աղա-Մուհամմեդ խանը Պարսկաստանի երբեմնի գերիշխանությունը Անդրկովկասում վերականգնելու նպատակով 1793թ. ամռանը Ղարաբաղ է ուղարկում Սուլեյման Շահզադային[12]։ Պարսից զորախմբերի հարձակման լուրը հայերին ստիպում է պատսպարվել դժվարամատչ վայրերում, խոր անտառներում, ինչպես նաեւ՝ ամրոցներում (Ջրաբերդում, Ասկերանում)։ Շուշիի Իբրահիմ խանը պարսկական հարձակումը կասեցնելու նպատակով, օգնություն է խնդրում Ասկերանի ամրոցի կառավարիչ Հասան բեկից[13]։ Մոտակա հայկական գյուղերից ամրոցում պատսպարված ժողովուրդը շուշեցիներին օգնելու համար, գիշերով հարձակվում է թշնամու զորախմբերի վրա, նրանց հասցնում ծանր կորուստներ եւ ստիպում թողնել Ղարաբաղի սահմանները։ Անհաջողության է մատնվում նաեւ երկու տարի հետո նույն զորավարի ձեռնարկած մեկ այլ հարձակում։ Այս անհաջողությունները զայրացնում են Աղա-Մուհամմեդ խանին, որը մեծ բանակով երկու անգամ (1795թ. ամառ-1779թ. գարուն) արշավում է Ղարաբաղի վրա։ Խանի եւ Մելիք Ջումշուդի՝ Ասկերանում (1797թ.) հանդիպման մի դրվագ է ներկայացրել Սարգիս Հասան-Ջալալյանցը[14]։

11 «Ակունք», 1991, թիվ 5-6, էջ 35։
Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ «Ասկերան» անվանումը իր ծագման բնույթով թուրքական «ասկյար» բառի հետ ոչ մի կապ չունի եւ որ այն բնիկ հայկական անվանում է՝ ծնունդ հայկական լեռնաշխարհի։ Տեղանունը կազմված է «աս» եւ «կարան» բառարմատներից, քանի որ ուղիղ ձեւը Ասկարանն է։ «Կարան» նշանակում է քար, որն այդ նշանակությամբ այսօր էլ օգտագործվում է Ղարաբաղի բարբառում։ Նույն հիմնավորմամբ, օրինակ, «կարկուտ» նշանակում է քարակույտ։ «Աս»-ն ունի երկնային, աստվածային, սուրբ նշանակություն։ «Սուրբ քար» ասելով պետք է նկատի ունենալ ոչ թե սովորական, մեր շրջապատում թափված քարերը, այլեւ լեռները, լեռնագագաթները, քարաժայռերն ու կարկառները, կարաններն ու քարանձավները, որոնք հեթանոս ցեղերի համար եղել են պաշտամունքային։ Ասկերան - Ղլիջբաղի թիկունքով, դեպի Սարդարաշենի կողմերը ձգվող լեռան ստորին՝ Ասկերանին մերձ բարձունքը (968,1 մ) ներկայումս (նաեւ ըստ ռազմական քարտեզների), կրում է «Հացոտ» անվանումը, որը բառացի նշանակում է «սրբոտ» (սրբատեղի, սրբավայր), քանզի «Հաց»-ի նախատիպը «Հաս»-ն է, որն ունի սուրբ նշանակություն։ Օրինակ, Վաղուհաս - Վըղըհաս - «հողը սուրբ»՝ Մարտակերտի շրջանում, Հասանաբադ - Հասնապատ - «սուրբ բնակավայր»՝ Ասկերանի շրջանում, Հացի - Հասի - «սուրբ»՝ Մարտունու շրջանում եւ այլն ( հմմտ. «հաս» -ը որպես մերձավոր կնոջը դիմելու ձեւ՝ Սոնա հասի - «Սոնա սուրբ»)։ Մանրամասնությունները՝ իմ «Արցախ-Ուտիք. պատմական տեղանուններ» գրքում։
12 Մատենադարան, ձեռ. 2734։
13 Նույն տեղում, էջ 11։
14 Հայկական աղբյուրները Աղա Մուհամմեդ խանի Անդրկովկասյան արշավանքների մասին,Երեւան, 1981, էջ 163-164։

Ասկերանի դերը կարեւորվում է հատկապես XIXդ. սկզբներին, Ղարաբաղի՝ Ռուսաստանին միացման ժամանակաշրջանում։ Պարսից Ֆաթալի շահին չի հաջողվում Ռուսաստանի առաջխաղացումը Շուշի կասեցնելու նպատակով համաձայնության գալ Իբրահիմ խանի հետ (վերջինս երկերեսանի քաղաքականություն էր վարում) եւ զորքերը մտցնել Ասկերան ու Շահբուլաղ[15]։ Դեռ ավելին, Կյուրակչայի պայմանագրով (1805թ. մայիսի 14) Ղարաբաղը ընդունում է ռուսական հովանավորությունը եւ ռուսական մի գումարտակ, մայոր Լիսանեւիչի հրամանատարությամբ, որպես կայազոր, տեղավորվում է Շուշիում[16]։ Այս ամենը անխուսափելի է դարձնում ռուս-պարսկական ընդհարումները։ Պարսկական զորքերը (10 հազար) Փիր-Ղուլի խանի գլխավորությամբ, որին հետեւում է թագաժառանգ Աբաս Միրզան իր բանակով, շրջանցելով Խուդափերինի կամուրջը (որտեղ կանգնած էր Լիսանեւիչի զորախումբը), հայտնվում է Ջեբրայիլի այգիների մոտ։ Անիմաստ համարելով պարսից մեծաքանակ զորքերին դիմադրելը եւ խուսափելով լայնածավալ ընդհարումներից, Լիսանեւիչը նահանջում է Շուշի[17]։ Հունիսի 16-ին Փիր-Ղուլի խանի զորքերը գրավում են Ասկերանի ամրոցը, իսկ Աբաս Միրզան հայտնվում է Խոնաշեն գետի հովտում (այժմյան Մարտունու շրջան-Ս.Ս.)[18]։ Շուշիի բերդապահ զորքն ուժեղացնելու եւ պարսկական զորքերի առաջխաղացումը կասեցնելու համար, կառավարչապետ, ռուսական զորքերի գլխավոր հրամանատար Ցիցիանովը հունիսի 18-ին ուղարկում է 17-րդ եգերական գունդը՝ գնդապետ Կարյագինի հրամանատարությամբ (ընդամենը 493 զինվոր եւ երկու թնդանոթ)[19]։ Միաժամանակ, Շուշիում գտնվող Լիսանեւիչին հրաման է տրվում գրավելու Ասկերանը, թույլ չտալ պարսիկների մուտքը կիրճ եւ նրանց հարվածել այն պահին, երբ Կարյագինը հարձակվի ճակատից։ Սակայն, երբ հունիսի 24-ին Կարյագինը մոտեցավ Ասկերանին, այն արդեն գրավված էր պարսիկների կողմից։ Նկատելով ռուսական զորքերի սակավությունը, պարսկական զորքերը սկսեցին հախուռն հարձակումներ գործել նրանց վրա, բայց ետ շպրտվեցին։ Այդուհանդերձ, համառ, արյունահեղ ու վճռական ճակատամարտում, որը

15 Мирза Джамал, История Карабага, էջ 91-92։

16 В.Потто, Первые добровольцы Карабага, Тифлис,1902, էջ 12։

17 Н.Дубровин, История Войны и владычества русских на Кавказе, СПБ, 1886,էջ 442, Լեո, Ընտիր երկեր, հատոր 4, Երեւան, 1984, էջ 262։

18 Լեո, հ. 4, էջ 263։

19 Ասկերանում եւ հարակից շրջաններում տեղի ունեցած իրադարձություններին են նվիրված հետեւյալ աշխատությունները. В.Потто, Первые добровольцы Карабага, Тифлис, 1902,նույնի Кавказская война в отдельных очерках, эпизодах, легендах и биографиях, Т.1., выпуск 3, СПБ, 1887, էջ 378-390, նույնի Утверждение русского владычества на Кавказе от 1803-1806гг., СПБ, 1866, էջ 423-429 եւ այլն։



տեղի ունեցավ Ասկերան ամրոցի մոտ, Ղարա–հաջի–բաբա տեղավայրում ռուսական փոքրաթիվ ուժերը ծանր պարտություն կրեցին. սպանվեցին 33, վիրավորվեցին 164 զինվորներ (այդ թվում Կարյագինը)[20]։ Ստեղծվեց շատ ծանր ու տագնապալի դրություն։ Լիսանեւիչը դեռ գտնվում էր Շուշիում, իսկ միայնակ ճեղքել Ասկերանը, կնշանակեր կամովին ընկնել թշնամու թակարդը։ Շուտով Փիր-Ղուլի խանին Ասկերանում միացավ Աբաս Միրզայի 30 հազարանոց բանակը, դեպի Ասկերան շարժվեց նաեւ Բաբա Խանը (Ֆաթալի շահը)։ Նշենք, որ այս ճակատամարտում ռուսներին անգնահատելի օգնություն է ցույց տվել Վանի հարյուրապետը, որը մարտերից հետո էլ կարողանում է ռուսական զորքերի մնացորդներին դուրս բերել շրջապատումից, անցկացնել Շահբուլաղի ամրոցը, իսկ այստեղից՝ Մոխրաթաղ ու Մարտակերտ։ Ռուսական զորքերին հետապնդող Աբաս Միրզան չկարողանալով իր ձեռքում պահել Կարյագինին, նահանջում է Ասկերան։

Պարսկական զորախմբերը Ասկերանից դուրս շպրտելու նպատակով, շուտով Ելիզավետպոլից ուղարկվում է գեներալ Նեբոլսինը։ Նրա շուրջն էին համախմբվել գնդապետ Կարյագինը, Վանի հարյուրապետը, նրա եղբայր Հակոբ Աթաբեկյանը եւ ուրիշներ։ 1806թ. հունիսի 8-ին ռուս-հայկական զորքերը մտնում են Ասկերան։ Սակայն, այստեղ նրանց դիմավորում է մայոր Լիսանեւիչը, որը նախքան ռուսական հիմնական ուժերի Ասկերան հասնելը, պարսիկներին դուրս էր քշել ամրոցից։ Հաջորդ օրը, մի գումակ թողնվեց ամրոցում, իսկ հիմնական ուժերը տեղափոխվեցին Խոնաշեն գետի մոտ, որտեղ հաստատվել էին պարսկական հիմնական ուժերը։ Այստեղ, հունիսի 13-ին տեղի ունեցավ արյունահեղ ճակատամարտ, որը ստիպեց Աբաս Միրզային թողնելու Ղարաբաղի սահմանները։ Խոնաշենի մարտում քաջագործությամբ աչքի ընկան Վանի հարյուրապետը, Մելիք Ջումշուդը՝ իր զորքով եւ ուրիշ կամավորներ, որոնք արժանացան կոմս Գուդովիչի եւ գեներալ Նեբոլսինի գրավոր գովեստներին։

Ասկերանի ամրոցը հայտնի է նաեւ մեկ այլ պատմական իրադարձությամբ։ 1810թ. ապրիլի վերջերին այստեղ կայացան ռուս-պարսկական բանակցություններ, որին մասնակցում էին կառավարչապետ նշանակված գեներալ Տորմասովը, պարսկական կողմից՝ Աբաս Միրզայի վեզիր Միրզա Բյուզուրկը։ Բանակցությունները շարունակվեցին 18 օր, որից 6 օր նվիրվեց Թալիշի խանությանը[21]։

Պարսկաստանը Ռուսաստանից պահանջում էր հրաժարվել այդ խանությանը հովանավորելուց եւ ճանաչել նրա միակ կախումը

20 Н.Дубровин, История войны и владычества русских на Кавказе, էջ 446։

21 Акты собранные Кавказского Археографического Коммиссиею, Т.4, Тифлис,1870, էջ 709, Т.3,Тифлис,1869, էջ 345 եւ այլն։

Պարսկաստանից[22]: Բացի այդ, Պարսկաստանը հավակնություններ ուներ Դաղստանի, Մեղրու եւ նրան մերձակա մի շարք այլ տարածքների նկատմամբ: Գեներալ Տորմասովի՝ Եփրեմ կաթողիկոսին ուղղված նամակից[23] պարզվում է, որ Ասկերանում Տորմասովը Բյուզուրկին ներկայացրել է երեք հարց, որը սակայն մերժվել է՝ հանգեցնելով ռազմական գործողությունների անխուսափելիությանը[24]: Բյուզուրկը իր կառավարությունից գաղտնի, անգլիական դեսպանի կողմից ներշնչված հրահանգներ ստանալով, վերադարձավ Թավրիզ: Տորմասովն էլ շտապ մեկնեց Թիֆլիս, նախապատրաստվելու ռազմական գործողութ-յուններին[25]:

Պարսկական բանակը (12 հազար) Փիր-Ղուլի խանի, Հաջի-Մամեդ խանի եւ Փեզի բեկի գլխավորությամբ Խուդափերինի կամրջով ընդհանուր հարձակման անցավ: Մեղրին պաշտպանելու համար հունիսի 2-ին այնտեղ է մեկնում գնդապետ Կոտլյարեւսկին: Մտնելով Ղարաբաղ, պարսկական բանակը բաժանվում է երկու մասի. 500 հոգանոց մի ջոկատ մտնում է Դիզակի Տող գյուղը (հունիսի 16-ին), իսկ մի այլ զորաջոկատ հայտնվում է Ասկերանում (17-ին)[26]:

Պարսկական հարձակումը Ասկերանի վրա դիմագրավելու համար, Տորմասովն ուղարկում է Ասեեւի գումարտակը, որը միայն երկու օր հետո է Ասկերան հասնում (19-ին): Սակայն, նախքան ռուսների Ասկերան մտնելը, նկատի ունենալով անբարենպաստ եղանակը (ուժեղ անձրեւներ), ինչպես նաեւ՝ երկյուղելով ռուսական հարձակումներից, պարսկական ուժերը նահանջում են ելման դիրքերը (Արաքս գետը): Որոշ դադարից հետո վերսկսվում են ռազմական գործողությունները: 1810թ. սեպտեմբերի 28-ի՝ գեներալ Տորմասովին հղած զեկուցագրում[27] գեներալ Նեբոլսինը հայտնում է, որ ինքը հոկտեմբերի 13-ին Ասկերան է գործուղելու երեք վաշտ՝ հրետանիով: Իսկ գնդապետ Ասեեւի հոկտեմբերի 29-ի զեկուցագրից[28] պարզվում է, որ պարսկական 7000-անոց բանակը Փիր-Ղուլի խանի, Իբրահիմ-խան Ղաջարի եւ Ղարադաղի Հաջի-Մամեդ խանի գլխավորությամբ մտել է Ղարաբաղ: Պարսկական հարձակումը կասեցնելու համար, առաջադրանք է ստանում Ասկերան-զորանոցում տեղաբաշխված Տրոիցկյան գունդը՝ մայոր Աֆանասեւի հրամանատարությամբ[29]:

22 Акты ...Т.4, էջ 710:
23 Акты ... Т.4, էջ 751:
24 Х. Ибрагимбейли, Россия и Азербайджан в первой трети XIX в., Москва, 1969, էջ 105-108:
25 Акты ... Т.4, էջ 524:
26 Акты ... т.4, էջ 556:
27 Акты ... Т.4, էջ 743:
28 Акты ... Т.4, էջ 744:
29 Նույն տեղում:



Ասկերանի ամրոցը նշանակալի դեր է խաղացել նաեւ հետագայում, հաջողությամբ պայքարելով թե՛ ներքին եւ թե՛ արտաքին թշնամիների դեմ:

1905-1906թթ. այստեղ տեղի ունեցան հայ-թուրքական ընդ-հարումներ: Միայն 1905թ. օգոստոսի 18-ից 22-ը ընդհարումներում թուրքերը տվեցին ավելի քան 300 զոհ: Ասկերանը ստացավ «Գանլի» (արյունոտ) անունը: Ի դեպ, երբ թուրք անվանի բեկերից մեկը՝ Ադիգյոզալբեկ Ադիգյոզալովը երկու հարյուր ձիավորների գլուխ անցած Աղդամից շարժվում է դեպի Շուշի, յուրայիններին օգնության հասնելու նպատակով, Ասկերանում հանդիպում է գյուղացիների համառ դիմադրությանը՝ Համազասպի ղեկավարությամբ: Ադիգյոզալովի հեծյալ խումբը գլխովին ջարդվում է, իսկ ինքը՝ Ադիգյոզալբեկը, մի շատ փոքրաթիվ, 10-15 հոգուց բաղկացած խմբով հազիվ կարողանում է ճողոպրել: Այդ կռվի ժամանակ իրենց խիզախությամբ աչքի են ընկնում Ալեքսան դային, Մեսրոպ քահանա Շահիջանյանը, որը եւ հենց այդ օրվանից կոչվում է Դալի Մահրասա, Իսրայել Ղուլիքեխյանը, Սերգեյ Բաբայանը եւ ուրիշներ, ինչպես նաեւ Քյաթուկ գյուղից Գիգո Սաղյանը[30]:

Ասկերանի՝ դեպի Շուշի փակված լինելու հանգամանքը թուրքերին ստիպեց 1905թ. սեպտեմբերին եւ 1906թ. հունվարին հարձակումներ գործել Խրամորթ-Խնապատ, Նախիջեւանիկ- Փիրջամալ-Վարազաբուն ուղղություններով, նպատակ ունենալով Քյաթուկ գյուղի հարավային լանջերով ճանապարհ հարթել դեպի Մալիբեկլու եւ Շուշի: Հարձակումն այնքան անակնկալ էր, որ Խրամորթի բնակիչները ստիպված հեռացան գյուղից, մյուս վայրերում (հատկապես Խնապատի մոտ) հարձակումը ետ մղվեց: 1906թ. հուլիսին Ասկերանը իր շրջականերով նորից հարձակումների ենթարկվեց: Հիմնական իրադարձությունները տեղի ունեցան Նախիջեւանիկ-Փիրջամալ, Խրամորթ-Քարագլուխ-Խնապատ հատվածներում: Սակայն, հայ ազատամարտիկները ոչ միայն համառ դիմադրություն էին ցույց տալիս թշնամուն, այլեւ հակահարվածներով ստիպում էին նրանց փախուստի դիմել. ավերվեցին թուրքաբնակ Ավդալ-Գյուլափլու գյուղերը[31]:

Ասկերանը իր պաշտպանական առաքելությունը շարունակեց նաեւ 1918-20թթ.՝ հերոսաբար դիմագրավելով օսմանյան եւ ազերի թուրք հրոսակներին: Թուրքերի նպատակն էր մտնել Շուշի եւ հաստատել Ադրբեջանի իշխանությունը Լեռնային Ղարաբաղի վրա:

1918թ. սեպտեմբերի 21-ին նոր կռիվներ են բորբոքվում: Մեր ինքնապաշտպանական ուժերը կատաղի դիմադրություն են ցույց տալիս

30. Ե. Իշխանեան, Լեռնային Ղարաբաղ, Երեւան, 1999, էջ 481:
31. Ադո, նշվ. աշխ., էջ 190-202:

մի քանի անգամ գերազանցող թշնամուն: Թուրքերը ուժեղ գրոհով գրավում են Ասկերանի աջ կողմում գտնվող Միրիշանլու գյուղը, սակայն անհաջողություն են ունենում Քյաթուկ, Փիրջամալ, Վարազաբուն գյուղերի մատույցներում տեղի ունեցող մարտերում: Արշավիր Պետրոսյանի ղեկավարությամբ գործեղ մեր ուժերին հաջողվում է թշնամական ուժերին մեծ կորուստներով ետ շպրտել: Թշնամին անհաջողություն է ունենում նաեւ Ղլիջբաղ, Խրամորթ, Խնապատ, Քարագլուխ եւ Ասկերան բնակավայրերի մատույցներում: Դալի Մահրասայի, Մուսայի, Աղասու եւ Ալեքսան դայու գլխավորությամբ գործող մեր ինքնապաշտպանական ուժերին հաջողվում է հակառակորդին մեծ կորուստներ պատճառել[32]: Սակայն, թշնամին շարունակում է առանց դադարի նոր գրոհներ ձեռնարկել, Ասկերանից աջ գրավելով Դահրազ գյուղը: Մեր ուժերին զինամթերքը չէր բավարարում: Ի լրումն այդ ամենի, ձախակողմյան ճակատի գլխավոր հրամանատար Ալեքսան դային երկու կողմից վիրավորվում է եւ փոխադրվում թիկունք (Խանձք գյուղ): Այդ ամենը ստիպում է մեր զինվորներին նահանջել. ձախ կողմի ուժերը՝ դեպի Սարդարաշեն, աջ կողմի ուժերը՝ դեպի Հարավ:

Սեպտեմբերի 23-ին, գիշերը թուրքերը գրավում են Քարագլուխ, Խրամորթ, Խնապատ, Ղլիջբաղ, Ասկերան, Քյաթուկ, Նախիջեւանիկ, Փիրջամալ եւ Վարազաբուն գյուղերը [33]:

1920թ. գարնանը ընդհարումները վերսկսվեցին: Մարտի 23-ին հարձակման ենթարկվեց Ասկերանի թուրքական պահակախումբը, Շուշիի եւ Վարարակնի զորանոցները[34]: Նույն ամսին Երեւանից, այժմյան Մարտունու շրջանի Աշան գյուղ եկավ Ղազար (Միքայել) Բադալքյոխվյանը (Դալի Ղազարը՝ ծագումով Գանձակից- Ս.Ս.), որը ստանձնեց Ղարաբաղի ինքնապաշտպանության ղեկավարությունը: Մարտի 24-ից սկսվեցին ուժեղ կռիվները Դիզակ-Գյուլիստան ամբողջ երկայնքով: Առանձնապես կատաղի մարտեր բռնկվեցին Ասկերանի ճակատում[35]: Աղդամում նախապես կուտակված թուրք բաշիբոզուկները 15 կմ ճակատով (Վարազաբուն-Քարագլուխ) մոլեգին գրոհներ ձեռնարկեցին Ասկերանի ամրոցում տեղաբաշխված հայ ինքնապաշտպանության ուժերի եւ շրջակա գյուղերի վրա, սակայն ջախջախիչ հարվածներ ստանալով, ետ շպրտվեցին: Կռիվները շարունակվեցին նաեւ հաջորդ երկու օրերին: Թշնամին ձգտում էր ճեղքել Ասկերանը եւ բացել Շուշիի ճանապարհը: Մարտի 27-ին թուրքերը համալրումներ ստանալով, դիմեցին նոր, կատաղի գրոհների: Հայերը ոչ

32 Ե. Իշխանեան, նշվ. աշխ. էջ 229:
33 Նույն տեղում:
34 Հ.Թումյան, Դեպքերը Լեռնային Ղարաբաղում, 1917-20թթ., Երեւան, 1966.–Մատենադարան, արխիվ, N 29, 3-րդ մաս, էջ 10:
35 ՀՊԿՊԱ ֆ.200, Գ. 563, Թ. 100:



միայն ետ մղեցին թշնամուն, այլեւ հակահարձակման անցնելով, նրան ստիպեցին փախուստի դիմել: Թուրքական զինված ուժերը ռազմի դաշտում թողեցին 60 սպանված ու 200-ից ավելի վիրավորներ: Շուտով, թշնամու զինված ուժերը նոր համալրումներ ստացան: Աղդամ բերվեցին առաջին Ջիվանշիրյան հետեւակ գունդը, Գանձակի երրորդ գունդը, առաջին թաթարական, երկրորդ ղարաբաղյան, երրորդ Շեքեյան հեծյալ գնդերը, Սելիմ բեկ Սուլթանովի 600 հոգանոց քրդական հեծելազորը, Օսմանյան ասկյարների, Դաղստանի լեռնականների ջոկատները, թվով 80 հազար մարդ:

Մարտի 28-ի գիշերը բնակիչներից դատարկվեցին Աղդամն ու սահմանամերձ մուսուլմանական մյուս խոշոր բնակավայրերը: Ղարաբաղի ամբողջ տարածքում վերսկսվեցին ռազմական գործողությունները: «Ընթանում էր պատերազմի 9-րդ օրը, բայց Հայաստանից խոստացված օգնությունը չկար ու չկար, մինչդեռ Ադրբեջանը ժողովում էր իր վերջին ուժերը, հայկական Ղարաբաղը Հայաստանի քարտեզից ընդմիշտ ջնջելու համար»,- սրտի ցավով գրում է դեպքերի մասնակից Հարություն Թումյանը[36], լավ գիտենալով Հայաստանի կացությունը:

Մարտի 30-ին հակառակորդը սկսեց վճռական գրոհները: Մի զորաջոկատ՝ գեներալ Սելիմովի գլխավորությամբ, ձգտում էր Ասկերան մտնել Քարագլուխ եւ Խրամորթ գյուղերը գրավելուց հետո, բայց Խրամորթի մոտ անհաջողության մատնվեց: Կատաղի մարտերը վերսկսվեցին հաջորդ օրը. թշնամին բարձրագոչ աղաղակներով ու անկանոն հրաձգությամբ հարձակման անցավ: Հայերի պաշտպանությունը Աղդամ-Ասկերան խճուղու ուղղությամբ ղեկավարում էր Ղազար Բադալքյոխվյանը: Ծանր ճակատամարտն ավարտվեց հայերի հաղթանակով: Թուրքերը նահանջեցին՝ ռազմի դաշտում թողնելով ավելի քան 500 սպանված ու վիրավոր (հայերի կորուստներն են՝ 16 զոհ, 70 վիրավոր): Թուրքերը անհաջողության մատնվեցին նաեւ ապրիլի 1-ի հարձակման ժամանակ: Դրանք ստիպեցին թուրքական գլխավոր հրամանատարությանը՝ նոր նշանակումներ կատարել. գեներալ Սելիմովին փոխարինեց օսմանցի Խալիլ Փաշան: Սկսվեցին կատաղի հարձակումները, որոնք սակայն թուրքերին հաջողություն չբերեցին: Ասկերանի պաշտպանները թշնամուն ետ էին մղում Աղդամի սահմանները: Բայց ուժերն անհավասար էին, իսկ զինամթերքը չէր բավարարում:

1920թ. ապրիլի 3-ին Խալիլ Փաշան, օգտվելով գարնանային անթափանց մառախուղից, սկսեց վճռական գրոհները: Թուրքերը

36 Հ.Թումյան, նշվ. աշխ., 3-րդ մաս, էջ 13:

գրավեցին Խրամորթը: Բադալքյոխվյանը գերհոգնած պաշտպաններին նահանջելու հրաման տվեց: Թշնամին մոտեցավ հայ մարտիկների վերջին դիրքերին՝ անմիջապես ամրոցի մոտ: Արի հրամանատարը ատրճանակի կրակոցներով սպանեց օսմանյան մի սպայի եւ երեք ասկյարների, իսկ վերջինը ուղղեց իր քունքին[37]...

Գրեթե 12 օրվա հերոսական պաշտպանությունից հետո, ընկավ Ասկերանը: Թուրք հեծյալները իրենց հատուկ փոքրոգությամբ եւ դաժանությամբ կտրեցին զոհված հերոսի գլուխը եւ նիզակի ծայրն առնելով՝ տարան Շուշի:



Հատված ամրոցի ձախակողմյան համակառույցից (առաջին պլանում՝ թուրքական ջախջախված ռազմական ինքնաթիռի բեկորները):

Ազատամարտը շարունակվում է, իսկ Ասկերանի ամրոցն այսօր էլ չի կորցրել իր վաղեմի դերն ու նշանակությունը:

...Հարթավայրից դեպի Շուշի՝ Արցախական աշխարհի հոգեւոր-մշակութային կենտրոն տանող ճամփուղին ներկալող ամրոց-հենակետի անսովոր ու հանդուգն հատակագծային կազմությունը եզակի երեւույթ է ամրաշինության պատմության մեջ առհասարակ: Գետանցումն ապահովող ջլատված հանգույցների միակցումը, հնարավոր ներխուժումների դեպքում հակառակորդին մոլորեցնելու, տարանջատելու, խուսանավելու հնարանքների կառուցվածքային լուծումները մեծաշնորհ դարձան Ասկերանի ամրոցի համար, որը քանիցս ցուցվեց նվաճողների դեմ հարկադրված պաշտպանամարտերում:

Ամրոցը կառուցված է սովորական անտաշ քարերով ու կրաշաղախով: Որոշ հատվածներում (հատկապես ներսի, ինչպես նաեւ

37 Նույն տեղում, էջ 24:



հարավ-արեւելյան շինություններում) օգտագործված են գետաքարեր: Քարերը դասավորված են ուղիղ, հորիզոնական շարվածքով, ընդ որում, պատերի մեջ առանձին հատվածներում ամրացման նպատակով օգտագործվել են փայտե կապեր: Ամրոցապատերն ունեն 1.3-ից 3մ եւ ավելի հաստություն: Դռների վրա կամարները կիսաշրջան են: Աշտարակների հարկաբաժինների թաղերը ներքուստ կոնաձեւ են: Թաղերի կենտրոնից բացված անցքերը (30-90սմ լայնությամբ) նպատակամղված են լուսավորության, զինամթերքի մատակարարման, ինչպես նաեւ՝ պաշտպանների տեղաշարժերի համար: Ամրոցն ունի բազմաթիվ հրակնատներ, որոնք առանձին հատվածներում բաժանված են երկու մասերի:

Ասկերանի ամրոցը կազմված է երկու բաժանմունք - համալիրներից. ձախակողմյան՝ հյուսիս - արեւմտյան եւ




Ամրոցի ձախակողմյան մասի ընդհանուր հատակագիծը

աջակողմյան՝ հարավ-արեւելյան: Ամրոցի ձախակողմյան համակառույցն ունի ավելի քան 140մ երկարություն (տե՛ս գծապատկերային չափագրությունը), որի լայնությունը վերնամասում 15 մետր է, ստորին մասում՝ 73մ: Այս համալիրն իր հերթին կազմված է երկու կից բաժանմունքներից (վերին եւ ներքին), յուրաքանչյուրը՝ չորսական աշտարակով: Վերին (հյուսիսային) բաժանմունքը կառուցված է համեմատաբար հարթ տարածքի վրա եւ զբաղեցնում է շուրջ 363քառ.մ տարածություն: Այն կանխամտածված ու կառուցված է այնպես, որ հնարավոր լինի պաշտպանվել անգամ ստորին բաժանմունքը գրավելուց


Ամրոցի ձախակողմյան բաժանմունքի ընդհանուր տեսքը հարավից

հետո: Ահա թե ինչու Բ եւ Գ աշտարակներից մուտքերը բացվում են միայն դեպի վերին բաժանմունքը, իսկ նշված աշտարակներից եւ դրանց միակցող ամրոցապատի ներքնամասերից բացվող նեղլիկ հրակնատները ուղղված են դեպի ներքին (հարավային) բաժանմունք:


Ամրոցի ձախակողմյան բաժանմունքը հարավ - արեւելքից


Միջնաբերդի (ձախակողմյան հատված) տեսքը ներսից



Հատակագծային ուրույն լուծումով ամրոցի վերին բաժանմունքը միջնաբերդն է՝ ներփակված չորս նույնատիպ աշտարակներով եւ ամրոցապատերով: Դրանցից առաջինը՝ Ա աշտարակն ունի 8մ բարձրություն: Եռահարկ է, յուրաքանչյուր հարկում մեկական մուտք՝ արեւելյան կողմից: Առաջին հարկում (մուտքի չափերը՝ 2x1.5-2մ) կան


Ձախակողմյան հատվածի Ա, Դ աշտարակների տեսքը հյուսիսից


Բ, Ե աշտարակների եւ ամրոցապատի տեսքը հյուսիս - արեւմուտքից

թվով 6 հրակնատներ՝ կառուցված ծնկաչոք վիճակում հրաձգություններ կատարելու համար: Երկրորդ հարկի հրակնատները հինգն են: Վերջին, երրորդ հարկը համեմատաբար փոքր բարձրություն ունի (1.7մ)՝ 7 հրակնատներով: Այստեղ, ինչպես նաեւ երկրորդ հարկերի հրակնատները


*Ամրոցի ընդհանուր տեսքը հյուսիսից*



Ձախակողմյան համակառույցի Է աշտա-րակի ընդհանուր տեսքը արեւմուտքից



Հատված ձախակողմյան համակառույցի ներքին բաժանմունքից



կառուցված են պառկած վիճակում հրաձգությունների համար: Սենյակներն ունեն 3.3-3.5մ լայնություն:

Բ աշտարակը (բարձրությունը՝ 8.5-9.8մ) նույնպես եռահարկ է, յուրաքանչյուր բաժանմունքում մեկական (հյուսիս-արեւելյան կողմից բացվող) մուտք: Այստեղ նույնպես կան բազմաթիվ հրակնատներ՝ ուղղված դեպի հարավ, արեւելք եւ արեւմուտք, ընդ որում, ինչպես մյուս



Ամրոցի ձախակողմյան հատվածի Ը, Է աշտարակների եւ ամրոցապատի տեսքը արեւելքից



Հատված ամրոցի ձախակողմյան բաժանմունքից



Չախակողմյան հատվածի Ե աշտարակի ընդհանուր տեսքը հարավ – արեւմուտքից

ամրոց-աշտարակներում, առաջին հարկի հրակնատները հարմարեցված են ծնկաչոք հրաձգությունների համար: Ավելացնենք, որ ընդհանրապես հազվադեպ են կրակակետեր բացվում առաջին հարկից, որը պատահական չէ. թշնամին կարող է հարմար առիթն օգտագործելով՝ օգտվել դրանցից եւ ամրոցի պաշտպաններին կորուստներ պատճառել:



Ա աշտարակից Բ ամրոցապատի երկարությունը 25մ է, պատի հաստությունը՝ 1.35, բարձրությունը՝ 6.2մ: Այս հատվածում, աշտարակից քիչ հարավ, դեպի արեւմուտք ուղղությամբ բացվում է մուտք (չափերը՝ 3.4x1.2մ), որը, կարծում եմ, հետագա միջամտության արդյունք է, քանի որ չի համապատասխանում միջնաբերդի ռազմապաշտպանական նպատակներին: Ամրոցապատից բացված են երկշարք հրակնատներ:

Գ աշտարակի բարձրությունը 7.5-8մ է: Նույնատիպ, եռահարկ շինություն է երրորդ հարկը՝ հիմնականում ավերված: Մուտքերը նույնպես երեքն են, որոնք բացվում են հյուսիս-արեւմուտք ուղղությամբ: Հրակնատներն ուղղված են հյուսիս, արեւելք եւ հարավ ուղղություններով, ինչպես նաեւ դեպի ստորին բաժանմունքը: Բ աշտարակից Գ աշտարակ տանող ամրոցապատի երկարությունը 14.9մ է, բարձրությունը՝ 5.6մ, պատի հաստությունը՝ 1.5մ: Պարսպապատի կենտրոնից բացվում է 3.4x2.5մ չափերի մուտք, որի աջ ու ձախ թեւերում կան հրակնատներ՝ ուղղված դեպի ներքին, ընդարձակ բաժանմունքը: Բացի այդ, նույն պարսպապատի մեջ (ստորին բաժանմունքի կողմից) ամրացված են քարե ելուստներ, որոնք կարող են օժանդակ անցումների դեր կատարել:

Դ աշտարակն ունի 7.5մ բարձրություն: Մուտքերը (3 հատ) նույնատիպ են, բացվում են հարավ-արեւմուտք ուղղությամբ: Աշտարակից դեպի արեւելք, արեւմուտք եւ հյուսիս ուղղված են բազմաթիվ հրակնատներ: Գ աշտարակից դեպի Դ աշտարակ ձգվող պարսպապատի երկարությունը 24.9մ է, բարձրությունը՝ 6.4մ, իսկ պատի հաստությունը՝ 1.32մ: Դ աշտարակից քիչ ներքեւ բացվող մուտքը (ինչպես Ա-ից Բ աշտարակ տանող ամրոցապատի նշված մուտքը) չի համապատասխանում ռազ-մապաշտպանական նախամտքին եւ նորովի միջամտության հետեւանք է: Փաստորեն, այս երկու մուտքերը, ինչպես նաեւ այլեւայլ նպատակներով կատարված կցակառույցներն ու հավելումները խեղաթյուրել են միջնաբերդի նախնական հատակակերպը: Դ աշտարակից Ա աշտարակ տանող պատի երկարությունը 14.3մ է, լայնությունը՝ 1.4մ:Այս պարսպապատի կենտրոնից (դեպի հյուսիս ուղղությամբ) ամենայն հավանականությամբ բացվում էր մուտք, որն այժմ չի պահպանվում:

Ստորին (հարավային) բաժանմունքը (մոտ 0.36հա, տեղադրված թեքության վրա) նույնպես ներառում է չորս աշտարակ:

Ը աշտարակը երկհարկ է՝ հենապատով: Առաջին եւ երկրորդ հարկերում, դեպի հյուսիս, հարավ եւ արեւելք ուղղված են 95սմ միջին լայնությամբ հրակնատներ (պատի հաստությունը 2.4-2.7մետր է): Մուտքերը բացվում են հյուսիս-արեւմտյան կողմից:

Է աշտարակը եռահարկ է, առաջին հարկում՝ ցածրիկ քարով: Մուտքերը բացվում են հյուսիս–արեւելյան կողմից: Առաջին հարկից երկրորդ հարկ կարելի է անցնել քարի կենտրոնից բացված 90սմ լայնությամբ

անցքով: Պատի հաստությունը 2 մետրից ավելի է, հարկաբաժնի (սենյակի) միջին լայնությունը՝ 3.6մ: Աշտարակի բարձրությունը 7.5մ է:

Է եւ Ը աշտարակները իրար են միանում շուրջ 73 մետր երկարությամբ պարսպապատով, որի վերնամասում, դեպի Կարկառ գետը ուղղված են մեկ տասնյակից ավելի հրակնատներ: Է եւ Ը աշտարակների 2 մետր հաստությամբ ամրոցապատերը ձգվում են դեպի հյուսիս, միանում Ե եւ Զ աշտարակներին համապատասխանաբար 59 եւ 54 մետր երկարությամբ: Այժմ Ստեփանակերտ տանող ճանապարհահատվածում պարսպապատերը 17մ երկարությամբ քանդված են: «Նորագույն ժամանակներում շինարարները ստիպված էին ճեղք բացել ամրոցից՝ Շուշի տանող ճանապարհի համար»[38]:

Ե եւ Զ նույնատիպ աշտարակները բաղկացած են երեքական հարկերից: Առաջին հարկերը (ինչպես գրեթե բոլոր աշտարակներում) մութ են, լուսավորվում են մուտքերից եւ քարերի կենտրոնից բացված անցքերից: Աշտարակները եւ դրանք միացնող պարսպապատերը (Ե աշտարակից Բ՝ 35մ, Զ-ից Գ՝ 22.5մ) օղակված են բազմաթիվ կրակակետերով, որոնց մեծ մասը այժմ չի պահպանվում:

Աջակողմյան գլխավոր ամրոց-համալիրը (տե՛ս երկրորդ գծապատկերային չափագրությունը) ձգվում է շուրջ 220 մետր երկարությամբ: Բաղկացած է աշտարակներից, դրանք միացնող զույգ պարսպապատերից, պաշտպանական այլ շինություններից: Ի դեպ, համալիրը ուշադրության է արժանանում հատկապես զույգ պարսպապատերով, որոնք նախատեսված են զորամիավորումների աննկատելի տեղաշարժերի համար: Ամրոցի պաշտպանները նախ մտել են Ա կառույցը, որտեղ նախապատրաստական որոշ աշխատանքներ կատարելուց հետո (ներսից) անցել են Բ ընդարձակ շինությունը, որը զինվորների գլխավոր հավաքատեղին էր (զորանոցը): Այստեղից (պարսպապատերի միջով, որոնք նախկինում ծածկված էին քարակապ ծածկով) զորամիավորումները բարձրացել են վեր, ամրացել աշտարակներում եւ բարձունքում տեղադրված ռազմապաշտպանական գլխավոր շինություններում:

Ա եւ Բ կից ամրոց-շինությունները տեղադրված են համալիրի ստորին ծայրամասում: Ա շինությունն (ներքուստ կիսակլոր քարով) ունի ուղղանկյուն հատակագիծ (չափերը 7.5 x 4.6մ՝ ներսից), կառուցված է կրաշաղախով (նկատվում են հետագա նորոգման հետքեր): Պատի հաստությունը 1.7մ է: Տանիքը (երկրորդ կիսահարկը իր հրակնատներով) գտնվում է կիսավեր վիճակում, իսկ հյուսիսային պատը ամբողջովին

38 В.Потто, Утверждение русского владычества на Кавказе, Т.1, Тифлис,1901, էջ 202:






Ամրոցի աջակողմյան գլխավոր համալիրի չափագրությունը

փլված է: Շինության ներսում կան 4 փոքր չափերի (90x60սմ) խորաններ: Մուտքը հարավային կողմից է (2x3.3մ չափերի): Ներքուստ (արեւելյան կողմից) մեկ այլ մուտք (չափերը՝ 2x1.8մ) տանում է վերոհիշյալ Բ շինությունը, որն ունի 35մ երկարություն եւ 18-24մ լայնություն: Պատերի հաստությունը 2.1մ է: Դրանք պահպանվում են 5մ միջին բարձրությամբ: Պարսպապատերը որոշ հատվածներում ավերված են:

Բ զորանոցից անցուղին ձգվում է վեր (դեպի հարավ)50 մետր երկարությամբ (ջրանցքի հատվածում այն քանդված է) միանում կիսակլոր, ուղղանկյունաձեւ կառուցվածքով երկհարկանի Գ աշտարակին: Զույգ պարիսպների միջեւ լայնությունը (գաղտնուղին) 1.25մ է, պարիսպներից



Ամրոցի երկու բաժանմունքների ընդհանուր տեսքը հարավից





Աջակողմյան հատվածի է աշտարակի ընդհանուր տեսքը հարավ – արեւմուտքից

յուրաքանչյուրի հաստությունը 90-95սմ: Այժմ այս հատվածում պարսպապատը պահպանվում է 4մ միջին բարձրությամբ:

Գաղտնուղին Գ աշտարակից (այն տարբեր կողմերն ուղղված վեց հրակնատներ ունի) դուրս գալով, 53մ երկարությամբ շարունակվում է դեպի Դ, կլոր հատակագծով երկհարկ աշտարակի կիսակլոր ցածրիկ մուտքով մութ ներքնահարկը, հակառակ կողմից դուրս գալիս:

Դ աշտարակի երկրորդ հարկի դեմ-դիմաց երկու մուտքերն ունեն 1.5-1.7մ բարձրություն, 1մ լայնություն: Աշտարակի պատի հաստությունը հյուսիսից՝ 2, հարավից՝ 1.6մ է (հրակնատներով՝ 2.2մ): Բուն ամրոց-աշտարակի բարձրությունը 7մ է: Վերնամասում պահպանվող անցքերը վկայում են, որ նախկինում տանիքը ծածկված է եղել փայտե գերաններով, որոնք միաժամանակ աշտարակին ամրություն էին տալիս:

Դ աշտարակից գաղտնուղի-պարսպապատը հարավային կողմից (նկուղային հարկից) դուրս գալով, շուրջ 53մ երկարությամբ բարձրանում է վեր՝ կոնաձեւ բարձունքը եւ միանում Ե-Ը ամրություններին (միջնաբերդին): Ընդ որում, վերջնամասում անցուղին (75-80սմ լայնությամբ) ընթանում է աստիճաններով (այստեղ պարսպի հաստությունը 2.8մ է):

Ե – Ը պաշտպանական ամրությունները մի ամրակուռ համակարգ են, բաղկացած մի շարք շինություններից: Համակարգի հարավային



Աջակողմյան հատվածի (գաղտնուղիի) ընդհանուր տեսքը հարավից

եզրամասը զբաղեցնում են Ե, Զ ամրությունները (չափերը՝ 13x6.4մ և 11.6x10.1մ), որոնք գրեթե ավերված են: Պահպանվում են Զ շինության հյուսիսային, մասամբ արևելյան պատերը (6.5 բարձրությամբ)՝ հրակնատներով: Այս շինությունները բաժանող պատի հաստությունը 1.4մ



է, քանդված պարսպապատի հաստությունը (հարավային կողմից)՝ 3.4մ:

Նշված կառույցներին սերտորեն միահյուսված է կլոր հատակագծով երկհարկ աշտարակը, որի երկու, գրեթե համաչափ մուտքերը հարավ-արևելյան կողմից են (առաջինն ունի 1.5x1.06, երկրորդը՝ 1.5x0.8մ չափերը):

Աշտարակի բարձրությունը արևմտյան կողմից՝ 8, հարավային և հարավ-արևելյան կողմերից 5.2 և 7.6 մետր է: Ներքուստ աշտարակն ունի 4.9 մ բարձրություն (հողածածկ է): Ներքնահարկի տանիքը հիմնականում



Հատված աջակողմյան բաժանմունքից



Աջակողմյան հատվածի Է աշտարակի տեսքը ներքուստ

փլված է (այն պահպանվում է 2.2մ բարձրությամբ եւ 2.8մ լայնությամբ): Հրակնատներ կան միայն երկրորդ հարկում: Այստեղից մի փոքրիկ մուտք (1x0.6մ) տանում է դեպի արեւելյան կողմից աշտարակին կից Ը ուղղանկյուն հատակագծով երկհարկ շինությունը (չափերը՝ 8x2.6մ), որի բարձրությունը 6.5մ է: Առաջին հարկը (7.7x1.9-6.8մ չափերի) ներքուստ, հյուսիսային կողմից ունի խորան (0.6x0.57մ), որից արեւելք՝ անցք (0.27x0.25մ չափերի), որը 2.8մ բարձրությամբ տանում է երկրորդ հարկը: Անցքը նախատեսված է երկրորդ հարկ զինամթերք տեղափոխելու համար:



Ամրոցի աջակողմյան հատվածի Ը շինության տեսքը արեւելքից



Ը շինությունն ունի առաջին հարկից բացվող երկու մուտք: Հարավային կողմից բացվող կրկնակի մուտք, որը տանում է դեպի Ե ամրությունը (չափերը՝ 2.2x1.3մ) եւ արեւելյան կողմից (2.3x1.1մ չափերի): Ընդ որում, արեւելյան մուտքից աջ (դրսից) պահպանվում է մի անցք, որը մոտ 3մ երկարությամբ տանում է շինության ներսը: Ըստ էության, անցքի տեղում նախկինում գերան էր տեղադրված, որը կարելի էր օգտագործել ազդանշանի համար՝ փայտի հարվածի արձագանքով:

Ավելացնենք, որ ամրոցի գրեթե բոլոր մուտքերը նախկինում փակվել են փայտե ամուր դարպասներով ու գերաններով, եւ, գուցե թե, նաեւ մետաղական միակտոր քարե դռներով:



Ե – Ը ամրությունների ընդհանուր տեսքը պարսպապատից

# Տիգրանակերտ

Արցախ եւ Ուտիք նահանգների սահմանագլխին, Արցախի Մեծառանք (Խաչեն) գավառի տարածքում, ներկայիս Աղդամ քաղաքից 8կմ հյուսիս-արեւմուտք, գտնվում է թուրքերի եւ պարսից կողմից Թառնագյուտ կամ Թառնակերտ կոչվող բնակատեղին, որին հայերը Թնգրնակերտ կամ Տկռակերտ անունն էին տալիս[1]: Բնակատեղիի անվանումը, ինչպես նաեւ պատմական աղբյուրների տեղեկությունները վկայում են, որ Թառնագյուտ-Թնգրնակերտը պատմական Տիգրանակերտն է (ներկայիս Շահբուլաղը):



Ամրոցի ընդհանուր տեսքը հյուսիս-արեւելքից

Պատմական Հայաստանի տարածքում կան մի շարք քաղաքներ ու ավաններ, որոնք կրում են Տիգրանակերտ ընդհանրական անունը: Դրանց մեջ ամենանշանավորը Տիգրան Մեծի (մ.թ.ա. 95-55թթ.) հիմնադրած Տիգրանակերտ հռչակավոր մայրաքաղաքն էր (Աղձնիք նահանգում):

Տիգրան Մեծի համբավը, ինչպես նաեւ այն հանգամանքը, որ Տիգրանակերտների մի մասը հիմնադրվել է նրա կողմից, առանձին ուսումնասիրողների հիմք է տվել ենթադրելու, որ գոյություն ունեցող

1 Ջալալեանց, Ճանապարհորդութիւն ի մեծն Հայաստան, Բ,Տփխիս, 1858, էջ 344, Մ.Բարխուտարեանց, Արցախ էջ 28:



Տիգրանակերտ անվամբ բոլոր բնակավայրերն էլ հիմնադրել է Տիգրան Մեծը:



Ամրոցի մուտքը

Անդրադառնալով Արցախի Տիգրանակերտին, Բ.Ուլուբաբյանը գրում է. «... Տիգրան Մեծն այստեղ է կառուցել իր մեծազոր տերության Տիգրանակերտ կոչվող չորս մայրաքաղաքներից մեկը»[2]: Տիգրանակերտի կառուցումը Տիգրան Մեծի անվան հետ են կապում նաեւ այլ ուսումնասիրողներ[3]: Սակայն, աղբյուրների պատմա - համեմատական ուսումնասիրությունը ցույց է տվել, որ մասնավորապես այս Տիգրանակերտը կառուցվել է դեռեւս Տիգրան Մեծից շատ առաջ՝ նշանավոր Տիգրան Երվանդյանի (մ.թ.ա. VI դար)[4] իշխանության ժամանակաշրջանում: Մովսես Խորենացին հաղորդում է, որ մարական Աժդահակ թագավորը կնության է վերցնում Տիգրան Երվանդյանի քույր Տիգրանուհուն, որպեսզի դավի հայոց արքայի դեմ: Նա ձգտում էր դավադրության մեջ ներքաշել Տիգրանուհուն, որը

2 Բ.Ուլուբաբյան, Արցախի պատմությունը, Երեւան, 1994, էջ 15:

3 Լեո, Երկերի ժողովածու, հ.8, Երեւան, 1985, էջ 539 (ծանոթագրություններ), Հ.Խաչատրյան, Ղարաբաղում գտնված հին դրամի մասին, «Սովետական Ղարաբաղ», 28 մարտի, 1965, Զ.Բալայան, Դժոխք եւ դրախտ, Երեւան, 1995, էջ 401, Բ. Կարապետյան, Շուշի բերդաքաղաքը, Երեւան, 2000, էջ 102: Շ.Մկրտչյան, Արցախ, Երեւան, 1991, էջ 11, նույնի Историко-архитектурные памятники Нагорного Карабаха, Ереван, 1988, էջ 64, Б.Баратов, Ангел Арцаха, Памятники армянского исскусства Нагорного Карабаха, Москва, 1992, էջ 32-35 եւ այլն: Հարկ է նշել, որ բավականին բարձր որակով տպագրված Բարաթովի նշված գրքում հուշարձանների վերաբերյալ գրեթե նորություն չկա: Օգտագործված հիմնական աղբյուրը Շ.Մկրտչյանի վերոհիշյալ, ռուսերեն հրատարակված գիրքն է եղել, որից էլ հեղինակը առատորեն օգտվել-արտագրել է՝ չնշելով աղբյուրը:

4 Հայ ժողովրդի պատմության քրեստոմատիա, Երեւան, 1981, էջ 148:

հասկանալով ամուսնու նենգությունը, առերես համաձայնվում է, սակայն, մտերիմների միջոցով եղբորը տեղեկացնում է պատրաստվող դավադրության մասին: Տիգրանը զգուշանում է, իսկ հետո մեծ բանակով, որի մեջ էին վրաց, աղվանից եւ կապադովկացվոց զորամասերը, արշավում է մարերի դեմ, վճռական ճակատամարտում սպանում Աժդահակին եւ հաղթանակ տանում[5]: Պատերազմից հետո Տիգրան Երվանդյանը «իր քույր Տիգրանուհուն մեծ բազմությամբ ուղարկում է թագավորավայել կերպով Տիգրանակերտ ավանը, որը Տիգրանը շինեց իր անունով, եւ այն գավառները հրամայում է նրա ծառայության մեջ դնել»[6]:


Ամրոցի արեւելյան աշտարակներից

Այսպիսով, Մովսես Խորենացին Տիգրանակերտի կառուցումը վերագրում է Տիգրան Երվանդյանին, փաստ, որը սակայն ժխտվում է հիշյալ ուսումնասիրողների կողմից, անուշադրության մատնելով նաեւ այն իրողությունը, որ Տիգրան Երվանդյանի կառուցածը քաղաք էլ չի եղել, այլ ավան եւ որ այն չէր կարող վերաբերվել Տիգրան Մեծի մայրաքաղաքին: Ի դեպ , հարկ է նշել, որ Խորենացու նախօրինակում (Թիֆլիս, 1913, էջ 84) Տիգրանակերտը ներկայացված է որպես ավան, որը Ստ. Մալխասյանցը թարգմանել դարձրել է քաղաք[7], ինչ-որ չափով ապակողմնորոշելով ուսումնասիրողներին: Քննելով այս հարցը, ուսումնասիրողներից միայն Բ.

5 Մ.Խորենացի, Հայոց պատմություն, Երեւան, 1981, էջ 137-138:
6 Նույն տեղում, էջ 139:
7 Նույն տեղում, էջ 335, ծանոթագրություններ:



Հարությունյանն է Տիգրանակերտի կառուցումը վերագրում Տիգրան Երվանդյանին. «Պատմական սկզբնաղբյուրների քննությունը ցույց է տալիս, որ նրանցից երկուսը, որոնք գտնվել են Հայոց Արեւելից կողմերում՝ Արցախ եւ Ուտիք աշխարհների սահմանակցության շրջանում, հիմնադրվել են Հայոց Տիգրան Երվանդյան թագավորի կողմից»[8]:

Տիգրանակերտ ավանի հիշատակությունը հայ մատենագրության մեջ եզակի չէ: Նրա մասին արժեքավոր տեղեկություններ են հաղորդում նաեւ Սեբեոսն ու Մ.Կաղանկատվացին: Առաջինի վկայությամբ, բյուզանդական Հերակլ կայսրը իր նշանավոր պարսկական արշավանքների ընթացքում (623-624թթ.) հասնում է Փայտակարան, մտնում Ուտիք, գրավում Պարտավ մայրաքաղաքը, իսկ հետո փորձում անցնել Վրաստան: Պարսից Խոսրով թագավորի հրամանով Շահրվարազ զորավարը մեծ բանակով Այրարատի վրայով անցնում է Գարդման, բանակում Մյուս Տիգրանակերտի մոտ, որը գտնվում է Շամքոր գետի աջ ափին, Բարում եւ Բարսում գյուղերի միջեւ, «Տկռուկի աղբյուր» վայրում (ներկայիս «Տկռակես» գյուղատեղի)՝ փակելով Հերակլի ճանապարհը դեպի Վիրք: Պարսկական մի ուրիշ զորաջոկատ՝ Շահենի գլխավորությամբ,-հետապնդելով Հերակլին, բանակ է դնում նրա թիկունքում՝ Տիգրանակերտ ավանում (Շահբուլաղ)[9]: Այդ ժամանակ (624-ի գարնանը) Հերակլը Մ.Կաղանկատվացու վկայությամբ, գտնվում էր Կաղանկատույք գյուղի մոտ (ներկայիս Միրբաշիր)[10]: Ընկնելով շրջափակման մեջ, Հերակլը սրընթաց գրոհով հարձակվում է Շահենի զորքերի վրա, ջարդում ու ցրում՝ իր համար ճանապարհ բացելով Շուշի-Գորիս ուղղությամբ՝ Սյունիք[11]:

Տիգրանակերտը հիշատակվում է նաեւ Հայոց Եղիա կաթողիկոսի հրավիրած ժողովի կապակցությամբ (699թ., հուլիս), որին մասնակցում էր նաեւ «Տկռակերտի Պետրոս վանականը»[12]: Բացի այդ, հայտնի է, որ Տիգրանակերտը եղել է Համամ Բարեպաշտի կենտրոնավայրերից մեկը՝ IX դարի վերջերին: 887թ.[13] Արցախի Համամ իշխանը վերականգնեց Աղվանքի կործանված թագավորությունը (մայրաքաղաքը՝ Պարտավ), որի փաստացի իշխանությունը, սակայն, տարածվում էր հիմնականում Մեծառանք, Ուտի առանձնակ եւ Առանռոտ գավառների վրա, նկատի ունենալով պատմական

8 Ազդակ, N 60, 25-ը մայիսի, 1994, էջ 4:
9 Պատմութիւն Սեբէոսի, Երեւան, 1979, էջ 125 կամ Պատմութիւն Սեբէոսի եպիսկոպոսի ի Հերակլն, ՍՊԲ, 1879, էջ 92:
10 Մ.Կաղանկատվացի, Պատմություն Աղվանից աշխարհի, Երեւան, 1969,էջ 101:
11 Հ.Մանանդյան, Քննական տեսություն Հայ ժողովրդի պատմության, հ. Բ, Երեւան, 1960,էջ 152, Ղ.Ալիշան, Արցախ,Երեւան, 1993, էջ 95-96:
12 Մ.Կաղանկատվացի, էջ 233, Ղ.Ալիշան, Արցախ, էջ 95:
13 Մ.Կաղանկատվացի, էջ 262:

Ամրոցի հարավ-արեւմտյան պարսպապատի եւ աշտարակների ընդհանուր տեսքը



հավաստի տեղեկություններն ու տեղագրական քննությունը: Այսպես, Համամի եկեղեցին գտնվել է ներկայիս Գառնաքար գյուղից մոտ 2 կմ արեւմուտք, իսկ նրա թողած արձանագրությունը՝ Աղդամի շրջանի Ոսֆուլու գյուղում (Տիգրանակերտի մոտ)[14]:

Սրանք են եղած ամենավաղ վկայությունները: Իսկ ինչ են գրում հետագա ուսումնասիրողները:

Ս.Ջալալյանց. «Աւերակ է սա մեծի քաղաքի ի վերին ծայր Ուտի նահանգի ի կողմն հարաւոյ, ուր սպառին ագխաղեալ լերինք Արցախու: ...Դեռեւս երեւին աւերակք, որպիսիք են տնատեղիք, շուկայք, բաղանիք եւ այլն: Ի ստորոտէ լերինս ելանէ յորդաբուղխ աղբիւր, որ կարէ դարձուցանել զջրաղացս... ի գագաթ լերին է աւերակ մենաստանի, զորմէ աւանդեն գոլ առաջնորդարան այսր նահանգի: Զքաղաքս զայս շինեաց, ինձ թուի՝ Տիգրան առաջին»[15]:

Մ. Բարխուտարյանց.«... Հարկ է հայտնել, որ ընդարձակ գիւղաքաղաք եղած է այս եւ երբեմն առաջնորդանիստ եւ գաւառագլուխ. տակաւին մնում է ընդարձակ եկեղեցու աւերակն, շուկայի եւ տների եւ բաղանիսների կիսաւեր քարուկիր շինությունները եւ այլն: Աւերակիս ստորոտում է Շահ-բուլաղ մեծ աղբիւրն, իսկ վերի ծայրումն՝ հանգստարանն: Իսկ աւերակիցս վերեւ է Վանքասարն եւ Հովուի սարն... Աւերակիս մոտ է եւ մի

14 Ս.Բարխուդարյան, Տապանագիր Համամ իշխանի անունով,- ՀՍՍՀ ԳԱ տեղեկագիր, 1964, N1, էջ 61-63:

15 Ջալալեանց, նշվ. աշխ., էջ 344:



նոր բերդակ, որ շինուած է ամբողջապես սրբատաշ քարով եւ կոչվում է Թառնագիտի կամ Շահբուլաղի բերդ»[16]:

Լեո. «Սարը, որ ծնում է այս աղբյուրը, օձերին է պատկանում: Կոչվում է Իլան-դաղ... Այստեղ է, ասում են, ապրում օձերի թագավորը... օձերի սարսափն է, որ տիրում է այստեղ... օձային շունչ է ամեն տեղ... հին բերդը... կանգնած է աղբյուրի մոտ, թումբի գլխին... Ասում են, թե այստեղ է եղել Տիգրանակերտը»[17]:

Առանձին ուսումնասիրողներ հակված են այն կարծիքին, որ ներկայիս ամրոցը կառուցել է Նադիր Շահը (1736-1747թթ.), այստեղից էլ՝ Շահբուլաղ, որից հետո ռուսները նորոգել, դարձրել են զորանոց[18]: Իսկ Միրզա Ջամալը, Միրզա Ադիգյոզալ-բեկը, մեր օրերում՝ Է. Ավալովը եւ ուրիշներ, ամրոցը՝ շրջակա շինություններով համարում են Փանահ խանի «ստեղծագործությունը»[19]: Սակայն, ուսումնասիրությունները ցույց են տվել, որ այն թեեւ ուշ շրջանի՝ մասնավորապես XVIIIդ. առաջին կեսի կառույց է, բայց գոյություն ուներ մինչեւ Փանահ խանը: Վերջինս, որ հաստատվել էր այստեղ, Լեռնային Ղարաբաղի վրա դեռեւս ոչ մի իշխանություն չուներ: Մի կողմ դնելով խանի եւ շահի միջեւ եղած տարբերությունները, նշեմ, որ նա հաստատվել էր մի վայրում, որն իր ժամանակ էլ Շահբուլաղ էր կոչվում: Ընդ որում, լքելով անապահով Բայաթ ամրոցը (Աղդամից 17կմ հարավ-արեւելք), Փանահ խանը այստեղ է տեղափոխվել 1752թ.[20], նույն տարում էլ Մելիք Շահնազարի օգնությամբ հաստատվել է Շուշիում[21]: Ե՞րբ հասցրեց այդ ինքնակոչը ամրոց կառուցել (շրջակա շինություններով հանդերձ), այն էլ՝ սրբատաշ քարերով: Իհարկե, չի բացառվում, որ ամրոցը

16 Մ.Բարխուտարեանց, Արցախ, էջ 28:

17 Լեո, հ.8, էջ 141-143:

18 Տե՛ս Обозрение российских владений за Кавказом, ч.3, СПБ,1836, էջ 302, Ղ.Ալիշան, Արցախ, էջ 93: Ալիշանը միաժամանակ չի ժխտում պատմական Տիգրանակերտի առկայությունն այս վայրում (նույն տեղում, էջ 95): Ինչպես պարզվում է այս վկայություններից, XIX դարում այստեղ հետազոտություններ են կատարել Ֆրեդերիկ Դյուբոսը (Ֆրանսիա) եւ ճանապարհորդ Հելվեցիացին:

19 Мирза Джамал Джеваншир, История Карабага, Баку, 1959, էջ 70, 101, Мирза-Адигезал-Бек, Карабаг-Наме, Баку,1950, էջ 55, Э.Авалов, Архитектура города Шуши, Баку, 1977, էջ 10: Նշված առաջին երկու գրքերում (հրատարակչի ծանոթագրության մեջ), Տիգրանակերտը սխալմամբ (թե՞ գիտակցաբար) տեղադրվել է Թարթառի միջին հոսանքում: Ի դեպ, ամրոցի կառուցումը Փանահ խանին է վերագրում նաեւ Եղիշե Գեղամյանց քահանան (տե՛ս «Մեղու Հայաստանի», 1885, N 64), որը սակայն այլ նյութերով չի հիմնավորվում եւ ինչպես կտեսնենք, հեռու է իրականությունից:

20 Ахмед -Бек Джеваншир, О политическом существовании Карабагского ханства, Шуши , 1901, էջ14:

21 Բ.Ուլուբաբյան, Արցախի պատմությունը, էջ 152:

Նադիր Շահի ժամանակներին վերաբերվի, բայց որ այստեղ տիրում է ոչ թե մուսուլմանական, այլ տվյալ ժամանակաշրջանին բնորոշ ռազմապաշտպանական շինությունների կառուցողական ոճն ու ճարտարապետությունը՝ փաստ է (հմմտ. Ասկերան, Շուշի եւ այլն): Մի բան պարզ է նաեւ, որ կառուցողները հայեր են եղել, նկատի ունենալով ոչ միայն շինության ճարտարապետական հարդարանքը (օրինակ, մուտքերի, պատուհանների կամ որմնախորշերի կիսակլոր մանրամասները՝ ձեւավորված դեկորատիվ երիզվածքով), այլեւ այն հանգամանքը, որ ժամանակի ռազմա - քաղաքական դժնի պայմաններում, այստեղ հայեր էին բնակվում, որի մասին վկայում է նաեւ հենց ինքը՝ XVIIIդ. վերջի եւ XIXդ. սկզբների ժամանակագիր Միրզա Ջամալը. «... Խաչեն գավառի՝ այսինքն Շահբուլաղի մոտ տեղադրված Տարնակուտի բնակչությունը (հայերը- Ս.Ս.) Փանահ խանի նկատ-մամբ մշտական ատել-ության եւ թշնամանքի մեջ էր»[22]: Պատահական չէ նաեւ, որ ամրոցը մինչեւ վերջերս էլ կրում էր «Գյավուր ղալա» անունը[23], այսինքն՝ «Անհավատների բերդ»: Իսկ ինչ վերաբերում է


Հատված ամրոցից

22 Мирза Джамал, նշվ. աշխ. էջ 69:

23 Դիվան հայ վիմագրության, V, Երեւան, 1982, էջ 135: Սակայն, հարկ է նշել, որ ուսումնասիրողներից Ս.Կարապետյանը «Գյավուրղալա»-ն տեղադրում է Խաչենագետի ձախ ափին՝ նույնացնելով ներկայիս Բոյ-Ահմեդլի եւ Սոֆուլու գյուղերի միջեւ գտնվող քաղաքատեղիի հետ (տե՛ս ՀՀ, 17.02.98թ.):



Նադիր Շահին: Կարծում եմ, որ ամրոցի կառուցումը նրա անձի հետ կապ չունի: «Շահբուլաղ» տեղանվան առնչությունը ապացուցելի է նաեւ ավելի վաղ հիշատակվող ոմն Շահնշահի հետ, որը հիշատակագիր խաչքար է կանգնեցրել ամրոցին մերձակա եկեղեցու մոտ՝ հետեւյալ մակագրությամբ. «Ես,Աշոտի որդի Շահնշահս, իմ հոգու համար խաչ կանգնեցրի. ովքեր կկարդան, թող աղոթքների մեջ հիշեն ՉԺԲ (1263) թվին»[24]: Բացի այդ, հայտնի է, որ արցախյան բարբառում օգտագործվող «շահ» բառը մեծի, գլխավորի իմաստն է արտահայտում: Օրինակ, «շահ թութ», «շահ նուռ», եւ այլն, որը նկատի ունենալով, առանձին ուսումնասիրողներ տեղանունը ստուգաբանում են այդ իմաստով (այսինքն՝ «մեծ աղբյուր», «գլխավոր աղբյուր»):

Ելնելով տեղանունների մանրակրկիտ ուսումնասիրություններից, հանգել եմ այն համոզման, որ այս անվան մեջ տեղի է ունեցել սովորական դրափոխություն եւ որ «Շահբուլաղ»-ը նախապես եղել է «Հաշբուլաղ» («Խաշբուլաղ»)՝ ունենալով «սուրբ աղբյուր» նշանակությունը: Նույն կերպ, օրինակ, «Հաշդաղ»-ը դարձել է «Շահդաղ»:

Տիգրանակերտ-Շահբուլաղի դերը կարեւորվում է հատկապես XXդ. սկզբներին՝ ռուսական տիրապետության հաստատման դարաշրջանում: Այստեղ տեղի ունեցած արյունահեղ իրադարձությունների մասին արժեքավոր տեղեկություններ են հաղորդում հատկապես ռուսական աղբյուրները[25]: Միայն մի դրվագ. «1805թ. ամառն էր, ռուս-պարսկական պատերազմների եռուն ժամանակներից մեկը: Սկսվեց լուսաբացը: Քարե բարձր բլրի վրա երեւում էր ահեղ ամրոցը՝ շրջափակված ատամնավոր կլոր, վեց բուրգեր ունեցող բարձր, քարե պարիսպներով: Ամրոցի պարետը ոմն Իֆիալ-խանն էր, Աբբաս Միրզայի մոտիկ ազգականն ու մտերիմը, որի մոտ կային 150 հետիոտն զինվորներ. մոտակա անտառում կանգնած էին պահեստի զորամասեր: Այգաբացի մթնշաղում, մաքուր երկնքի վրա պարզ գծագրվում էր աշտարակից աշտարակ քայլող պահակների ստվերները, սակայն ամրոցի ներսում ամեն ինչ լուռ էր ու հանգիստ: Կայազորն այս կողմից հարձակման չսպասելով քնած էր առավոտյան խոր քնով: Դանդաղել, առավել եւս տատանվել չէր կարելի. զինվորները հրանոթները մոտեցրին դարպասներին

24 Ղ.Ալիշան, Արցախ, էջ 94, Լեո, Երկերի ժողովածու, հ.8, էջ 143: Այս արձանագրությունը տեղ է գտել նաեւ Հայաստանի պատմության պետական արխիվի նյութերում հետեւյալ ձեւով. «Ես Շահանշահ որդի Աշոտայ կանգնեցի զխաչս հոգոյ իմոց ով կարդէք յաղաւթս... ցեք թվին ՉԺԲ» (տե՛ս ՀՊՊԿԱ, ֆ.319, ց. 1, գ. 137):

25 Վ.Պոտտո, Ղարաբաղի առաջին կամավորները, Երեւան, 1974, էջ 18-23, 32-34, նույնի՝ Утверждение русского владычества на Кавказе, т. I, Тифлис, 1901, А.Дубровин, Закавказье от 1803-1806гг., СПБ,1866, История войны и владычества русских на Кавказе, СПБ, 1886, եւ այլն:

ու տվեցին կրակահերթ: Դարպասները փլվեցին ու զորախումբը բացվածքից ներս խուժեց ամրոցը: Սարսափը տիրեց պարսիկներին: Կայազորը դիմեց փախուստի, թողնելով տեղում երեսունից ավելի սպանվածների, որոնց թվում երկու խան: Սպանված էր նաեւ Իֆիալ-խանը, որի դիակը փախչողները թողել էին մեր ձեռքում: ...Դեռ երկու ժամ էլ չէր անցել, երբ ողջ պարսկական բանակը երեւաց Շահբուլաղի մոտերքում, իսկ հետո Աբբաս Միրզան փորձ արեց բաց ճակատամարտով նորից տիրել ամրոցին: Գրոհը ետ մղվեց, պարսիկները շրջապատելով Շահբուլաղը, սկսեցին ամուր պաշարումը»[26]:


Ամրոցի ընդհանուր տեսքը արեւելքից

Ամրոցն ունի քառակուսի հատակագիծ (արտաքին չափերը՝ 32,5 x 32,5): Պատերն ու աշտարակները դեպի վեր աստիճանաբար նեղանալով՝ ավարտվում են ատամնաշարով: Պատերի բարձրությունը մինչեւ 7 մետր է, աշտարակներինը՝ 8,5 մետր, որոնք իրենց ամբողջ երկայնքով կտրտված են նեղ հրակնատների հստակ պարբերականությամբ: Մուտքը (չափերը՝ 1,8 x 2,8մ) հարավային կողմից է, հիմնական կառույցին կից, ուղ-ղանկյուն հատակագծով աշտարակի կողքից: Վերջինս երկհարկ է, կազմված երկու նույնաչափ թաղակապ սենյակներից, որոնցից ներքնահարկը (4,7 x 4,8մ

26 Վ.Պոտտո, Ղարաբաղի առաջին կամավորները, էջ 19-20:



չափի), զուրկ լինելով որմնախորշերից կամ պատուհաններից, փաստորեն ամրոց տանող ուղղանկյուն թեքությամբ մուտքի դեր է կատարում: Երկրորդ հարկի սենյակն ունի 5,2 x 5,9մ չափերը: Պատի հաստությունը 1 մետր է: Ունի երկու պատուհան. հարավակողմինը՝ 0,96 x 1,5մ չափի, արեւմտյանը (բակի կողմից)՝ 1,05 x 1,5մ, որի կողքին, հյուսիսային կողմից՝ սենյակ տանող մուտքն է (1,7 x 2,6մ):


Հատված ամրոցից

Առաջին հարկում (ներքուստ, արեւելք - արեւմուտք ուղղությամբ) ամրոցն ունի 15,2 մետր երկարությամբ եւ գրեթե նույնքան էլ լայնությամբ ազատ տարածք, որը կազմում է 231 քառ.մետր: Սա ամրոցաբակն է, որի կենտրոնում ջրավազանը՝ շրջապատված տարբեր չափերի ու նշանակությամբ 6 ընդարձակ սենյակներով կամ զորանոցներով: Օրինակ, բակ տանող մուտքի ձախակողմյան (հարավ-արեւելյան եզրային) սենյակն ունի 2,3 x 7,7մ չափերը: Մուտքն արեւմտյան կողմից է: Հարավից սրան կից է մեկ այլ ավելի ընդարձակ սենյակ, որի հետ ներքուստ հաղորդակցվում է 1,05 x 1,5մ չափերի պատուհանով:

Ամրոցի երկարությունը (ներսից, երկրորդ հարկում) արեւելք-արեւմուտք ուղղությամբ, հյուսիսային կողմից 27,7մ է, հյուսիսից հարավ՝ 29 մ: Արեւմտյան կողմից՝ արեւելք- արեւմուտք ուղղությամբ 28,5մ է, իսկ հյուսիս-հարավ ուղղությամբ (մուտքի կողմից)՝ 25,4 մ: Բուն ամրոցապատն ունի 2,2-ից 2,3մ հաստություն: Բացի նշված արեւելյան գլխավոր



Ամրոցի 1901թ. չափագրությունը



աշտարակից, եզրամասերում (անկյուններում) կան 4 աշտարակներ, որոնց միջեւ՝ 3 կիսաշտարակ: Դրանք գրեթե հավասարաչափ շինություններ են, յուրաքանչյուրը 3-4 հրակնատներով: Օրինակ, հարավ- արեւելյան եզրային աշտարակն ունի 1,8 x 2,5 մ չափերը եւ 60 սմ հաստությամբ պատ, կենտրոնական (հարավային) կիսաշտարակը համապատասխանաբար 1,8 x 2,6 եւ 65, հարավ-արեւմտյան եզրայինը՝ 1,8 x 2,4մ, ընդ որում, այստեղից բացվող անցքը (15,5 x 23 սմ), որ տանում է ներքնահարկ , նախատեսված է զինամթերքի մատակարարման համար: Նման անցքեր կան նաեւ հյուսիս -արեւմտյան (եզրային) աշտարակի եւ երկու եզրային աշտարակները միացնող ամրոցապատի մեջ:

Արեւմտյան կենտրոնական կիսաշտարակն ունի 2 x 2,2մ չափերը (ներկայումս՝ փլված), հյուսիս-արեւմտյան աշտարակը՝ 2 x 2,5մ, հյուսիսային կիսաշտարակը նույնպես 2 x 2,5մ, հյուսիս -արեւմտյան եզրային աշտարակը 2,5 x 2,8մ: Երկրորդ հարկ (պաշտպանական հրապարակ) տանող աստիճանավանդակը միայն ուղղանկյուն հատակագծով աշտարակի ուղղությամբ է:


Հատված ամրոցից (Ներքուստ)

Հիմնականում այսպիսին է ներկայիս համակառույցը:

Ադրբեջանի մշակույթի նախարարության հուշարձանների հատուկ գիտավերականգնման արվեստանոցը շուրջ 20 տարի առաջ վերականգնելով այս ամրոցը, զգալիորեն խեղաթյուրել է նրա նախնական տեսքը, ըստ էության նպատակ ունենալով շինությանը «խանական հմայք տալ»: Այդ շեղումները կամ խեղաթյուրումները պարզորոշ երեւում են, երբ կատարվածը համադրում ենք դեռեւս 1901թ.[27] ռուս զինվորական Գորշկովի կողմից արված գծանկարի ու չափագրությունների հետ: Այսպես, նախկինում սրբատաշ քարերով կառուցված ամրոցը վերականգնվել է սովորական սպիտակ կրաքարերով: Սենյակների թիվը՝ նշանակալի ձեւափոխություններով, ավելացվել է: Երկրորդ հարկ տանող աստիճանները նախկինում եղել են հյուսիս-արեւմտյան

27 Տե՛ս В.Потто, Утверждение русского владычества на Кавказе, т. I, էջ 208:

անկյունային աշտարակի ուղղությամբ եւ հարավ-արեւելյան կողմից: Ներքնահարկի երկրորդ մուտքը պաշտպանական նկատառումներով զգալիորեն ավելի նեղ է կառուցված եղել: Բակի տարածքում ավելորդություններ չեն եղել: Ինչ-որ չափով խախտվել է նաեւ բուն կառույցի (նաեւ աշտարակների, պատուհանների եւ այլն) համաչափությունը: Ինչպես պարզվում է հիշյալ չափագրությունից, հնագույն ամրոցի ավերակները տեղադրված են եղել ներկայիս ամրոցի հարավ-արեւելյան կողմում, որոնք այժմ չեն պահպանվել:

Ժամանակակից հետազոտողները[28] այս ամրոցը (եւ ընդհանրապես նմանատիպ շինությունները) ընդունել են որպես իջեւանատուն, նկատի ունենալով ոչ միայն նրա տեղադրությունը, այլեւ այն հանգամանքը, որ ճարտարապետական-հատակագծային կառուցվածքով այն նման է ճանապարհային իջեւանատներին[29]: Թշնամու հնարավոր հարձակումները կամ պաշարումները դիմագրավելու համար, հատկապես կարեւոր ու ռազմավարական հանգույցներում ճանապարհային իջեւանատները կառուցվել են ամուր, լայն ու բարձր պատեր ունեցող հզոր շրջանաձեւ ու կիսաշրջան աշտարակներով[30]: Տիգրանակերտ-Շահբուլաղը, գտնվելով Խաչենագետի ստորին հովտում, փաստորեն, Խաչենի իշխանության վարչական տարածքի արեւելյան դարպասներից մեկն էր եւ ունեցել է այն ռազմավարական դերը, ինչ Շիկաքարը Կարկառի եւ Խաչենի հովիտների պաշտպանության համար: Սակայն, Տիգրանակերտի համար, որպես պաշտպանական-ազդանշանային դիտակետ, ծառայում էր ծովի մակերեւույթից 681 մ բարձրության վրա գտնվող Վանքասարը, որտեղ եւ տեղադրված էր հոգեւոր առաջնորդարանը՝ թեեւ Համամ Բարեպաշտի անվան հետ կապվող, բայց իրականում, VI-VIIդդ. բնորոշ խաչաձեւ գմբեթավոր հորինվածքով եկեղեցին[31]: Վերջինս գտնվում է Տիգրանակերտ-Շահբուլաղից մոտ 1,5 կմ հյուսիս-արեւմուտք, ընդ որում լեռան ստորոտից մինչեւ գագաթ 290 մ է:

28 Լեո, հ.8, էջ 101, О.Халпахчьян, Гражданское зодчество Армении, Москва, 1971, էջ 192 եւ այլն:

29 Ամրոցի արեւելյան կողմում, ճանապարհի վրա էին նախկին փոստի ավերակները, որոնք այժմ չեն պահպանվել: Չկա նաեւ երբեմնի պատմական բնակատեղին:

30 О.Халпахчьян նշվ. աշխ. էջ 192: Սակայն, տարածված չէ, որ ճանապարհային իջեւանատների մուտքերը կամ դարպասները կառուցվեն ուղղանկյուն թեքությամբ, որը բացի պաշտպանական նկատառումներից Հ.Խալփախչյանի կարծիքով քամիներից պաշտպանվելու նպատակ է հետապնդում (հմմտ. 1343թ. Հայջիի իջեւանատունը): Նույն տեղում, էջ 196-198:

31 Ազատամարտ, N 47, 1994, էջ 13: 1980-ականների կեսերին այս հուշարձանը վերականգնման անվան տակ ձեւափոխվել-աղավաղվել է:





Աղբյուրի շենքը (գլխատուն-իջեւանատուն)

Ամրոցի մոտ լավ պահպանված կառույցներից է նաեւ աղբյուրի մոտ գտնվող շենքը, որը Գորշկովի հիշյալ չափագրության մեջ ներկայացված է որպես «դարպաս», իսկ Բաքվի ուսումնասիրողների կողմից՝ «վերականգնված մզկիթ»[32]: Իրականում, հայ ճարտարապետության բնորոշ այս շինությունը (չափերը՝ 9,5 x7,2x5,2մ) Ղարաբաղյան ղարադամ է (հազարաշեն կառույց), որի մասին ազգագրագետ Լիսիցյանը գրում է. «Միայն մի տեղ՝ Ղարաբաղյան լեռնաշխարհի մատույցներում, Շահբուլաղ գյուղում, այն վայրում, ուր ժայռի տակից դուրս է գալիս հորդաբուխ աղբյուրը՝ մի ամբողջ գետ եւ հոսում հարթավայրով, ինձ վիճակվել է հանդիպել մի գեղեցիկ քարե ղարադամ՝ դիմացից քարե սրահով»[33]:

Նշենք, որ արցախյան կռիվների ընթացքում մեր ազատամարտիկներին հաջողվեց ազատագրել նաեւ Տիգրանակերտ - Շահբուլաղը, որն իր շրջակա տարածքներով մտնում էր Աղդամի շրջանի մեջ:

32 Э. Авалов, նշվ. աշխ., էջ 15, նույնի՝ Архитектура Шахбулагских построек.- Известия Ан Аз. ССР, 1973, N 2, серия литературы, языка и исскусства, էջ 116: Այս շինությունը նորոգվել է ամրոցի վերականգնման աշխատանքների ժամանակ՝ ձեւափոխվելով մզկիթի:

33 С. Лисициан, К изучению армянских крестьянских жилищ (Карабахский карадам).- Известия кавказского историко-археологического института,Тифлис, 1925, том III, էջ 106:

# Շուշի *

Պատմագիտության մեջ իշխում է այն թյուր կարծիքը, ըստ որի Շուշին հիմնադրվել է XVIII դարում: Ոմանք քաղաքի ծնունդը վերագրում են դարասկզբին, մյուսները՝ երկրորդ կեսին: «Գոյությո՞ւն է ունեցել այստեղ բնակավայր մինչեւ XVIII դ. սկիզբը, առայժմ ստույգ պարզված չէ»,- գրում է Մ.Սարգսյանը[1]: Մինչ այդ, գրեթե նույն կարծիքն է հայտնել Պ.Չոբանյանը, ըստ որի Շուշի բերդի մասին գրավոր աղբյուրները վերաբերում են XVIIIդ. սկզբին[2]: Այսպես են կարծում նաեւ այլ հեղինակներ: Փաստորեն այն


Քաղաքի ընդհանուր տեսքը հյուսիսից (լուս. ուղղաթիռից)

տպավորությունն է ստեղծվում, որ պատմիչները պետք է անդրադառնային «Շուշի» անվանը (բառին), նյութ տալով ժամանակակից ուսումնասիրողին: Բայց տեղանունները անընդհատ փոփոխվում են (Շուշի անվանումն էլ

* *Նկատի ունենալով Շուշի քաղաքի եւ ամրոցի մասին բազմաթիվ հրատարակումները, նպատակահարմար գտնվեց անդրադառնալ ոչ թե բուն պատմական կառուցվածքներին, այլեւ վիճարկման ենթակա որոշ հարցերի:*

1 М.Саркисян, Из истории градостроительства Шуши, Ереван, 1996, էջ 4:

2 Պ.Չոբանյան, Շոշ եւ Քարագլուխ սղնախների նույնացման հարցի շուրջը. - ՊԲՀ, 1994, N 1-2, էջ 184:



համեմատաբար ուշ ժամանակաշրջանին է վերաբերում) եւ առաջին հերթին պատմաբանների պարտքն է պարզել տեղանվանափոխության հանգամանքները եւ պատմա-համեմատական ուսումնասիրությամբ ճշտել այս կամ այն բնակավայրի նախանվանումն ու շարժընթացը:

Ինչեւէ, դեռեւս 1994թ. այն կարծիքն էի հայտնել, որ Շուշին միջնադարյան աղբյուրներում հիշատակվող նշանավոր Կարկառ ամրոց-բնակավայրն է[3]: Ինչով էր դա հիմնավորվում. Կ.Գանձակեցին պատմում է, որ երբ իր հայրենական իշխանության սահմանները վերականգնելու նպատակով 1246թ. մոնղոլ զորապետ Բաթուի եւ նրա որդի Սարթախի մոտ է մեկնում Խաչենի Հասան Ջալալ իշխանը, նրան ընդունում են մեծարանքով եւ հրամայում վերադարձնել իր հայրենական կալվածքները՝ Չարաբերդը, Ականան ու Կարկառը[4], որոնք նախկինում խլել էին թուրքերը:

Նախ ուշադրություն դարձնենք. Կարկառը հիշատակվում է նշանավոր Չարաբերդ (Ջրաբերդ) եւ Ականա ամրոցների շարքում՝ գտնվելով Հասան Ջալալի իշխանության ներքո: Իսկ այդ իշխանությունը Կարկառ գետից այն կողմ չի անցել[5]: Շուշին գտնվում է գետի ձախափնյա ժայռոտ, ամրակուռ բարձրավանդակի վրա՝ համապատասխանելով Կարկառ ամրոց-բնակավայրին: Կռահելի է, որ Կարկառ անվամբ ամրոց կարող էր գտնվել միայն համանուն գետի հովտում, որտեղ չկա մեկ այլ նշանավոր բերդ, որ համեմատվեր Շուշիի հետ: Սակայն, ուսումնասիրողներից Բ.Ուլուբաբյանը Կարկառը տեղադրում է համանուն գետի՝ ստորին ավազանում, առանց նշելու ստույգ տեղը. «Կարկառն անսխալ տեղադրել հիմա անհնար է,- գրում է նա,- որովհետեւ ոչ ավանն է պահպանվել, ոչ էլ նրա մասին որեւէ ուրիշ տեղեկություն»[6]: Բայց, պարզվում է, որ այս ամրոցի մասին կան հուսալի տեղեկություններ, մասնավորապես՝ արաբական աղբյուրներում: «Կարկառը քաղաք է Առանում, Բայլականի մոտ, կառուցված Անուշիրվանի (531-578թթ.- Ս.Ս.) կողմից»,- գրում է Յակուտ ալ-Խամավին (1178-1229)[7]: Նախ, Բայլականի մոտ կամ շրջակայքում Կարկառ անվամբ բնակավայր (ավելին՝ քաղաք) գոյություն չունի: Այդ տարածքում եղած ամրոցներն ու պատմական բնակավայրերը իրենց նախնական անուններով հայտնի են: Գտնում եմ, որ Կարկառ ասելով աշխարհագետը նկատի է ունեցել Շուշին, բայց «հեռու հայացքով», որը հատկանշական է օտար ուսումնասիրողներին: Օրինակ,

3 «Երկիր», 2.09.94, N 169, «Ալիք», 12.10.94, հմմտ. Ս.Սարգսյան, Պատմա-աշխարհագրական ճշգրտումներ, Երեւան, 1996, էջ 47:

4 Կ.Գանձակեցի, Հայոց պատմություն, Երեւան, 1982, էջ 258:

5 Ս.Սարգսյան, նշվ. աշխ., էջ 43:

6 Բ.Ուլուբաբյան, Արցախի պատմությունը, Երեւան, 1994, էջ 89:

7 Արաբական աղբյուրները Հայաստանի եւ հարեւան երկրների մասին, Երեւան, 1965, էջ 103, Հմմտ. Йакут ал-Хамави, Му' джам ал- Булдан, Баку, 1983, էջ 30:

Նույն հեղինակը Թիֆլիսի մասին ասում է. «Թիֆլիս ... Ջուրզանի մայրաքաղաքն է, Բաբ ալ-Աբվաբի (Դերբենդի-Ս.Ս.) մոտերքում»[8]: Համեմատության համար նշենք, որ Շուշին Բայլականից 5 անգամ ավելի մոտ է, քան Թիֆլիսը Դերբենդից[9]: Ինչ վերաբերում է Կարկառի կառուցմանը, ապա նման արտահայտությունները, ինչպես վկայում են բազմաթիվ փաստերը, սովորաբար վերաբերում են վերակառուցմանը, իսկ Անուշիրվանից առնվազն 600-700 տարի առաջ էլ Կարկառը գոյություն



Քաղաքի ընդհանուր տեսքը արեւելքից

8 Արաբական աղբյուրներ..., էջ 41:

9 Բայլականի կամ Դերբենդի մոտ արտահայտությունները կարծում եմ պատահական չեն: Բայլականը առեւտրական նշանավոր ճամփուղու վրա գտնվող, արաբներին լավ ծանոթ տարածաշրջանի գլխավոր բնակավայրն է եղել: Կարկառ-Շուշիին ավելի մոտ մեկ այլ նշանավոր բնակավայր գոյություն չուներ տվյալ ժամանակաշրջանում: Նույնը վերաբերում է Թիֆլիսին, որի մերձակայքում եթե արաբներին հայտնի մեկ այլ նշանավոր բնակավայր լիներ, Դերբենդը դժվար թե հիշատակվեր:



ուներ[10], թեեւ այլ անվամբ, որի մասին խոսք կլինի մեր առաջիկա ուսումնասիրություններում, երբ ամբողջովին բացահայտվեն տեղանունների ծագման սկզբունքները:

Կարկառը հիշատակում են նաեւ Իբն-Խորդադբեհն ու Իբն-Ֆակիհը (Xդ.), որոնք նույնպես բնակավայրի հիմնադրումը վերագրում են Անուշիրվանին[11]:

Անդրադառնալով այս բնակավայրին, Համդալլահ Ղազվինին (1281-1349) գրում է. «Կարկառ, առեւտրական քաղաք է: Նրա դաշտերը տալիս են ... հացահատիկ, խաղող եւ մրգեր: Նրա մոտ է գտնվում Արաքսի վրայով անցնող կամուրջը»[12]:

Ի տարբերություն Յակուտի, այստեղ հեղինակը Կարկառը հիշատակում է Շուշիից ավելի մոտ գտնվող՝ Արաքսի կամրջի (ներկայիս Խուդափերինի) հետ, որը նաեւ վկայում է, որ այս կամրջով է դրսի հետ առեւտուր եղել: Եվ իրոք, հետագայում էլ Շուշին այստեղով էր կապված Պարսկաստանի հետ, որի մասին կան բազմաթիվ տեղեկություններ. «Տեղադրված լինելով դեպի Զանգեզուրի գավառ տանող ճանապարհին, Շուշին... դեպի Արաքս եւ ավելի հեռու՝ Պարսկաստան տանող անթիվ քարավանների կայանատեղ էր... որտեղ աշխույժ առեւտուր էր կատարվում»[13]:

Կարկառ-Շուշիին անդրադարձել է նաեւ Ջալալ-ադ-Դին սուլթանի անձնական քարտուղար Շիխաբ ադ-Դին ան-Նասավին (XIIIդ.), որն ամրոցին «Կալադարա» անունն է տալիս: Նա գրում է, որ ինքը մոնղոլական վտանգի պայմաններում դուրս գալով Գյանջայից, մեծ դժվարությամբ հասնում է Կալադարա ամրոցը, որտեղ գտնվում էին Սուլթանի որդի Մանկասու-շահը, Դայա-Խաթունը եւ ուրիշներ[14]:

10 Այդ է վկայում ոչ միայն «Կարկառ» տեղանվան ստուգաբանությունը, այլեւ, մասնավորապես, Ադրբեջանի նախարարների խորհրդի՝ 1968թ. ապրիլի 2-ի N 140 որոշմամբ հաստատված հուշարձանների ցուցակը, համաձայն որի, Շուշիում (հյուսիս-արեւմուտք) եղել են մի շարք մ.թ.ա. II-I հազարամյակի հնագիտական հուշարձաններ (դամբարան, կուրգան), որոնց գտնվելու ստույգ վայրը ներկայումս դժվար է ճշտորոշել (տե՛ս Приложение N 1 к постановлению Совета Министров Азербайджанской ССР, от 2 апреля, 1968, N 140):

11 Ибн Хордадбэ, Книга путей и царств.- СМОМПК, XXXII, Тифлис, 1903, էջ 15, Ибн-ал-факих.- СМОМПК, XXXI, Тифлис, 1902, էջ 15: Ծանոթագրություններում (էջ 50), Կարկառը սխալմամբ համապատասխանեցվում է Թարթառին:

12 Хамдаллах Казвини, Нузхат ал- Кулуб, Баку, 1983, էջ 50-51:

13 "Вокруг света", 1905, N 39, էջ 620:

14 Шихаб ад-Дин Мухаммад ан-Насави, Жизнеописание султана Джалал ад-Дина Манкбурны, Баку, 1973, էջ 278: Սովորաբար Շուշիին Ղալա էին ասում տեղացիները, որ նշանակում է բերդ («Вокрут света », էջ 619, Լեո, Պատմություն Ղարաբաղի հայոց թեմական հոգեւոր դպրոցի, Թիֆլիս, 1914, էջ 59):

Բացի վերոհիշյալ տեղեկություններից, կան հավաստի այլ վավերագրեր, որոնք վկայում են ամրոց-բնակավայրի գոյության վաղեմության մասին: 1981թ.[15] այստեղ հայտնաբերվել են ՆԻ(971), ՉԱ(1252) եւ այլ թվականների մի քանի խաչքարեր, որոնցից երկրորդն առնչվում է Հասան Ջալալին, մեկ անգամ եւս հավաստելով Շուշիի՝ XIII դարում Խաչենի իշխանության սահմաններում գտնվելու հանգամանքը:



Քաղաքի ընդհանուր տեսքը հյուսիս-արեւելքից (լուս. ուղղաթիռից)

Այսպիսով, աղբյուրագիտական տվյալները ապացուցում են, որ Շուշին մինչեւ XVIII դարն էլ նշանավոր քաղաք է եղել, որով միաժամանակ հերքվում է այն թյուրիմացությունը, համաձայն որի Շուշիի բերդը հիմնադրել է Փանահ խանը[16]: Այս ամենով հանդերձ տարօրինակ է թվում, երբ այս վաղեմի նշանավոր ամրոց-բնակավայրը ներկայացվում է որպես

15 Շ.Մկրտչյան, Լեռնային Ղարաբաղի պատմաճարտարապետական հուշարձանները, Երեւան, 1985, էջ 209:

16 Ф. Шушинский, Шуша, Баку, 1968, էջ 4, Э.Авалов, Архитектура города Шуши, Баку, 1977, էջ 20-24, История Азербайджана, Т.1, Баку, 1958, էջ 339:



բարձրավանդակի վրայով անցնող սեզոնային քոչվոր անասնապահներին սպասարկող հայ արհեստավորների բնակատեղ[17] կամ Շոշ գյուղի անասնապահների արոտավայր[18]: Բացի այդ, հարկ է նշել, որ Շուշին երբեւէ չի կրել Շիկաքար եւ Քարագլուխ անունները[19] եւ չի եղել Սահլ Սմբատյանի (IXդ.) բերդ-ամրոցը[20]: Երկուսն էլ վերաբերում են Ասկերանի շրջանի Քարագլուխ գյուղին, որի տեղում եւ միջնադարյան Շիկաքարն է եղել (Սահլ Սմբատյանի ամրոցը)[21] եւ հետագայի Քարագլուխ կոչված սղնախը[22]:

Եվս մի նկատառում. պատմագիտության մեջ նաեւ այն կարծիքն է շրջում, որ Շուշին անվանակոչվել է մոտակա Շոշ գյուղից, վերջինիս բնակչության համար վտանգի պահին ապաստան ծառայելու պատճառով[23] եւ որ այն նախապես կոչվելիս է եղել Շոշու բերդ, Շոշվա ղալա[24], այդ գյուղին պատկանելու իմաստով[25]:

Լեոն իրավացիորեն անհավանական է համարում այդ

17 С. Лисициан, Армяне Нагорного Карабаха, Ереван, 1992, էջ 69, հմմտ. М. Саркисян, նշվ. աշխ., էջ 5:

18 Շուշիի «տարածքը հնուց ի վեր պատկանել է Շոշ գյուղի բնակիչներին, որոնք այստեղ վար ու ցանքս էին անում եւ անասնապահությամբ զբաղվում» (Թ.Ամիրջանյան, Վ.Արզումանյան, Լեռնային Ղարաբաղի աշխարհագրություն, Ստեփանակերտ, 1994, էջ 96):

19 Բ.Ուլուբաբյան, Արցախի պատմությունը, էջ 43, 134, 141, 152 եւ այլն, ՀՍՀ, հ. 8, 1982, էջ 599, «Երկիր», 12.05.92թ., М.Саркисян, նշվ. աշխ., էջ 5: Սխալն ըստ էության գալիս է Ա.Հովհաննիսյանից, որը Շուշիին նաեւ «Քարին գլուխ» անունն է տալիս, առաջացնելով թյուրիմացություն բուն «Քարագլուխ սղնախի» եւ Շոշի (Շուշիի) սղնախի միջեւ (Армяно-русские отношения в XVIII веке Ереван., Т. I, ч. 1, Ереван, 1964, XLII):

20 Ш.Мкртчян, Щ. Давтян, Шуши, Ереван, 1997, էջ 8:

21 Ս.Սարգսյան, նշվ. աշխ., էջ 45:

22 Պ.Չոբանյան, նշվ. հոդվածը, հմմտ. Զ.Արզումանյան, «Մեծ» եւ «Փոքր» սղնախների հարցի շուրջ.- Լրաբեր, 1985, N 4: Ոչ վաղ անցյալի պատմական աղբյուրներում Շուշի բերդը հիշատակվում է «քար» անվամբ, որը համարժեք է բերդ (ամրոց) հասկացությանը: Օրինակ, «Ավան ուզբաշին, որ եկավ Շոշվա քարըն մտավ... ՌՃԿԶ (1717թ.)»: Կամ «Օսմանլուն, որ քարըն կալաւ, Ավան ուզբաշին փախավ քինաց» (Հ.Թոփչեան, Ցուցակ ձեռագրաց Խաչիկ վարդապետի Դադեան, հ. Ա, Էջմիածին, 1898, էջ 35, հմմտ. Պ. Չոբանյան, նշվ. հոդվածը, էջ 184):

Շոշ եւ Քարագլուխ սղնախների նույնացումը մերժող փաստարկներ. 1. «Սարասկարն վեր կալան եկին Շոշու՝ Ավան ուզբաշին եւ Ոհան ուզբաշին ղալէն վերա», որը վերաբերում է Շուշիին: 2. «Թարխան ուզբաշին, Սարքիս ուզպաշին, Աբըրյամ ուզպաշին ղալոցն վերայ էլ կռիվ չիլաւ (սա վերաբերում է Քարագլուխ գյուղին- Ս.Ս.), միայն Ավան ուզպաշին յետ կռվեց (վերաբերում է Շուշիին-Ս.Ս.).- Армяно-русские отношения... Т. II, ч. 2, Ереван, 1967, էջ 286, հմմտ. Պ.Չոբանյան, նշվ. հոդվածը, էջ 187:

23 ՀՍՀ, հ. 8, էջ 599, «Երկիր», 1992, N 88:

24 Բ.Ուլուբաբյան, Խաչենի իշխանությունը X-XVI դդ., էջ 348:

25 «Շոշ գյուղի ղալան... հիմք դարձավ Շուշի քաղաքի համար» (Թ.Ամիրջանյան, Արցախի գյուղանունները.- Կրթությունը եւ գիտությունը Ղարաբաղում, 1996, N 1, էջ 38):

ծագումնաբանությունը, գտնելով, որ «ընդհակառակը, գյուղը բերդից պիտի ստացած լինի իր անունը»[26]: Իրոք, դեռ վաղ միջնադարից հայտնի մի նշանավոր ամրոց-բնակավայր չէր կարող լինել մի շատ սովորական, ավելի ուշ ձեւավորված գյուղի ամրոցը:

«Շոշ» բառարանային բացատրությամբ նշանակում է «գեղեցիկ ծիլ, բողբոջ»[27]: Ուսումնասիրողներից Թ.Ամիրջանյանը ժխտում է այս ստուգաբանությունը, գտնելով, որ գյուղն անվանակոչվել է հին էլամի մայրաքաղաք Սուզայից[28]: Այդ դեպքում Շոշը պիտի կրեր Շուշ (Շուշա, Շուշի) անունը, ինչպես որ իրականում կա, որը նաեւ վկայում է, որ այն չի առնչվում ոչ միայն ծիլի կամ բողբոջի, այլեւ շոշ-ճանապարհ հասկացության հետ: Ընդհանրապես, պատմական աղբյուրներում եւ ուսումնասիրողների մոտ (բացի Մ.Բարխուտարյանից) Շոշ անվամբ բնակավայր չի հիշատակվում: Գյուղը ներկայացվում է Շուշո, Շուշի, Շուշի գյուղ անուններով[29], մեկ անգամ եւս հաստատելով բնակավայրի անվանակոչումը Շուշի քաղաքից: Իսկ թե ներկայիս Շոշը նախկինում ինչ անուն էր կրում, ստույգ դժվար է ասել: Հայտնի է միայն, որ այն ի սկզբանե ձեւավորել է որպես իջեւանատուն (կայանատեղ)՝ սպասարկելով առաջին հերթին դեպի Շուշի եւ Խաչեն գնացող-եկող քարավաններին: Ինչ վերաբերում է «Շօշի սղնախ», «Շօշի ղալումն» կամ «Շօշվա ղալա» անվանումներին, որ տեղ են գտել XVIIIդ. աղբյուրներում, կարծում եմ բարբառային արտահայտչաձեւեր են, քանի որ արցախյան բարբառում հաճախ է «ու» տառը փոխակերպվում «օ»-ի (օրինակ՝ ուռած-օռած, ուղտ-օղտ, ուր-հոր եւ այլն):

Այսպիսով, Շոշն ու Շուշին համանուն բնակավայրեր են եւ փաստորեն միմյանցից տարբերելու համար է գյուղը Շոշ կամ Շուշի քենդ (Շուշի գյուղ) անունները ստացել: Ի դեպ, ըստ էության Շուշի քաղաքից է անվանակոչվել նաեւ ոչ հեռու գտնվող «Շուշուլու» բնակավայրը:

Շուշի անվան հետ կապված մի լեգենդում, անվանումն առնչվում է «շուշա» (թուրք. ապակի) հասկացության հետ, որ իբր Փանահ խանը

26 Լեո, Պատմություն Ղարաբաղի հայոց թեմական հոգեւոր դպրոցի, էջ 60:
27 Ստ. Մալխասեանց, Հայերէն բացատրական բառարան, հ. 3, էջ 531:
28 «Սովետական Ղարաբաղ», 8.12.1981, N 281:Ըստ Էրեբունու սեպագիր մի արձանագրության, մ.թ.ա. 782թ. Արգիշտի թագավորը հայալեզու-հայախոս քաղաքաբնիկների համար կառուցել է Սուսի (Սուզի) տաճարը: Նշենք նաեւ, որ Սպահանի հարավակողմում գտնվող Սուզան նույնպես հայտնի է իր տաճարով:
29 Մատենադարան, ձեռ. 4375, էջ 264 ա, հմմտ. Ա. Հովհաննիսյան, Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության, հ.2, Երեւան, 1959, էջ 24, ծան.2, Ս.Ջալալեանց, Ճանապարհորդութիւն ի մեծն Հայաստան, Բ, Տփխիս, 1858, էջ 244, Описание Карабахской провинции, էջ 171, Свод статистических данных, Тифлис, 1893, отдел IV եւ այլն:



առաջին անգամ բարձրանալով ժայռը, տեսել է «գեղեցիկ, պարզ ինչպես ապակի» մի տեսարան, որտեղ հիմնադրել է քաղաքը՝ անվանելով Շուշա[30]: Պարզ է, որ սա ժողովրդական զրույցներից վերցված, ուստի իրական ճշմարտության հետ կապ չունեցող պատմություն է:

Չժխտելով Շուշի տեղանվան առնչությունը Սուզայի (Սուսի, Սուզի) հետ, հարկ եմ համարում ներկայացնել առավել ընդունելի մեկ այլ ստուգաբանում, որը վերջնականապես մերժում է Շուշիի անվանակոչությունը Շոշից: Շուշին կազմված է «շուշ» բառից, որը նշանակում է «ուղիղ, բարձրացած, ուղղաբերձ»[31], որը կարող է վերաբերվել բարձունքներում գտնվող ամրոցներին կամ բնակավայրերին, մասնավորապես Շուշի քաղաքին, բայց ոչ ձորալանջին տեղադրված Շոշ կամ Շուշի գյուղին:

Նույն՝ լեռնային բարձունքներին է վերաբերում նաեւ Կարկառը:

30 “Вокруг света”, 1905, N 39, էջ 620:
31 Ստ.Մալխասեանց, հ.3, էջ 535:

# Ուլուբաբ

Խաչեն գավառի ամենա-նշանավոր ամրոցներից է եղել Ուլուբաբի մերձակայքում՝ հյուսիս-արևելք գտնվող ամրոցը, որն ըստ Մ. Բարխուդարյանցի[1] պատկանում էր Ջալալյան իշխաններին: Ամրոցի

Ամրոցակալ լեռան ընդհանուր տեսքը հյուսիս-արևմուտքից





«Պտկեսբերդ» եկեղեցու ընդհանուր տեսքը

1 Մ. Բարխուտարեանց, Արցախ, էջ 197:





Հուշարձանի ընդհանուր տեսքը արևելքից

բարձրադիր տեղադրությունը (ծովի մակերևույթից 1427,8մ) հուշում է նրա ռազմավարական կարևորությունը կենտրոնական Արցախի վերոհիշյալ ամրոցների համակարգում: Ցավոք, այս ամրոցից ներկայումս ոչինչ չի պահպանվել, որի տեղում «Պտկես բերք» կոչվող եկեղեցին է (1263թ.)՝ հարակից շինություններով ու գերեզմանատնով: Տեղավայրը Ելիզավետպոլի նահանգի 1904թ. քարտեզում ներկայացված է «Подкасаперк» անվամբ, որը բնականաբար «Պտկես բերքի» (վերջինս էլ՝ «Պտկես բերդի») աղավաղումն է: Ռազմական քարտեզներում այն կրում է «Берткасапет» անունը, որ նշանակում է «Կասապատի բերդ»: Այսինքն Կասապատ բնակավայրի բերդ, որն անտարակույս վերաբերում է Ուլուբաբի նախկին, հնամենի անվանը:



Հուշարձանի ընդհանուր տեսքը արևմուտքից

# Резюме

Крепости строились оседлыми земледельческими народами с целью ограждения от набегов кочевых племен. Кочевники в них отнюдь не нуждались. Страна, которой приходилось очень часто защищаться от иноземных нашествий, была вынуждена на каждом шагу возводить крепости, которые размещались не только вдоль границ, но и в глубине страны, с целью перекрытия подступов и укрепления центральных, стратегически важных узлов.

В Арцахском крае Армении существуют многочисленные, почти неисследованные крепости. Между тем, в ранние и средневековые периоды фортификационные сооружения играли роль, отнюдь не меньшую, чем культовые строения.

На протяжении многих веков крепости видоизменялись и перестраивались, их приспосабливали к оборонительным и стратегическим требованиям соответствующего времени.

В книге впервые, на основании изучения летописных источников, архивных документов, эпиграфического материала и исторических памятников, представлены знаменитые крепости Джраберд и Аскеран, основные фортификационные сооружения долины реки Хачен (Шикакар, Качахакаберд, Хоханаберд, Дед, Агвен и т. д.).

Представленные вниманию читателя фортификационные сооружения на протяжении веков играли крупную роль в борьбе за свободу и независимость героического народа.

К сожалению, навязанная Азербайджаном нам война не дала возможности завершить изучение остальных крепостей края, которые будут изучены и представлены в последующих изданиях.





# Summary

Strongholds ( Fortresses) have been generally built by settled people in the purpose of being defended from the plundering attacs of the enemy.The nomadics had no need in them. A country wich had to be protected from foreign invasions was to built stongholds everywhere. They were built not only on the frontier lines but deep in the country as well, thus strengthening the central military units.

The land of Artsakh is also rich in strongholds. Like the buildings of worship they played significant role in early and medieval times as well. But the great many of them is not studed yet.

In the course of time the forms of the strongholds had been changed and confined to the military and protection demends of the period.

Based on the bibliografic sourses, archive documents, inscriptions and srudies of historical monuments the book represents the most outstanding Askeran (Zoraberd) and Djraberd stronholds and the main fortification structures in the valley of Khachenaget, such as Shikakar, Kachaghakaberd, Khokhanaberd, Ded, Aghven etc.

The described strongholds played great role in the history of Artsakh during centuries, thus helping people to wihtstand their freedom and existance.

Unfortunatly the war forced by Azerbaidjan gave no opportunity to fulfil the study of the other strongholds ( they will be presented in the next publication).

# ԱՐՑԱԽ




# ԽԱՉԵՆ ԳԱՎԱՌ



Слава Саркисян

# КРЕПОСТИ ХАЧЕНА

/на армянском языке/

Համակարգչային շարվածքը, էջադրումը,
սրբագրումը եւ դիզայնը
«ՕԼԻՄՊ» ՍՊԸ

ԼՂՀ, ք. Ասկերան, Գագարինի–5,
հեռախոս 77077

| | |
|---|---|
| Հրատ. խմբագիր՝ | Լ. Խալափյան |
| Մոնտաժը՝ | Ա. Ազարյանի |
| Տպագրիչներ՝ | Ս. Չիչյան |
| | Ա. Ազարյան |

Տպաքանակ՝ 500

«Նոյյան տապան» տպագրատուն
Երեւան, Իսահակյան 28
հեռ. 56 19 05,  52 42 79



OLIMP LTD